

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ՑՐԻՒ ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ԵՄԻՄԻՅԱՆ ԳԻՆԵՔԻՆ



ՍԻՐԱՅԳԻՐԳԻՆ

(1885-1915)

ՌՈՒՔԷՆ ՍԵՒԱԿ

ԿԱՐՍԻՐ ԳԻՐՔԸ

ՍԻՐՈՅ ԳԻՐՔԸ

ՅՐԻՒ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԶԷՄ

1944

•

•

Յ Ա Ն Կ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ե - ԺԶ

Կ Ա Ր Մ Ի Ր Գ Ի Ր Ք Ը

	Էջ						
1. Ջարդի խենթը	7						
2. Թրճուհին	25						
3. Մարդերգութիւն	<table> <tr> <td>Պիւղական եկեղեցիին մէջ</td> <td>37</td> </tr> <tr> <td>Պիւղական ճամբուն վրայ</td> <td>45</td> </tr> <tr> <td>Պիւղական գերեզմանատան մէջ</td> <td>53</td> </tr> </table>	Պիւղական եկեղեցիին մէջ	37	Պիւղական ճամբուն վրայ	45	Պիւղական գերեզմանատան մէջ	53
Պիւղական եկեղեցիին մէջ	37						
Պիւղական ճամբուն վրայ	45						
Պիւղական գերեզմանատան մէջ	53						

Ս Ի Ր Ո Յ Գ Ի Ր Ք Ը

4. Ինչո՞ւ	63
5. Մահազգացում	63
6. Սիրոյ մրմունջ	65
7. Սիրոյ ծարաւ	66
8. Սէրով սէրով	67
9. Սէրը	68
10. Սիրոյ եւ մահուան երգը	69
11. Պատասխանը	71
12. Եկուր	73
13. Յաւիտեանական հէֆիաք	75
14. Տժգոյն երգը	76
15. Երգ երգոց	77
16. Գինով սէր	79
17. Սիրոյ աղբիւր	81
18. Հին եղանակ	82
19. Երթալ	84
20. Վերջին կոչը	85
21. Սիրոյ շողփերը	86
22. Սէր	87
23. Չար աղջիկը	88
24. Բոյրը	90
25. Համբոյրը	92
26. Ասպետին երգը	94

27.	Տրտում ոգի	95
28.	Խապրիկ	97
29.	Գացող մարդը	99
30.	Հոգիս	100

ՅՐԻՒ ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ

31.	Վրժիճն սերմնացանը	} Կիլիկեան երգեր	103
32.	Հայու որբիկ		104
33.	Վերջին օրօր		105
34.	Ով իմ հայրենիս		106
35.	Զանգակներ զանգակներ		110
36.	Ինչպէս երբեմն		112
37.	Հայասան		113
38.	Զղջիկը		113
39.	Իծը		114
40.	Պիտի մեռնի...		115
41.	Զիւնին		116
42.	Ցնծուն մահ		118
43.	Երնէկ ջուր		120
44.	Կարապները		122
45.	Ամէնուն պէս		124
46.	Վերջալոյս		126
47.	Արեւելք		128
48.	Արգասաւորում		129
49.	Շան հոգի		130
50.	Կարմիր դրօշակը		132
51.	Պռուհիկը		136
52.	Այս դանակը		137
53.	«Թուպասուր»ները		146
54.	Ենովային արցունքը		152
55.	Առաջին մեղքը		154
56.	Սափա-Մունի		156
57.	Հայրը		158
58.	Բասթէլ		159

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Կը հրահարակենք Ռ. Սեւակի փերթուածները, անոր գրական վասակին աւելի հարազատ բխումները մեկտեղած ըլլալու գոհունակութեամբ:

Տֆթ. Ռ. Զիլինկիրեանը իր *Օրագրէն Փրցուած էջերը* իբրեւ բժիշկ ստորագրեց, ուր մասուցումը կար իր Գիտութեան՝ ի սպաս մարդուն, զայն իմասուն ու տղուն դարձնելու համար մարմինէն պատճառուած ցաւերուն դէմ: Քերթող Ռ. Սեւակը, իր սիրտովը կը մօտենայ այս անգամ նոյն մարդուն — ըլլայ անիկա ցեղային արիւնի կամ համամարդկային զգացումի համբէն — հաղորդ մնալով անոր տառապանքին, անոր կարելի սերերուն, երազներուն, երջանկութեան ծաւալին, առնուազն իբրեւ մարդ ապրելու իրաւունքին:

Հարազատ զաւակ իր ժողովուրդին, մասնակից եղաւ անոր արհաւիրքներուն՝ խանդավառութիւններէն աւելի: Ու հեռուէն եւ ի վերջոյ իր կեանքին գինովը արձագանգեց ձայնը իր ցեղին ընդվզումին՝ ընդդէմ անմարդկային արարքներու եւ բռնութեանց, այնքան վայրագօրէն գործադրուած՝ դաւտերուն վրայ ու երգիքներուն ներքեւ Հայ աշխարհին:

Ռ՛րբան մեղմութիւն, չբխորացուած բանաստեղծութիւն, այս անգամ, իր *Սիրոյ Գիրքին* մէջ: Ու ինքնին կը նշդուին յատկութիւնները Սեւակի փերթողութեան:

Ի՞նչ փոյթ որ այդ բոլորին մէջ ծանր չկուեն ար-

ժանիքները բարձրորակ ֆերթողի: Հասակ առնող եւ դեպի հասունութիւն լեցունող մասաղասունկն է Սեւա-կով եկած ֆերթողութիւնը: Այնտեղ հանդիպելի են մեկէ աւելի յասկանիւցները երեւոյթին — քարմութիւն, խանդ, հաղորդականութիւն, ինչպէս ֆանդակներու նիհարու-թիւն, խորացման պակաս, ձեւի նրբութիւն, յանախ անփութութիւն: Եւ սակայն այդ բոլորով մեկտեղ, ա-նիկա իր տեղը ունի իր սերունդէն մեծ դեմքերու շուրջին:

Աւելի լայն յասկանեում մը անոր ֆերթողութեան, կ'առնենք անսիպ ձեռագիրէն Յ. Օսականի ՀԱՄԱՊԱՏԿԵՐ ԱՐԵՒՄՏԱԶԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ գործին. —

« . . . իր ժամանակին, ասոր ունայնամտութեան, զրժ-բախտութեան կը բռննամ Սեւակի գործին ձախողանքը, ու կը կանչեմ ձեր ուշադրութիւնը այն քանի մը արժանիքնե-րուն որոնք վաւերական բանաստեղծ մը կը պայմանաւորեն:

ա) Նորութիւն — որ 1900 ի մարդոց ամէն գինով ինքնա-տպութիւնը պէտք չէ թելադրէ: Անիկա գոյնն է մեզի սեպ-հական, մեր մոյնքին հաւասար, մեր զգալու, մտածելու ու այս գործողութիւնները արտայայտելու կերպին մէջ: Կ'ա-ւելցնեմ անմիջապէս որ վաւերական տաղանդը բնորոշող առաջին առաքինութիւնն է ան: Ան իր բոլոր կարեօրու-թեամբը կը դառնայ ակնբախ, երբ տրուած քերթող մը կը դնենք իր անմիջական շրջապատին մէջ: Մկրտիչ Պէշիկթաշ-լեան անշուշտ որ բան մը կը բերէ 1860 ի մարդոց հասկցած ու գործադրած արուեստին մէջ: Թէև քիչ, այդ նորն է որ անա այսօր կը պաշտպանէ անոր անունը: Նոյնն է պարա-գան Դուրեանին որ անըմբռնելի ըլլալու աստիճան նոր է, իր ժամանակին համար: Այս անուններուն փոխարէն, առէք Նար-Պէշի մը, Թէրզեանի մը, Աճէմեանի մը. ո՛ր գործը որ կ'ուզէք: Զանոնք այսօր անընթեռնելի ընողը ոչ անոնց ռ-

մանքիզմն է, ոչ լեզուական խաղարկութիւնները, ոչ ալ գրուականութիւնը, այլ այն հասարակաց կասարելութիւնը, տաղաչափական ուղղափառութիւնը, տիրոջ նաշակին վրայ ինքզինքն ձեւած ու զոն մարդու տափաղութիւնը, որոնք բոլորը մէկ կը վերածուին ընդհանուր յայտարարի ու կ'ըլլան նկարագիր, նախ շրջանէն, յետոյ իրենցմէ: Սեակի առաջին երիտասարդութիւնը գիտէք թէ գրական ինչ պաշտամունքներու մէջ կազմուեցաւ: 1900 ի բոլոր պոռնկագրութիւնը, մարմներգութիւնը, նկարագրելու սեռը, ժպրհութիւնը դառն իրենց հոտը ունին անոր քերթըրւածներուն ներքը, տուն տեղ եղած, ընտանեցած ու երջանիկ, Եւրոպան, անոր առաջացեալ տարրերուն մօտ հաւանական յաճախանք ժը, թէև ուշ, բայց վերջապէս բերած՝ կարելի ազատագրումը: 1908 էն վերջ մեր քերթողութեան նորոգումը գործն է այդ սերունդի այն թիւին որ կուգար այդ Եւրոպայէն (Վ. Թէքէեան, Վարուժան, Սիամանթօ): Չեմ կրկնեմ ինչ որ ըսեր եմ 1900 ի քերթողութեան մասին, այնքան անգամներ: Առէք, այդ օրերու պսակաւոր քերթող Արտաշէս Յարութիւնեանի ամէնէն յաջող քերթուածը ու փորձեցէք կարգալ: Չեր տառապանքը գինն է այն մտայնութեան, ոգիին որ Սիպիլեան վարկէն կուգայ ու եղած է բրունութիւն: Սեակի նորութիւնը բազմերես է: Չեմ ծանրանար արտայայտութեան ինքնութիւններուն, յանդգնութիւններուն, զանցումներուն որոնք հանդիպելի, հաստատելի երեւոյթներ են քիչ մը ամէն քերթողի մօտ, այդ օրերէն: Կը կենամ ուշադիր խորքի նորոգման ճիգին, որ թերևս եւրոպական հոգեբանութեան մը անդրադարձն է անոր մատող զգայնութեան վրայ: Հեքաճոս Մրգեք հատորին մէջ այդ նորոգեալ նիւթը տուած է շքեղ բիւրեղացում: Սեակ, աւելի անկախ միտք բայց նուազ կիրթ, ընկերային հարցերը երբ նիւթ կ'ընէ իր ստեղծագործութեան, միայն նորութիւն մը չի հետապնդեր, այլ յագուրդ կը փնտռէ իր հոգին կրծող ծանր ախորժակներու: Պատահաբար չէ որ այդ օրերու մեր

իրաւ բանաստեղծները նոյն ատեն պայքարի մարդեր են : Ու պայքարը սոսկ ազգային ազատագրութեան երազներով չի սնանիր անոնց մէջ, այլ համամարդկային ազատագրութեան բարձր իտէալները ունի իրեն զօրավիգ : Ես չեմ որ բանաստեղծութիւնը պիտի սահմանափակէի եսի մը փոքր, ներքին տազնապանքին կամ արտաքին աշխարհի մը քնքուշ բայց չէզոք թելադրանքներուն նուաճումին : Արուեստին յաւիտենական կալուածը մարդն է : Մեր օրերուն մարդը կը բիւրօպատկուի երբ զայն տեսնէք իրեն պարտադրուած համայնական զրկանքներուն մուրճերուն ներքեւ : Մեծ քաղաք մը, ամէն տարի, իր ներքին մոլութեանց սնունդին համար հազարով, հարիւր հազարով մաքրութիւն կը զոհէ : Տարին 80000 աղջիկ կը զոհուին միայն Բարիզ քաղաքին հեշտանոցներուն մէջը : Տարածեցէք տառապանքին ծալքերը. անգործութիւն, անօթութիւն, հիւանդութիւնները իրենց բազմազան տուամաներովը, հոգեկան գերութիւնը, տրամին լրբութիւնը ու ահաւոր անարդարութիւնը որ երջանիկ է ինքիբ մէջ : Ու պիտի չզարմանաք որ գրուին քերթուածներ, մեր մէջ որոնք Գողգոթայի Ծաղիկներ (Հեքսանոս Ռեգերէն) պիտակին ներքեւ յուզեն ծանր, բարդ հարցեր : Սեակ գրած է, այդ մարդին վրայ, Արգասաւորումը, Արեւելքը, Պոռնիկը, Պոլսոյ Որովայնին մէջ, Շան Հոգի, Այս Դանակը, Մարդերգութիւն (Կարմիր Գլուխ), բոլորն ալ արդի կարգերուն ընդդէմ լայն ու խիզախ յարձակողականի մը գնացքով, կատաղութեամբ : Ինչ փոյթ որ քերթողը չէ հասած ձեւի կատարելութեան (այդ քերթուածները իրենց անխնամութեան իսկ թերւս կը պարտին իրենց նորութիւնը, ինքնեկութիւնը) ինչպէս է ասոր իրականութիւնը վարուժանի գործին մէջ : Սեակի արժանիքն է այդ նիւթերուն հումութիւնը պահել կրնալը : Ենթարկեցէք զանոնք կանոնաւոր մշակման դուք պիտի ունենայիք Աճէմեանի, Լեոն Սեղբոսեանի տեղեկոցիդ էջերը

Վաղ առաւօտէն մինչ ուռ երեկոյ
Անդուլ բահ բրիչ ամէ խեղճ Մկօ .

1890ի մարդոց համար այնքան հաճելի, իրական, իրապաշտ բայց որոնց տարողութիւնը այնքան նիհար է արուեստին արժանանալու: Անշուշտ, Սևակի մօտ աշխատանքի երգիչը, բողոքողը, խարանողը չեն գտած վերջնական կաղապար, կերպարանք: Դժուար է անոր այդ կարգի ոտանաւորներէն բարձրու մեծ տախտակներ, շրջան համադրող համապատկերներ առանձնացնել: Բայց ինչ որ տուած է, 6-7 տարիներու ներուժ (intense) ստեղծագործման շրջանին, թաթխըւած է սա զգայնութեան մէջ: Նիւթին նորութեան հետ, Սևակ գտած է սէնֆոնիզ ալ նորութիւններ: Նուրբ ու զօրաւոր չեն կշռոյթի իր զգայարանքները: Բայց ինքն է որ առաջին անգամ մտածած է մեր մէջ սէնպոլիստ swrswմը, կհրուկը, արձագանգուը օգտագործել ի հաշիւ նոր դաշնաւորմանց: Իր բոլոր բռնազբօսութեանը հակառակ վերջին կոչը տպաւորիչ քերթուած մըն է, ձայնական յարդարանքին մեծ չափով պարտական: Նմանապէս ինչո՞ւ քերթուածը կը տարբերի մեր ոտանաւորին ընթացիկ ծանրութենէն, պատկառուն սեթևեթէն, պարզութեամբ մը, չորութեամբ մը որ կը տպաւորէ դարձեալ: Բարի եղէք կարդալու շին եղանակը (այս հատորին, էջ 82), առանց աճապարանքի, ատեն տալով որ տողերը տեղաւորուին ձեր ներսը այնպէս մը որ ձեր մտքին շինուին քանի մը ծանր, տիրական վիճակներ, ձիւնով իրիկուան խուլ խորհուրդին ընդմէջէն: Կինաւուրց մեղեդիի մը տրտում թևերուն վրայ օրօրուն վիճակները, ու զուք զգաք շատ շատ բան բայց չըլլաք կարող անոնց հագցնելու ձեր եսը, իմաստը, ինչպէս է արդէն այնքան յաճախ իրականութիւնը սա մեր աշխարհին վրայ: մեզմէ դուրս կեանքին անթափանց գաղտնիքին դէմ զմեզ հանելու մեր յիմարութեան երբ չենք անձնատուր: Քերթուածին տարտամը նոյնութեամբ կրկնած է հոս կեանքին ալ տարտամը: Խորքի ու ձևի սա ներդաշնակ նորութիւնը մեր քնարերգութեան մէջ դուք կը հանդիպիք ամէն վաւերական բանաստեղծի մօտ: Նման էջեր են Առ

Ձեփիւռն Ալէմտաղին ուր հին եղանակը կուգայ հովին անհուն շրթներէն. շնակը ուր շուրի հայլի մը մեծ դաշնակն է նոյն ու մէկ եղանակին. Անանունը (Մեծարենց) որ հովը ու աղջիկը մահն ու սարսուռը իրարու վերածող անորակելի եղանակն է, մեր ամէնուն մէջ օր մը բացուելու ճակատագրուած, որ պիտի կանչէ մեզի ամայի կամ ամենախուլ ճամբաներու վրայ, երբեմն յանկարծակի, մեզ կեցնելու համար մեր մարդութեան մէջ, ու բոպէ մը վերջ մեզի առնելու իր ալիքներուն վրայ ու տանելու, տանելու անվերադարձ: Սևակի քերթուածին մէջ բառերը, չափը, նախադասութեանց coupeր ոչինչ ունին անսովոր, բայց քերթուածը նոր դէմք մըն է, մարդ մը, հոգի մը որ այսպէս ինքզինքը կերպադրած է: Այս նորութիւնը, հին ու սովորական բաներուն ընդմէջէն, գրագէտ մը բնորոշող մայր արժանիք մըն է: Ատեն չունիմ գրադելու տարազին զուգորդ ուրիշ ալ թելադրանքներով: Շատ էին Սևակի մեղքերը: Ձեմ թարմացներ զանոնք կրկին: Բայց մի մոռնաք (պէտք է յաճախ կրկնել հէքիաթը) Եհովային բարութիւնը բիւրբուրու յանցանքը հի՛նգ արդարով քաւել յօժարելուն:

բ) Ձերմուքիւն — որ համազօր է խառնուածքի: Միտքով, վարժութեամբ, կրթանքով, ունայնամտութեամբ բանաստեղծ շատ ունի մեր նոր գրականութիւնը: Հարցադէք թէրգեանի ուրուականին թէ ինչո՞ւ գրած է իր քերթուածները: Հաւանաբար թեթև յանդիմանութեան մը հետ երանելի բանաստեղծին հոգին ձեզի պիտի խօսի այն հիացական քաջալերանքէն որով ողջունուեցան իր շարադրական մարզանքները, մուսաններու բարբառով, դպրոցին իսկ գրասեղաններէն: Ինք ուրիշ բան չուզեց ընել եթէ ոչ այդ գովեստներուն իր արժանաւորութիւնը ապացուցանել կեանքին մէջ ալ երբ Պոլիս դարձած (իտալիայէն) իր երիտասարդի գգայնութիւնը փորձեց արձակել տպաւորութեանց ու օրերու ծովուն մէջ. . . : Կրնաք գոհ ըլլալ այսքանով ալ ու ետ զրկել

սիրելի ուրուականը դէպի դալար հանգստոցները Եղիւսեան դաշտերուն Ու մտածել թէ որքան սխալներ կը միջամտեն երբեմն մեր կործանումին, մեզի չափ օտարներէ մեր վրայ թափուած, մեր գաղջ փառասիրութեան գոհացում ճարելու մեր միամտութիւնը մշուշելով, ոսկեզօծ քանի մը պատրանքներու հովանիին տակ, Հարցուցէք Պէշիկթաշլեանի «մահուամբ գեղեցկացած, տարփելի» ուրուականին թէ ինչ^օւ գրեց իր տղայական (այսօր) երգերը, երբ գիտէր, գրել իր հրաշալի եղբերգները, Պատասխանը տարբեր պիտի չլլար, Ու ասիկա այսպէս, աւելի պղտիկ չափով, Միսաք Մեծարենցին համար: Ինչպէս կը տեսնէք, Սևակի խառնուածքը ես չեմ վախնար մօտիկը դնելէ մեր վաւերական քերթողներուն: Վասնդի 1910ին այնքան իրաւ ու մեծ խառնուածքներուն մէջէն (Վարուժան, Սիամանթօ, Թէքէեան, Եղիշէ Դուրեան) ու ճնշումին տակը նոր աչքերը գոցող եղբրաբախտ ու մեծ խառնուածքին Մեծարենցի, Սևակ պիտի գրէ մէկ երկու իսկապէս արդար, յուզիչ վկայութիւններ որոնք կ'ապրին հայոց լեզուին կեանքովը: Առանց խառնուածքի ըսի թէ շատ ունինք քերթողներ, կ'աւելցնեմ որ միս մինակը խառնըւածքը կրնայ դիմակալել աշխարհ մը չարիք զոր չենք վարանիր երբեմն գործել մենք մեզի, մեր տաղանդին ու մեր կարելիութեանց դէմ: Այսպէս հասկցուած խառնուածքը կը վերածուի քերթողի մը էատարրին, «հոգիին հոգիին» ինչպէս կ'ըսեն գաղիացիք, ժամանակը պիտի տարածէ իր անգայտ մոխիրը Սևակի քերթողութեան շատ մեծ մասին վրայ, ինչպէս ըրած է այդ անփոխարինելի բարիքը Ալիշանի, Պէշիկթաշլեանի, Սիպիլի, Զօպանեանի քերթողական վաստակին մեծագոյն մասերուն վրայ, բայց նոյն այդ ժամանակը պիտի մնայ անզօր ծածկելու իր ներքև այն փոքրիկ, ջերմ անկիւնները որոնց տակ կրակը կար երբ կ'ապրէին այդ մարդերը, և որոնք չեն ծածկուիր դարերու ձիւնովը, ինչպէս կը տրուի մեզի հանդիպիլ ձիւնները հալող տաք աղբիւրներու

պատկերներուն, շրջապատին միատարած ծածքին մէջէն
յաւէտ առանձին, շոգեմշուշ ու կենդանի: Պատմեցի թէ տաք
էր իր անձնաւորութիւնը, քիչիկ մը աւելի որքան սպասելի
էր այդ սերունդին պատրանահեղձ ներկայացուցիչներէն:
Վարուժան մեղամաղձօտ էր ու հայեցողապաշտ: Իր մօտ յու-
զումը խորունկ ալքերու մէջ խնամքով պահպանուած գան-
ձարանէ մը պէտք կար հանելու: Թէքէեան մինչև իր պա-
ղիլը (տարիքէն) պիտի մնար հանդարտ եթէ ոչ անհաղորդ:
Սեակ համակ խանդ էր ու զեղում: Այս հաստատումը թերևս,
առաջին ակնարկով, կը բացատրէ անոր քերթողական վաս-
տակին անհաւասարութիւնը, խնամքի հանդէպ երբեմն ան-
փոյթ երբեմն ալ ունայնամիտ իր պահերը ու ասոնց արդիւնք
իր ոտանաւորներուն մէջ գրեթէ միշտ իրական վրիպանք-
ները: Բայց ուրիշ աղբիւր ալ չունիմ խառնուածքին սա-
յտակ խանդէն դուրս, բացատրելու համար իր Կարմիր
Պիրքը լեցնող երիտասարդ կրակը, չարին դէմ դասական
բողոքէն դուրս հզօր, զարհուրագին ալ կեցուածքը, որ հոե-
տորութեան հետ երանգի նոյնութեանը հակառակ, բոլորովին
տարբեր, առանձին բան մը կ'ըլլայ: Տեսէք ի'նչ կ'ըսէ ջար-
դարարներուն (Կարմիր Պիրքը, այս հատորին էջ 11-12),
որոնք 1910ին այնքան մօտ, իրաւ մարդեր էին մեր բոլորին
համար, և որոնց դէմ մեր գրականութիւնը ըսած է անշուշտ
չատ աւելի զօրաւոր բաներ, իր մեծ մշակներուն բերնով:
Բայց արարքին վայրագութիւնը, անասնութիւնը այսքան
բնականութեամբ, այսքան տենդով մեզի չէ տրուած հաս-
տատել ոչ վարուժանի, ոչ ալ մենաշնորհեալ Սիամանթօյի,
ոչ տրտմաթախիժ Թէքէեանի քերթողութեան մէջ: Երիտա-
սարդ սա պոռթկումը, հեռու ամէն նրբախոյզ հնարքներու
նպաստէն, ճաշակի, չափի դէմ իր զանցումները թերևս կը
պարտի սա հուրքին:

գ) Մասադաւթիւնը — որուն խակ հանգամանքը կը բացա-
տրէ եթէ՛ իր առաջին մեծ մոթիֆին մէջ (Սիրոյ Պիրքը) իր

վրիպանքը, բայց որուն երկար տևողութիւնը գրեթէ բացառիկ իրողութիւն մըն էր մեր քնարերգութեան համար, ուր կանխահասութիւնը գրեթէ մահուան կնիք մըն է, ու տղայութիւնը (ասոր երկարաձգումը) անտաղանդութեան ուրիշ կնիք մը: Կան այդ տղաքը մեր բանաստեղծութեան մէջ որոնք երեսունէ աւելի տարիներէ ի վեր կը մնան նոյն ու մէկ ողորմելիները: Դանիէլ Վարուժան քանի մը տարուան ընթացքին ազատագրած է ինքզինքը: Անոր Սարսուռները արդէն այդ տղայութեան վերջին հետքերը կը ջանան անյայտ ընել: Հոգերէն մինչև Հրաշնլի Յարութիւն տասնէն աւելի տարիներ կը թաւալին բանաստեղծին անհուն փորձառութեանցը մէջէն, ճարելու համար շքեղ այդ դիւանին վերջնական հոգի մը: Արդ. Հին Եղանակը (Սևակ) գրուած է 1908ին: Երթալը՝ 1912ին: Դարձեալ 1912ին՝ Սէրը: Այս երեք յիշատակումներէն առաջինը անխառն գլուխ-գործոց մըն է, երկրորդը՝ նոյնպէս մեծ յաջողութիւն մը ու երրորդը՝ աններելի ձափառուք, ինչպէս կը պատկերեն Պոլսեցիները բերնէն եկածը թող տալու վարժանքը: Բնական յառաջատուութիւնը որ տաղանդին այնքան յաճախ նկարագիր մը կուտայ (Երբեմն ալ տեղատուութիւնը կը հաստատենք, Ձրաֆեան, Ռէնսո ատոր վաւերական նմոյշներն են) Սևակի մօտ չէ իրականացած: Սևակի բաղդատաբար յաջող քերթուածները երևցած են 1909ին, Ազդակ հանդէսին մէջ: 1910ին Տարեցոյցի մը մէջ (Թ.) իրմէ ստորագրուած ուրիշ քերթուածներ (Վերջին Օրօր, Հայու Որրիկ ևն.) հասարակ տաղաչափութիւններ են: 1911ին՝ «Թրուպատուր»ները շունչ ու թարմութիւն կ'արտայայտեն լայն չափի վրայ: Այս բոլոր յիշատակութիւններուն միտք բանի՞ն: — Ան՝ թէ Սևակ զօրաւոր իր զգայնութիւնը ամբողջութեամբ չէ կրցած իրագործել: Թէ՛ բանաստեղծական աւիւնը անոր, չէ՛ ենթարկուած նուաղման (Կուռնկը, արձակ էջ մը, քերթուածի մը տարողութիւնը կը պարզէ ու գրուած է մահէն տարի մը առաջ): 8-10 տարի

անիկա իրեն պաշտպան ունի իր թարմութիւնը որ անոր օտանաւորին համար տիրակաւն նօթ մըն է։ Ու թերևս հօս է գաղտնիքը դժուարութեան զոր կը զգայ քննադատը երբ կը փորձէ անոր գործէն հաստատ ու վերջնական գիծեր սևեռել։ Մշտական պատանութիւն մը անոր բոլոր քերթուածները (յաջողածներէն աւելի ձախողածները) կ'ողողէ իր քաղցրութեամբը, աշխոյժովը, անփութութեամբ ու թռիչքով։ Գարնան բանաստեղծ մը՝ եթէ քիչ մը բռնազբօս չէք գտներ տարազը, որ շիասաւ, յոգնեցաւ սարիճէն, ապրեցաւ իր մահը երիտասարդ, թարմ, արի՛ ու արու, ինչպէս երգեր էր անոր խորհուրդը ոստոստուն, տրտում, զուարթ, համակ շաղ ու թարմութիւն քերթուածի մը մէջ Յնծուն Մահը, լոյս տեսած 1913ին, Հայ Գրականութիւն հանդէսին մէջ (Իզմիր)։ Յետոյ այս նկարագիրն է մանաւանդ որ անոր վրիպանքը կ'ընէ նուազ եղբրական, միշտ յոյսի բաժին մը հանելով մեր դժգոհանքին դէմ։ Առաջին իր էջերէն մինչև յիսնամենի իր թափթփութները նոյն անկատարութիւնը՝ չըսելու համար անկարողութիւնը, ցնցոտիի մը նման իր ետևէն պտտցուց լեռն էսաճանեան անուևով բանաստեղծութենէն խենդութեան ինկած ֆնարահար մը, ինչպէս կ'ուզէր որակուիլ։ Ինչ թերութիւն որ արգիլեց Եզուարդ Գոլանճեանը մեր քերթողութեան մէջ անուն մը դառնալէ. չէ փոխուած ահա քառասուն տարի կայ։ Այս վրիպանքներէն եթէ ուզենք հեռանալ ու վաւերական տաղանդի մը գործին մէջ հետապնդել երևոյթը, պէտք է կենանք Եղիայի քերթուածներուն առջև որոնք անկանգնելի կերպով կործանած գեղեցկութիւններ են, մեր մէջ իսպառ կործանելով նաև յոյսը օր մը իրանալի կառոյցին։ Սևակի համար տարբեր է պարագան։ Ան միշտ անակընկալին մարդը մնաց։ Ու ասիկա շնորհն է իր մատաղութեան, երիտասարդութեան։ Չեմ հերքեր դժբախտ իրականութիւնը որուն համեմատ այդ թարմութիւնը շատ քիչ անգամ ինքզինքը պիտի գիտնայ պարտադրել, մեզի՛ տալով

անաղարտ մարմնով ու խանդոտ հոգիով քերթուածները կ'արձանագրեմ հոս նաև սա վկայութիւնը ևս: Նոր Տաղերը, Հիքանոս Օրգերը, Ս. Մեսրոպը վերջնական գիրքեր են, որոնք իրենց հեղինակներուն կարելի պատկերը կը պահեն, վճռական ու անվերադարձ եղանակով մը: Համոզուած եմ որ անոնք իրենք զիրենք ամբողջովին տուած են իրենց գործերուն մէջ: Սեւակի համար նման վկայութիւն մը խնդրական կրնայ ըլլալ: Մահուան տարին իսկ ինքզինքը նորոգող ծերունին չէ անիկա: Բժիշկին Գիրքէն Փրցուած էջերը նոր մարդ մը կը յայտնաբերէ, բոլորովին թարմ, կայծկլտուն ու գեղանի: Պիտի ներէ՞ք ինծի ռումանթիզմը՝ թարմութիւնը, զայն մնալու հրաշքը ինքնին բանաստեղծականութիւն դաւանելու: Այդ պարագային ես պիտի չափսոսայի մեզի պակաս՝ խոստումներուն ողբերգութիւնը, ու պիտի մնայի գոհ ու է տալանդաւոր գրողէ՝ քանի մը անխառն վկայութիւններով: Դուք տեսաք ատոնք կանխող էջերուն մէջ:»

Պարսֆ կը զգանք յայտնելու թէ՛ Ռ. Սեւակի փերբլածներուն այս մեկսեղումը կը պահանջէր անելի խնամք եւ հետեւաբար անելի ժամանակ, տուած ըլլալով ցրուածութիւնը եւ ֆանսկութիւնը թերթերուն, որոնց աշխատակցած է Սեւակ: Այս իրողութիւնը անելի կը շեշտէ մեր շնորհակալութեան զգացումը, ժառանգաւորաց Վարժարանի սաներէն Կոստան Տ. Ստեփանեանի հանդէպ, որ հանութիւնը ունեցաւ մեզի տրամադրելու իր մեքենագրուած հաւաքածոն Ռ. Սեւակի փերբլածներուն: Ամենքն ալ կրկին ստուգուած՝ մեր Մասեճնադարանէն ձեռքի տակ եղող թերթերուն եւ տարբերութիւններուն հրատարակութիւններէն: Այս տեսակէտէն մեծապէս օգտակար եղաւ Արմէն Սեւանի *Նահատակ*

Գրողներ հասորիկը: Ու *Կարմիր Գիրք*էն յետոյ ամփոփեցինք *Սիրոյ Գիրքը* վերադիրով հրատարակուածները: Իսկ մնացեալ ազգայնական, ընկերային, բնութեապաշտ եւ *մահերգական* նկարագրով ոտանաւորները առինք *Ցրիւ Քերթուածներ* անունին սակ:

Մեր շնորհակալութեան խորունկ մեկ բաժինը արդար իրաւունքն է Պոլիս բնակող երիտասարդ հոգիի մը՝ Պր. Կարապետ Ճաննիկեան, անունով միայն բայց մանաւանդ իր բարեացակամ տրամադրութիւններովը մեզի ծանօթ: Խանդավառ այս երիտասարդը, տարի մը առաջ, զրկած էր մեզի իր գտած միակ օրինակը Սեւակի *Կարմիր Գիրքը* հասորէն, ընդօրինակելով ալ պակասաւոր վերջին էջը: Անցեալ ամսուն, մեր խընդրանքին եւ ներփակած ցանկին համաձայն, մեզի պակասող հրատարակութիւններէն օրինակած էր եօթը տերթուածներ, եւ ուրբերոդ մըն ալ՝ *Տրտում Ոգի*, «մանկութեան տշանէ մնացած տեսակէ մը», առանց կարեւորալ յիշելու սակայն թէ ի՞նչ առիթով եւ ուրկէ՞: Մեզի ծանօթ վերնագիրներէն եօթը կտոր միայն կարելի չեղաւ տրամադրելի ունենալ (*Մեծդ Աստուած, Պոլսոյ Որովայնին մէջ, Լուսնակ Լոյսով, Ողջակէզը, Հայ Զատիկը, Բանտին մէջ, եւ Զղջում*), իսկ այստեղ կը յիշենք միայն Սեւակի առաջին փորձը *Բաժանման Խօսքեր* Պեռպեռեան վարժարանի ամսվերջի մեկ հանդէսին կարդացուած, եւ հրատարակուած 1905ի Մարտին մէջ:

— Ահա թէ ինչո՞ւ անկեղծ է մեր իսկ գոհունակութիւնը այս հասորին հրատարակութեան համար:

ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿ

ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ

ԵՒ

ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱԶԷՄ

1944

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ

ԹՐՔՈՒՂԻՆ

ՄԱՐԴԵՐԳՈՒԹԻՒՆ

Ջ Ա Ր Դ Ի Խ Ե Ն Թ Ը

☸ Բ Ե Մ Ա Կ Ա Ն Մ Ե Ն Ա Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն ☸

Ք Ր Ք Ի Ջ Ը

Թ Ա Փ Ա Ռ Ո Ւ Մ Ը

Կ Ա Ր Մ Ի Ր Դ Ա Տ Ա Ս Տ Ա Ն Ը

Ա Ն Ո Ն Ք Ո Ր Կ Ո Ւ Գ Ա Ն

Ծ Ե Ր Ք Ա Շ Ա Ն Ա Ն

Գ Ե Տ Ը

Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ը

Գ Ի Շ Ե Ր Ի Ն Մ Է Ջ Ե Ր Գ

Ո Ճ Ի Ր Ը

Ց Ե Ղ Ի Ն Ո Ւ Խ Տ Ը

ՋԱՐԴԻ ԽԵՆԹԸ

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
 Հօրս գիական ուսիս, կը քալեմ, ահա՛
 Ջարդըւածներու դաշտին վըրայ լուռ... :
 Չառա՛մ Քահանայ, գիակըդ տըխուր
 Ի՛նչ ծանր է ուսիս, ի՛նչ ծանր է ուսիս... :
 Անշուշտ երբ իբր խենթ արտաքսեցիր զիս
 Հայրենի բոյնէդ, չի խորհեցար բնաւ
 Թէ պիտի գայի գտնել քեզ խոնաւ
 Թագստոցիդ մէջ խեղդուած, շան մը պէս,
 Իմ պա՛րտքըս վերջին կատարելու քեզ... :

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
 Բոլոր խելացի մարդիկներն ահա՛ .
 Ահա՛ խելօքներն այս ապուշ կեանքին,
 Ահա՛ անոնք որ իրենց ծանր հոգին
 Համրիչ քաշելով կ'զբօսցընէին,
 Ու նըւիրումով մը աստուածային՝
 Կիրակին անգա՛մ մը բերանով ծոմ
 Տիրամօր անջեւ կ'սպառէին մոմ,
 Շարաթ մը ամբողջ, անվա՛խ, անհամա՛ր,
 Շնալու, սըտելու, գողնալու համար:

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
 Բոլոր տիրացու հոգիներն ահա՛ .
 Ահա անոնք որ, ուղեղներ ծանծա՛ղ,
 Ամէն մութ հարցի ունէին ծիծաղ .
 Սաղմոսով սնած սոփեստներ աժան՝
 Հեշտ կը լուծէին հարցումներ դաժան .
 Գամոկլեան սուրի մը տակ դող ի գո՛ղ՝
 Շտեմարաննին կ'ուռեցնէին գո՛հ,
 Հարսնիքները շէ՛ն տօնելու վաղուան...
 Ու չէին հաճե՛ր խկ խորհիլ Մահուան...:

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
 Բայց ինչո՞ւ քրքիջս այսպէս կը դողայ...
 Ահա բոլո՛րն ալ, բոլո՛րն ալ, բոլո՛ր,
 Մութին ու լուռին մէջ անդնդախօր .
 Պառկա՛ծ խօլական, պառկա՛ծ ամբարիշտ,

Պառկած քարեղէն ցաւի մէջ ընդ միշտ
 Պառկած, Աստուած իմ. ու որչափ ալ կա՛յ,
 Ու որչա՛փ ալ կա՛յ. մինչեւ հեռակայ
 Ճամբաներուն ե՛րբը փռուած, կարծես
 Անդըրհեղեղեան անտառի մը պէս... :

— Է՛հ, հա՛, հա՛, հա՛, հա՛,
 Լուռ գիշերին մէջ, շուններուն, ահա՛,
 Երախին մէջ, դեռ կեանքով գալարուն
 Կը լըսեմ ճարճա՛տը ոսկորներուն... :
 Բարեկամ շունե՛ր, բարեկամ ձեռքե՛ր,
 Բարեկամ լեզուով լափլիզուած վէրքեր... :
 Երնէ՛կ, գազաններ անբան... : Բայց ինչպէ՛ս
 Բոլոր արջառնե՛րը, գըլուխնին վէ՛ս,
 Մուրացին հեռուի դաշտերը անձի՛ր,
 Գնդակէ՛ն, բոցէ՛ն, աչքերնին կարմիր... :



Ու ահա ամբողջ գիշեր կը շրջիմ,
 Յիմա՛ր, խեղճ յիմա՛ր :
 Խելքս առիր շատո՞նց. կեանքս առ, Փրկիչ իմ,
 Աստուած, մեր յիմա՛ր :

Ի՛նչ կը նայիք ինձ, հոգեվարք աչեր,
 Յիմա՛ր եմ, յիմար :

Երնէ՛կ, կը մեռնիք. մինչ ես կ'ապրիմ դեռ
Այս կեանքը յիմար:

Կռուի դաշտերով տարի առանձին
Ըստուերըս յիմա՛ր,
Շնորհ չըրին գնդակ մ'ալ ինձ. պոռացին
«Յիմա՛րն է, յիմար»:

Դէ՛հ, մըտիկ ըրէք. դուք որ կը խորդաք
Այս մահով յիմար,
Արիւնով շաղուած պատմութիւն մը տաք,
Յիմա՛ր, ա՛հ, յիմա՛ր:



Ո՞ր խեղճ երկիրն էր, ո՞ր թիւն Յիսուսի,
Ո՞ր թագաւորն էր — ականջը խօսի —
Միայն թէ բարի էր շա՛տ այդ արքան,
Մանրամասնութիւն չե՛մ գիտեր այնքան,
— Նոյն իսկ իր ձիուն անուն չեմ յիշեր —
Սեւ մղձաւանջէ մը վերջ մի գիշեր
Հըրաման ըրաւ եօթ քաղաքներու
Եօթ տարիքէն վար բնակիչներն արու
Եօթը օրուան մէջ կտրել — պայմանաւ
Որ տարէցներուն չի դպչին բընաւ... :
Ու տարէցներն այդ վերջին պայմանէն՝

Շնորհապարտ եղան ա՛յնքան՝ որ ամէն
 Եօթն էգ բնակէն մին ըրին նուէր
 — Նուէր էգերու Եօթ տարիքէն վե՛ր —
 Արքային ու իր հարճերուն արու...
 — Քա՛ղցր անմտութի՛ւն Եօթը թիւերու... :

Նոր թագակիրներն ի՛նչ շուտով մոռցան
 Հին իմաստութի՛ւնը արքայական :
 Ապշա՛ծ կը դիտեմ քառսն այս անհո՛ւն
 Ու կը խորհիմ թէ ի՛նչ բառ , ի՛նչ անուն
 Պէտք է տալ անմիտ այս ըզբօսանքին :
 Ինչո՞ւ կտրել տալ այս դողդոջագի՛ն
 Գանկերը ծերուկ՝ պարապո՛վ լեցուն :
 Ինչո՞ւ կտառըրտել՝ ծըռելու պատրաստ
 Այս լայն կոնակներն , արքայի՛ց գըրաստ :
 Այս համեստ , այս պարզ հոգիներն ընտել
 Արկատեան դրախտէն ինչո՞ւ վըռընտել :
 Գո՛նէ մէյ մէկ աչք թող իրենց տային
 Ամբողջ կեանքերնին պիտ՛ աղօթէին... :
 Արքան ի՛նչ կ՛ուզէր իր ըստրուկ մարդէն .
 Ինչո՞ւ մեռցընել՝ մեռածներն արդէն... :

Ու ինչո՞ւ թողուլ որ որբերն ապրին ,
 Այդ որդեգրեալներն արեա՛ն , խաւարի՛ն :
 Օր մը տարիքով փոքրիկ , հոգւով մե՛ծ ,

Այդ մանուկներու խուժքը դառնահեծ ,
 Որ ո՛չ ինչ չուենին այլեւս , ո՛չ ծընո՛ղ ,
 Ո՛չ Աստուած , ո՛չ ասի մը հայրենի հող . . .
 Եւ որ կը մուրան պատառիկ մը հաց՝
 Հեռէն պժգանքով իրենց կարկառուած . . .
 Եւ որոնք Մարգուն մէջը՝ սրբազան
 Ոչի՛նչ գըտան այլ վայրագ մի գազան . . .
 Զգո՛յշ , այդ նոյն հըսկայ մանուկներ մի օր
 Նեխած ոսկրերու վըրայ բիւրաւոր
 Կարմիր-Դատաստա՛նը պիտի կանգնեն . . .
 Ու չորս հովերուն նո՛ր Կամք , նո՛ր Օրէն
 Պիտի շեփորեն . . . : Ու այն ատեն , վա՛յ ,
 Վա՛յ բոլոր շնչող էակներուն , վա՛յ . . . :



— «Ահա մենք կու գանք — կ'ըսեն անո՛նք
 Կու գան , չէ՞ք լսեր տրոփիւնն ահաւոր —
 Մուժը շնչելէն աչքերնիս կուրցած
 Ու արեան հոտէն ուրնգունքնիս լայն բաց :

«Ահա մենք կու գանք , ուսով հրելով
 Մեր Ցաւին Անիւը դարահողով ,
 Երկրագունդիս վրայ , խաւարին մէջէն ,
 Բոլո՛ր անոնց վրայ որ դեռ կը շնչեն . . . :

«Ահա մենք կու գանք , ահեղակորով
 Մեր Յոյսին կռանիթ գարշապարներով

→ Խօսեցընելու անանճէն կորած
Գերեզմաննոցներն համայնատարած . . . :

«Ահա մենք կու գանք ու մենք նզովքն ենք,
Ու խաւարին մէջ մխուած տէգը նենգ .
Վրէժներու հիդրան ենք փայփայելի,
Մե՛նք, սարսափահա՛ր ու սարսափելի . . . :

«Մենք՝ հին ուխտերու նո՛ր ուխտագընաց,
Մենք՝ Սուսերը բիրտ ու Գիրքն օրինաց .
Մենք՝ Յասման ջրովէ՛ժը սարի կողէն .
Մենք՝ աղջամուղջի ծընուէ՛ղ լուսեղէն . . . :

«Ձե՛զի՛ որ քերծւած մեր մորթերէն ձի՛գ
Հարսնիքի, Մեղքի վրաններ կառուցիք . . .
Ու Ձե՛զ՝ եւրոպեան դիք որ շընազին
Սակարկեցիք մեր արեան լուռթեան դին . . . :

«Ձեր սրտին դռնե՛րը փակեցէք խուլ,
Սուրե՛ր սըրեցէք, սըրեցէք զանխո՛ւլ,
Սրեցէ՛ք ձեր խղճին վըրայ քարացած,
Ու արտաճներուն վրայ ձեր զաւակաց . . . :

«Ահա մենք կու գա՛նք. հովերուն մէջէն
Ձէ՞ք լսեր ոսկրեր որ կը շըշընչեն . . . :
Ամէնքս ալ՝ զագիր դիակ, խոռոչ գանկ,
Ահա մենք կու գանք, ահա մենք կու գանք . . . :»



— Երթամ, ըշտապեմ, ծածկելու փութամ
 Վաղուան աւօտէ՛ն՝ դիակն այս զառամ:
 Ծագող արե՛ւն իսկ պիտի ամչնար
 Այս ծերուկ վատին դիակին համար,
 Դիակին համար:

Կ'ըսէիր, հայրի՛կ. « Դըրախտ երթալու
 « Կարճագոյն ճամբան ըլլալն է հըլու
 « Հետեւող խաչի սուրբ արահետին... »
 — Հա՛յր, է՛ն կարճ ճամբան խանջերն է Քուրդին
 Խանջերն է Քուրդին:

Կապար քայլերով, բիւրերու կուրծքին
 Վըրայ կը քալեմ ես դանդաղագին:
 Մակարդած արիւնն է իրաւցընէ
 Որ իմ սըրունքներս կը ծանրացընէ,
 Կը ծանրացընէ...:



Քայլերուս առջեւ յորդ գետն է ահա՛:
 Ա՛խ. նետեցի զայն. կ'երթայ, կը խաղայ:
 Է՛հ, երթաս բարով, ծերո՞ւկ քահանայ,
 Արեւն ա՛լ քեզի չի պիտի տեսնայ,
 Ձի պիտի տեսնայ...:

Հազարներու հետ, այսպէ՛ս, անխափա՛ն
Պիտի երթաս դուն, ջո՛ւրը քեզ տապան :
է՛հ, գնաս բարով, ծերունի՛դ անբան,
Դըրախտ երթալու ո՞րն է կարճ ճամբան,
Ա՛յ, ո՞րն է ճամբան . . . :

Այս վատերո՛ւն տեղ, օր մը, ո՛վ Սիհուն,
Դարաւոր ալեա՛ցըդ վըրան, սիրուն
Ճերմակ կարապներ կը թեւեն սահուն,
Երգե՛ր կը թռչին ցայգի այս պահուն,
Ցայգի այս պահուն . . . :

Երբեմըն երբեմն, թերեւըս մի՛այն,
Ջուրերու խորքէն գանկ մը լռելեայն
Յառնելով, փուշ փուշ ընէ սիրական
Ձոյգերու համբոյրն . . . : Ամէնը այսքան,
Ամէնը ա՛յսքան . . . :



Ջուրին մէջ երկինք կը ցոլայ անհո՛ւն . . . :
Ո՛վ ոսկի եղեոն Մահու այս պահուն . . . :
Կուռ մարգրիտներու շարք մանեա՛կ մանեա՛կ .
Աստղեր, ծիր-կաթին, լուսին, արբանեակ,
Լոյս ստինքներու պէս ողկո՛յզ, ողկո՛յզ,
Կը կաթեն գինով հիւթը հոգեյոյզ . . . :

Մեռնի՞լ . . . : Աչքերնիդ երկի՛նք , արիւնհա՛լ ,
 Խեղճ հոգեվարքներ . . . : Է՞ր չեմ կրնար լա՛լ . . . :
 Լա՞լ . ո՛չ . բայց , դո՛ւն , դո՛ւն որ գահէդ անհաս ,
 Բո՛ւռ բո՛ւռ ասողերու մէջ կը խրոխտա՛ս ,
 Է՞ր չի կրնայի փտա՛ծ թռքերէս

Արիւնճո՛տ , ժանգո՛տ խուլս մը շնորհել քեզ . . . :
 Բայց դուն բարձր ես , վերն . քու խղճիդ մաքուր
 Առանձնութեան մէջ . եօթ մարգարտակուռ
 Կամարներէդ եօթն անգամ բարձրացած
 Սերովբէներուդ միջեւ գեանամած . . .
 Ու չես հաճիր ա՛չքըդ անկարեկիր
 Ուղղել մարդկութեան զոր յերկիր թուքիր . . . :

Լո՛յս սանդուղներուդ ոսկի մատներէդ
 Իջի՛ր Եհովա՛դ , Ալլահը՛դ , Որ էն . . . :
 Այլ զգո՛յշ . քու լոյսդ մութին մէջ գոցէ՛ .
 Զի կառափնարանն այս անհուն , գո՛ւցէ
 Խենթենայ յանկարծ , գո՛ւցէ ծերունի
 Աչքերուդ մատներ խրուին արիւնի . . . :

. . . Խեղճ յիմար : Որու կը խօսիմ փրփրած
 Չէ՞ որ դուն վաղո՛ւց մեռեր ես , Աստուա՛ծ .
 Ու քու հսկայի գիակըդ անբա՛ւ ,
 Գարշանքի ժահրո՛վն արիւնաթաթաւ ,
 Ապականե՛ր է երկնից անապակ
 Միր-կաթիններուն երազն անյատակ . . . :



— «Վարդե՛րը մեռան,
 Վարդե՛րը մեռան
 Իրենց բիւր-բիւրան,
 Յողիկին վրան
 Վարդե՛րը մեռան,
 Վարդե՛րը մեռան:

«Արիւնոս, մանրիկ, ●
 Ոսներբո քոսիկ
 Դիակներու վրան
 Դողդո՛ջ կ'երեւան:
 Վարդե՛րը մեռան,
 Վարդե՛րը մեռան:

«Գթա ինձ, Ասուա՛ծ,
 Մազերբո ցուա՛ծ
 Կ'երթամ սարածամ,
 Կ'երթամ ու կու լամ.
 «Ո՞ւր է իմ վարդը
 «Ո՞ւր է իմ վարդը:»

«Կ'ուզէի՛ գլխուն
 Տակ դնել անհո՛ւն
 Գեհներ կուրծփս:
 Թող այսպէս հոգիս,
 Մեռնե՛ր գուրգրանֆո՛վ,
 Իր դիակին ֆո՛վ...:»



Ո՛վ է ցայգինն մէջ աղջիկն այս տրտում,
 Որ խենթի մը պէս կ'երթայ անդադրում,

Դիակէ՛ գիակ: Ի՛նչ է այս հառաչ:
 Ո՞վ է զիտապատն այս՝ որու առաջ
 Հէգը կանգնեցաւ: Ճի՛չ մը...: Ու անա՛
 Վիրաւորն ելլել կ'ուզէ, կը դողայ.

Բազուկներ իրար կը գալարուին քար...:
 Ու լուսնակին տակ, սէրէ՛ն խելագար՝
 Արիւնո՛տ, փրփրո՞տ՝ լա՛յն բերանը տաք
 — Բիւր-ժանիք վիհի մը պէս անյատա՛կ —
 Խոր հոնդիւնով հոգեվարքը արդ
 Կպցուց սիրուհւոյն բերնին վըրայ վարդ...:

Ահե՛ղ շրջանակ: Չորս կողմը մեռել,
 Մէջտեղը Սէր. մո՛ւթ արահետ անել:
 . . . Ձէնքս կրակեցի. գանկերն հակեցան:
 Մօտեցայ իրենց. ըսի բարձրաձայն

Հօլա՛, րնկերնե՛ր,
 Ինչո՞ւ էի լուր.
 Ձեզ ցա՛ս արեւո՛ւ:
 Գրախոս երթալու.
 Ո՞րն է կարն համբան.
 Ա՛յ, ո՛րն է համբան...:



Յետոյ, ապշահա՛ր իրենց մունջ քունէն,
 Գըլուխըս դըրի երկիւղածօրէն
 Իրենց զոյգ գլխին՝ քարացուցի զիս.
 Ու երկաթէ քուն մը ընկճեց հոգիս:

Այն ատեն հսկայ մը զարկաւ ուսիս .

— «Իե՛նթ, ի՞նչ կը տեսնես, կ'ուզեմ որ խօսիս :»

Ու ես խօսեցայ ու ըսի իրեն

Իմ ապառաժէ՛ քունիս խորերէն .

— «Կը տեսնեմ հարիւր հին քաղաքներու

Հարիւր աշտարա՛կը հեռէ հեռու :

Կը տեսնեմ կապար օդին մէջ տխուր ,

Հարիւր զանգակները դարերով լուռ :

«Կը տեսնեմ հարիւր սարեր մոխրապատ ,

Անցա՛ւ, անժպի՛տ, իբրեւ անապատ ,

Կը տեսնեմ բերդեր անդունդներու քով՝

Ժամանակին դէմ գոցուած՝ փականքով :

«Կը տեսնեմ մեր հին տապանաքարեր

Հազար ցեղերէ կոխուած՝ անվեհե՛ր :

Բիւր քարուղիներ կը տեսնեմ, Աստուա՛ծ ,

«Աս-հանգչի»ներով սալայատակուած . . . :

«Բայց ահա՛ հարիւր զանգերն համօրէն

Երկիւղածօրէն՝ ու գիտակցօրէ՛ն ,

Մութ գիշերին դէմ, ամէ՛նքը մէկանց ,

Փոշոտ լեզուներն շարժեցին յանկարծ :

«Քարուղիներու տապաններն անձայն,
 Խորհուրդներո՞ւ պէս՝ լռի՛ն բացուեցան.
 Հարիւր իշխաններ ելան անբարբա՛ռ...:
 Ահա՛, ցայգին մէջ կ'երթան վեհափա՛ռ...:

«Կը տեսնեմ, կու լամ...: Թափո՛րն է Ուխտին.
 Ուխտին որ կ'ապրի դե՛ռ Մահէն անդին.
 Ուխտի՛ն որ ահա հեռո՞ւ է հեռու
 Փականքը բացաւ սարի բերդերու...:

«Հարիւր իշխաններ կ'երթան անխռո՛վ
 Քայլերնին ծանր է եօթը դարերով.
 Վահաննին ժանգոտ, բայց աչքերնին վէս.
 Ոտքերնուն շղթան կ'երգէ ջուրի պէս...:

«Այն որ թափօրին կ'երթայ առջեւէն՝
 Խոնջ է լայն բեհեզ մը քաշկոտելէ՛ն...
 Կարմիր-ծիրանի՞ն արքայական,
 Թէ Ցեղին արիւնն ... չե՛մ տեսներ այնքան:

«Ու թափօրին հետ, ու թափօրէն վեր,
 Թռչուն մ'օդին մէջ կը խարխափի, ծե՛ր...
 Այդ՝ միթէ՞ արծիւն է արքայական,
 Թէ սեւ բաղդին բուն... չեմ տեսներ այնքան:

«Լա՛յն կարկառեցի ձեռքերս արիւնոտ .
 — «Առէ՛ք, գոչեցի, ա՛խ, զի՛ս ալ ձեզ մօտ .
 «Կ'ուզէի այսպէս դիմել յաւիտեան
 «Ցեղի մը ուխտին անդըրչիրիմեան . . . »

«Բայց ահա՛ ծագեց լոյսն արշալոյսին .
 Հարիւր իշխաններն իջան միասին
 Բաց տապաններու քար սանդուղներէն .
 Ու ամէ՛ն, ամէ՛ն բան կորաւ նորէն . . . » :

. . . Ու ամէ՛ն, ամէ՛ն բան կորաւ նորէն :
 — Ժամն է որ բուրի մը պէս, վատօրէ՛ն,
 Գոյութիւնս ծակի մը մէջ թաքթաքուր
 Ծածկեմ Արեւուն ճաճանչէն մաքուր . . . :



ԹՐՔՈՒՂԻՆ

⌘ ԳԵՂՋՈՒԿ ԵՂԵՐԵՐԳ ⌘

ԱՍԵՂԻ ՇԻՍՔԸ
Ա՛Յ ԱՂՋԻԿ
ՀԱՅԴՈՒԿԸ
ՀԱՅՈՒՂԻՆ
ԱՌԵԻԱՆԳՈՒՄԸ
ԿԱՐՄԻՐ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ
ՊՈՒՏ ՄԸ ԱՐԻՒՆԸ
ԿՈՒՍԵՐԳՈՒԹԻՒՆ
Ա՛Լ ԶԻ ԺՊՏԵՑ
ՎՐԷԺԸ

ԹՐՔՈՒՀԻՆ

Հայր, մայր, բակին մէջ, ծերուկ կը ննջեն :
 Խարխուլ տնակին ծակերուն մէջէն
 Վայրագ կը սուլէ ցուրտ ձիւնը ձմրան .
 Աստուած, այս ի՞նչ հով, հիմեր կ'երերան :

Հողէ կանթեղի մը լոյսով դողդոջ,
 Մինակ, գեռատի աղջիկ մը բողբոջ,
 Գաղտնի ձեռակերտ կը հիւսէ ասուէ,
 Կը հիւսէ լռի՛կ, լռի՛կ կ'արտասուէ :

Անցած շաբթու երբ սարէն գիւղ գընաց,
 Սուրբի մատուռին իբր ուխտագընաց,
 Գաղտնի գներ է ապրուելում քաղքի,
 Պուճճուխներ մանրիկ, մետաքս, թել ոսկի :

Ու ամէն գիշեր, ծնողքը բարի՛
 Երբօր ննջեն, ի՛ր գործին կը փարի.
 Բարակ ասեղով ան իր կ'արն ասուէ
 Կը հիւսէ լռի՛կ, լռի՛կ կ'արտասուէ . . . :



— Որի՞ համար այդ կարող, ա՛յ աղջիկ.
 Որի՞ համար է արցունքդ, հա՛յ աղջիկ:
 Ջահիլ մը միթէ՞ սարերու վերով,
 Սիրտդ առաւ կուրծքէդ ու գնաց բարով . . . :

= Ես ինձի համար կու լամ, աղբերջա՛ն.
 Գիշերին գազտնիքն առած պատմուճան . . . :
 Սիրտըս սըգօտ է, սիրտըս սէր չունի,
 Սիրտըս վէրքօտ է, սիրտըս տէր չունի:

— Ինչո՞ւ համար է մետաքսդ, ա՛յ աղջիկ,
 Ինչո՞ւ համար է հառաչդ, հա՛յ աղջիկ:
 Մի՞թէ հարսնիքիդ աղքատիկ ջեհեզ,
 Հալաւիդ համար կը հիւսես բեհեզ . . . :

= Եւ միթէ՞ հարսնիք ունիմ, աղբերջա՛ն.
 Թէ մեկնիմ տունէս, մեռնի՛մ դաւաճան:
 Այս ցուրտ սարերուն վըրայ ամալի,
 Ծնողքս ու եղնիկս ո՞վ պիտի նայի . . . :



Բայց ահա ժպտեց կոյսը լռելեայն,
Գործն աւարտեց էր. մախաղ մ'էր միայն:
Կտրեց մազերէն սեփսեւ ծամ մը լայն,
Ու հիւսեց հապճեպ, — իր անունն էր այն . . . :

Մընողքը դիտեց՝ կը քնանային:
Լամբարը մարեց, ու աստուածային
Աղջիկը մեղմին քայլերով գուռնէն
Դուրս սպրդեցաւ երկիւղածօրէն:

Հո՛ն, իր մեծ եղբայրն՝ ամէնէն թաքուն,
Այդ բուք-բօրան, ցուրտ գիշերով անքուն,
Ինչ որ հին զէնքեր սրբելով մաքուր՝
Կը պատրաստըւէր մեկնիլ թաքթաքուր . . . :

Աղջիկն իր վզին սեղմ փաթտուեցաւ՝
Մախաղն իր ուսին անցուց, ու լացաւ . . . :
Ջահիլն հայրենի, իր պարտքին հլո՛ւ,
Գընաց զարնելու . . . : Գընաց մեռնելու . . . :



Բայց ես քե՛զ կու լամ, ով հայածին կոյս:
Դո՛ւն մեր ցայգին մէջ՝ խաւարակուռ Լո՛յս:
Դո՛ւն միշտ շշնչող ու մի՛շտ խաբուած Յոյս .
Դո՛ւն մեր դամբանին՝ Մաղիկ սգաբոյս . . . :

Ո՞ր Օրէնքէն, ո՞ր Աստուծմէն, ո՞ր մութ
Արգարութենէն, ո՞ր գութէն անգութ,

Ո՞ր մէկ ոճիրիդ քաւութեան համար՝
Կարմիր շղթայիդ օղերն անհամար . . . :

Դո՛ւն, կին, չունի՛ս իսկ այն լոյսը ծաւի,
Այն ցուքը յետին, որ Սէր կը կոչուի:
Դո՛ւն արգանդն ես լոկ ծընելու անո՛նք
Որ պիտի մեռցւին մահով անողոք . . . :

Ու սո՛ւրի մէջէն, ու բո՛ցի մէջէն,
Ու արեան մէջէն, Մահը կ'ընդմիջեն
Ձեռքերդ՝ վեր բռնած մանո՛ւկ մը, վայրի
Ձայնով լալով՝ «Ա՛զգը պիտի սպրի»:



Ժամանակ անցաւ. աղջիկն ամէն օր . . .
Լոյսը չի ծագած կ'երթար հեռաւոր
Սարերն իր եղնի՛ կը արածելու,
Ճամբան դիտելու, եղբայրն հեծելու . . . :

Ու զոյգը ծերուկ—մահահոտ արդէն—
Երկուքի կոտրած, կակուղ մարմանդէ՛ն
Հեռուի Սուրբին կ'երթային կըքուն,
Ազօթել կորած Ջահիլի հոգուն . . . :

Առտու մըն ալ երբ աղջիկը Հայուն
Կ'երթար, հեռուէն լսեց խեղճ մայիւն .
Դիթաց, թափանցեց գոգը անտառին .
Երբ չորս բազուկներ առին զայն, տարին . . . :

Աղջիկը գնաց, համակերպ, հլո՛ւ,
 Զայներ կը լսէր, չէր զօրեր լալո՛ւ...
 — Աղջի՛կ, ա՛յ աղջիկ, սարը ամայի
 Ծնողքդ ու եղնիկդ ո՞վ պիտի նայի...



Ու Բէկը ըսաւ. «Այս գիշեր հոգւոյս
 Տօնն է. վառուին տա՛ս ջահէր լիալոյս.
 Բերէ՛ք սրբազան կոնքը արծաթի.
 Այս գիշեր Արևս արեան մէջ ծաթի:

«Նե՛րս արձակեցէք աւարս գեղեցիկ,
 Այս սուրբ կոնքին մէջ կանգնէ՛ սըլացիկ
 Աղօթքի մը պէս հասակն իր նոճի...:
 Իբ մկրտութեան Ալլահ թող հաճի...:

«Բերէք կարաւանն էգերուս, կարգո՛վ,
 Կոնքին շուրջ ծունկի շարուին քովէ քով:
 Ու թող ա՛յն որուն մօտեցայ երէկ՝
 Զոհուի կոնքին մէջ. դաշո՛յնը բերէք:

«Թող երգեն ամէ՛նքն ալ. ա՛յն ո՞ր կու լայ
 Առաջին զոհին պէս պիտի ըլլայ...:
 Թող ծընի Իսլամ արիւնով խոնաւ
 Կոնքէն՝ Նո՛ր Իսլամ...»: Ու այսպէս եղաւ...:



Անշըշո՛ւնչ , ամէնքն ալ հեռացեր են :
 Կոյսերը մարած . ջահի կայծերէն
 Ոմանք կը մխան — եղեռնի մը պէս . . . :
 Խուռնկի ծառն՝ ապրող անձ մ'ըլլար կարծես . . . :

Ու վէ՛ս , ու խըրո՛խտ , ու մո՛ւլթ , անմուռնչ ,
 Մէջտեղը կանգնած կոյսը անտէրունչ ,
 Ո՛ւ մերկ , ո՛ւ իսլամ արեամբ հրավառ ,
 Դիւցազնի կարծես մերկ նիզակ մ'ըլլար . . . :

. . . Ո՞վ պիտի լայ ձեզ , տարուա՛ծ մուրորո՛ւն ,
 Գեղեցկագոյններդ Գեղեցիկներուն . . .
 Ձեր առջև կի՛րքն իսկ պիտ' իմաստանար .
 Ու իմաստութիւնն պիտի ծառանար . . . :

Դեռ կո՛յս , դեռ վայրի՛ , դեռ տա՛ք , անապակ ,
 Դո՛ւք որ թշնամու վրաններու տակ ,
 Թափելու կ'երթաք պո՛ւտ մ'արցունքի հետ ,
 Ամօթապարտ պուտ մը արիւն անհետ . . . :



Ու Բէկը երգեց . « Դու Սուլթանս ես , ջան .
 Դամասկի բեհե՛զը քեզ պատմուճան :
 Դու իմ գիշերի Արևս ես , ջա՛ն ջա՛ն ,
 Ինչպէ՛ս նայիմ քեզ , հոգիս կը դողայ . . . :

« Դու իմ նորածագ Թրքուհիս ես, ջա՛ն .
 Իմ երկու աչերըս քեզ կը տենչան :
 Սրտիս վարդենւոյն դշխոյն ես, ջա՛ն ջա՛ն,
 Ինչպէ՛ս փրցնեմ քեզ, ձեռքըս կը դողայ . . . :

« Դու ինչո՞ւ այնքան անգո՛ւլթ ես ինձ, ջա՛ն,
 Մանրիկ ատամներդ հոգիս կ'որոճան :
 Մի՛ ջահեր աչքիդ տաճարը, ջա՛ն ջա՛ն,
 Ինչպէ՛ս մարեմ քեզ, սիրտըս կը դողայ . . . :

« Դու գլխիս հրաշէկ սաղաւարտն ես, ջա՛ն .
 Շապի՛կ բոցեղէն, չքնազ դաւաճան :
 Սիրտըս կըրակի վրա՛յ կ'այրես, ջա՛ն ջա՛ն,
 Ինչպէ՛ս մխեմ քեզ, սուրըս կը դողայ . . . :»



. . . Թրքուհին այլև՛ս չի ժպտեց բընա՛ւ :
 Առաջին ցայգին արցունքը խոնաւ
 Այնպէ՛ս խոր գծեր էր դէմքին ճամբան,
 Որ չի կրցաւ զայն սրբել ո՛չ մի բան :

Ո՛չ մետաքս հաշաղ, ո՛չ պերճանքներ բուստ,
 Ո՛չ Դամասկոսի բեհեզներ հարուստ,
 Ո՛չ Պենկալայի վարդեր գեռ խոնա՛ւ . . .
 Թրքուհին այլև՛ըս չի ժպտեց բնաւ :

Ան ի՛ր Օրէնքէն, ան ի՛ր Արգանդէն,
 Ան ի՛ր Կեանքէն, իր Յասուժէն, արդէն
 Մի նոր Իսլամի ծնիլը կ'զգար.
 Զայն ի՛ր արեան մէջ խեղդելու անկար...:

Խեղճն ա՛լ չէր խորհեր թէ սարն ամայի
 Ծնողքն ու եղնիկն ո՞վ պիտի նայի...
 Բայց Բէկն ըսեր էր. «Ալլահ օրհնէ քեզ,
 Եղբայրդ մօտ օրէն դու պլտի տեսնես...»:



Ու Բէկը եկաւ գիշեր մ'ուշ ատեն,
 — «Ով իմ Թրքուհիս, տե՛ս, հեղեղատէն
 Անցնելուս այս խեղճը ինձ կը դաւէր
 Իր ղանչերն ու զինք քեզ բերի նուէր»:

Թրքուհւոյն իրա՛նը սառսռաց փուշ փուշ.
 Առաւ ծանր մախա՛ղը, դիտեց ապուշ.
 Իր հիւսքն էր օսկի թելերով անշէջ,
 Իր մազն, իր անուներ, արիւններդւ մէջ...:

Աչքը մթազնեց, մոռցաւ ամէն բան.
 Նետուեցաւ վայրի թռչնի պէս անբան.
 Ղանչերը մխեց շե՛շտ Բէկի կուրծքին,
 «Այս քե՛զ համար եր...» գոչեց մուկգին:

«Այս ալ ի՛նձ համար...» ըսաւ խելայե՛ղ
Անսահմա՛ն, անվե՛րջ քրքիչով ահե՛ղ,
Բռնած եղբօր գանկն աչքերուն առջին... :

— Առաջին խինդն էր, ու շունչը վերջին... :



Մ Ա Ր Դ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԵԶ — Ծնունդը

ԳԻՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ — Կեանքը

ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷԶ — Մահը

ԳԻՒՂԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԷՉ

Ա .

Անցեալ տարի էր : Յոգնած ապաքէն ,
 Շատ քաղաքակիրթ այս Արևմուտքէն՝
 Ուր խիղճը բառ մ'է , մարդը՝ մեքենայ .
 Աշխարհ գործարան մ'անխոնջ , անխընայ .
 Սէրը հաշիւ մ'է . կրօնքը՝ դրամ .
 Երջանկութիւնը՝ ձանձրալի մի տռամ .
 Մահն՝ անմտութիւն . կեանքն՝ անհաշտ մի կռիւ .
 Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալեխուիւ
 Որ ամէն բոպէն իր մանրակրկիտ
 Մուրճի հարուածով կը զարնէ մտքիդ . . .
 Այսպէ՛ս , հե ի հե՛ , յոգնած , յուսահատ ,
 Անմիտ այս վազքէն անդո՛ւլ , անընդհատ ,
 Կարօտն ունեցայ հին հին դարերու .
 Եւ հիւանդ հոգիս տարի ես հեռո՛ւ ,
 Հեռո՛ւ , խնկաւէ՛տ , լո՛ւռ , մշտնջենի՛ ,
 Արևելքի իմ գիւղըս հայրենի . . . :

Բ .

Կիրակի մըն էր, քայլերս ուղղեցի
 Իմ ալևոր մօրս հետ եկեղեցի:
 — Պիտի ծիծաղի՞ք, կարծրացած սրտեր,
 Կարդացիք Լիւքրէս, Եպիկուր, Վօլթէր,
 Մի քանի ուրիշ մուծ գիրքեր ալ դեռ.
 Բայց անհաւատի այդ տժգոյն թուղթեր
 Իրաւունք չե՛ն տար որ ամբարտաւան
 Ձեր թոյնը փչէք՝ կըրօնադաւան
 Հոգւոյն ալևոր մօր մը ծերունի,
 Որ ապրելու՜ դեռ հազիւ օր մ'ունի,
 Որ ծովուն վըրայ՝ շիւղի մը նման,
 Մէկ ոտքը մատուռ, միւսը գերեզման,
 Գերագոյն, անհաս, անսկիզբ, բարի,
 Մթին Աստուծոյ մ'անուան կը փարի.
 Ու անիրաւուա՛ծ, տառապա՛ծ, հուսա՛,
 Մեծ Արդարութեան վճռին կը յուսայ...:

Գ .

Ու դո՛ւք, ո՛վ Հօրաս, Ձենոն ու Վօլթէր,
 Ինչ որ ալ ըլլաք՝ երէկինն էք դեռ.
 Մինչ յիսուն հազար այս տարի է որ
 Անդուլ կը դառնայ աշխարհն ալևոր՝
 Հաւատացեր են մարդերը բոլոր:
 — Բարէ՛, հակառակ հաւատքիս մօլոր,

Ծաղրել չի գիտցա՛ւ բընաւ իմ հոգին
 Տաճա՛ր մ'ըլլայ այն, հեթանոս բազին,
 Քար-քար աւերակ սիւներ Քառնաքին,
 Հըրապաշտ Պարսիկ բըլուր բոցազին,
 Բոցը Սիպիլի, Հնդիկ էլլօրան,
 Ասորեան հարիւր-զոհեան հին խորան,
 Կամ Բըրիստոնեայ պերճ եկեղեցին...
 Հոն մարդերը Մեծ-Յոյսը դարբնեցին...
 Ու հո՛ն—գլխարկնիդ բացէք՝ վեհերուն—
 Գերեզմանոցն է կենդանիներուն...

Դ.

Եկեղեցւոյն մէջ մըտայ լռելեայն :
 Շէնքը փոքրիկ էր, բայց բաւական լա՛յն՝
 Աստուածն ու դարե՛րը ամփոփելու... :
 Քար քարի վըրայ, ծըներ էր, հըլո՛ւ,
 Առանց արուեստի, առանց մեծ ոճի,
 Պարզ, ինչպէս ծառ մը որ հողէն կ'աճի.
 Ու քար, ու բազմոց, ու կերոն, ու խաչ,
 Հոն, հին դարերու բոյրն ունէին գաղջ... :
 Ու առաստաղի աղքատ ջահերէն
 Կախուած՝ ժամանա՛կը մեռելօրէն
 Կը ննջէր անշա՛րժ, դա՛րե՛ր քնէած,
 Քշոցին ձայնէն երբեմըն շոյուած...
 Հոն ո՛չ հեք, ո՛չ վազք, ո՛չ ժամ, ո՛չ վայրկեան.

Անսահման, անխռով, անծա՛լ, յաւիտեա՛ն,
 Զո՛րս պատերու մէջ՝ Անհո՛ւն մը խորին,
 Ուր ծեր գեղջուկներ մեռնի՛լ կը սովրին . . . :

Ե .

Բայց բացառիկ տօն մ'էր այդ կիրակին .
 Կընո՛ւնքն էր շոջի նորեկ որդեակին,
 Ինչ որ գիւղին նո՛յնքան է կարևոր,
 Որքան Ծնունդի տօ՛նը դարաւոր
 Նազարէթի հին քաղաքացիին :
 Ուստի ծեր, մանուկ, հաւաքուած էին :
 Ու քահանան այդ մե՛ծ օրուան համար,
 Պատրաստեր էր փոքր քարոզ մը յարմար :
 Պերճ խօսքի տաղանդ չունէր բնածին,
 Բայց զայն ընտրեր էր Հովիւ՝ գիւղացին,
 Զի հասակով բարձր էր, վարքով արդար,
 Հայերէն գիտէր, նո՛յն իսկ կը կարդար :
 Կեանքի պայքարէն յոգնած հիւսն մը հեզ,
 — Կոյս Մարիամին կո՛յս նշանածին պէս —
 Այնքան վայլեր էր մօրուքն ու շուրջառ,
 Որ կարծես ան ա՛յնպէս ծնած ըլլար . . . :

Զ .

Զոյգ կերօնի մէջ՝ կը խօսէր բեմէն .
 Ու կ'ունկնդրէին գեղջուկներն ամէն,
 Խո՛ր երանութեամբ սուզուա՛ծ անհընար .

— Թէև հայերէն մա՛րդ չի հասկնար —
 Հին Անեցարուէն առած բնաբան,
 Կը գտնէր Տէր-Հայրը շա՛տ բնական
 Որ տըղերք աշխարհ գան անհամար — լուրջ —
 Ինչպէս բիւր շիւղեր ձիթենիին շուրջ:
 Յանկարծ շըլացին աչերս քնէա՛ծ,
 Նարօլէօնին անո՛ւնն էր տուած:
 Նարօլէօն... Ի՛նչ քաոս անյատակ՝
 Աշխարհքէն քշուած այդ մատուռին տակ:
 Չէ՞ որ ըսեր է այդ մարդն ահագին,
 «Մայրե՛ր, զաւակնե՛ր շինեցէք ազգին...»:
 — Ախ. զօ՛րք պէտք էր այդ ամբարտաւանին՝
 Որ թնդանօթներ գիւղէ՛ գիւղ տանին... .

է.

Պատարագէն վերջ, քով քովի, անձայն,
 Երկու թափօրներ իրար քսուեցան:
 Ան չէր դասական հանդիպումը հին՝
 Կընունքի թափօրն՝ Մահուան թափօրին. —
 Մէկ կողմ ծնո՛ւնդ, խի՛նդ. միւս կողմ մա՛հու լալ -
 Ու եկեղեցին կ'օրհնէ երկուքն ալ...
 Ո՛չ: Երկու թափօր, երկո՛ւքն ալ ժպտուն.
 Մէկը՝ նորածին որդին մեծատուն.
 Մի՛ւսը աղքատի ծընունդը անտուն.
 Մէկը՝ բեհեզով. քընած, միւսն արթուն.
 Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,

Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն .
 Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տեսակ,
 Երկրորդին ճակտին փուշի սև պսակ .
 Մէկը Տէ՛ր արդէն, միւսը Գըրա՛ստ :
 Ճակատագի՛ր, վա՛խ, տըղաքները փաստ . . . :

Ը .

Բայց այս ի՛նչ արդար օրէնք մ'է խորին
 Որ յղփացա՛ծ, ճո՛խ Մեծերը երկրին
 Իրե՛նց արգանդին մէջ կը հարուածէ :
 Հաւասարութեան խո՛ւլ պէտք մ'է գուցէ
 Որ վիժածընունդ սերմերը Մեծին
 Ի՛ր որովայնին իսկ գո՛գը հիւծին ,
 Ու հաշիւներէ վերջ, երբ ի հարկէ
 Ոսկին ա՛լ պատրաստ է, հա՛յրը գրկէ
 Խանձարուրներու մէջ մետաքս գեղերփի,
 Անժըպի՛տ, տժգո՛յն հրէշ մը մարգակերպ . . . :
 Մինչ քանի՛ թշուառ խեղճեր՝ է՛գ, արո՛ւ,
 Որ յեղակարծ սէր մ'ունին իրարու,
 Կայծակներու պէս իրարո՛ւ կու գան,
 Առանց հաշուելու վաղն ու ապագան,
 Ու կ'երկնեն — խորշի մը մէջ անծանօթ —
 Ի՛նչ հսկայ կեանքեր, անէծքի անօթ . . . :

Թ .

Ապշա՛ծ, սարսափա՛ծ խորհեցայ անխօս,
 Սպարթական հի՛ն բարքին բարբարոս,

Որ խեղդելէն վերջ կը յանձնէր գետին
 Մարդկային տժգոյն տզրուկներն յետին . . .
 Բայց քառսուն դարեր անցեր են արդէն,
 Ու սովրեցանք որ հրէշներն ալ մարդ են .
 Անոնք ալ ունին ըզզացո՛ւմ, հողի՛ ,
 Անոնք ալ ունին իրաւունք կեանքի,
 — Հող չէ՛ թէ ապրին բիւրերու մահով —
 Օրէ՛նքը՝ իրենց վահան ապահով . . .
 Չե՛մ համարձակիր վերցընել մէկդի
 Կարմիր-վարագոյրն որ Օրէնք կ'ըսուի,
 Դիտելու ըմբոստ այն կեանքե՛րն հսկայ,
 Որ բանտերու մէջ, կառափնատի վրայ,
 Կախաղաններո՛վ մեռան անհամար,
 «Կեանքի իրաւո՛ւնք» . . . պողալնուն համար:

ժ .

Երկուքն ալ երկա՛ր, երկա՛ր դիտեցի:
 Այլևըս բընա՛ւ մի խօսիք ինձի
 Արժանիքիս վրայ, ու տարբերութեան,
 Ու ազնուական զարկին վրայ արեան:
 Ահա երկո՛ւքն ալ . անկերպ բզէզներ:
 Շիւղ մը իսկ զիրենք պիտի մեռցընէր:
 Կ'ուզեն անուն տալ . ի՛նչ պէտք անունի . . .
 Իւրաքանչիւրն ալ իր անունն ունի .
 Մին Ո՛յժն է անգութ, միւսն Ստրկութիւն .

Ոյժ չունի՞ր կ'ըսէք խըլէղն անարիւն .
 Ի՞նչ պէտք արիւնի . — անյագ բորենի՛ ,
 Հացի մը փոխան , կարմիր , ծիրանի ,
 Ան պիտի ծըծէ Արիւնը միւսին ,
 Ու պիտի մըխէ ժանիքն իր միսին .
 — Օրէնքը՝ իրեն անքոյթ օթեան :
 Ողջունեցէք զայն , Իշխանն է վաղուան . . . :

ԺԱ .

Ծնրագրած դողդոջ , աչքերըս ձեռքիս ,
 Կուրծքիս տակ զսպել կ'ուզէի հոգիս :
 Հազար նկարներ կ'անցնէին մտքէս :
 Արեան շողոյն մէջ , նոճիներու պէս
 Բի՛ւր կախաղաններ անգութ մեծերու . . .
 Ու հրդեհներու մէջ հեռէ հեռու ,
 Ստրուկներու կո՛ւռ , բարբարո՛ս գունդեր ,
 Որ տաճա՛ր , աստուա՛ծ , կո՛ւռք , իշխա՛ն ու տէ՛ր
 Տապալելով վար , կ'երթային հեռո՛ւ
 Հաւասարութեան սե՛րմը ցանելու ,
 Ու լա՛յն բաշխելու Արգարութի՛ւն , Հա՛ց . . . :
 Այտիս վրայ հրաշէկ արցունք մը դողաց .
 Աչքերըս բացի , տեսիլք էր միայն .
 Ամէնքն ալ գացած՝ ժամն էր լռելեայն . . . :
 Ու ե՛ս ալ գացի՛ իմ սուգիս դարման՝
 Հաւասարութեան դաշտը — գերեզման . . .

ԳԻՒՂԱԿԱՆ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Ա.

Եկեղեցիէն մինչև գերեզման
 Տանող ճամբուն վրայ, քարի մը վրան
 Նստեցայ տրտում, ու լո՛ւռ դիտեցի
 — Հոգևոյս ծարաւո՛վը արեւելքի —
 Հեռուներն հանդա՛րտ, հեռուները լա՛յն,
 Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք, լռելեա՛յն:
 Հո՛ն, երկինքներու տակ յաւէտ ծա՛ւի.
 Առա՛նց ժպիտի ու առա՛նց ցաւի,
 Կ՛ապրէին մարդե՛ր, մըջիւններ, բոյսե՛ր...
 Հոն չէին ճանչնար ո՛չ կըռիւ, ո՛չ սէր:
 Հոն Անշարժութեան օրէնքին հըլու,
 Առա՛նց աճելու, առա՛նց նուաճելու,
 Հազար դարերու ու անհուններու
 Մտերմութեան մէջ կ՛ապրէին, — հեռո՛ւ
 Սէ՛գ Արեմուտքէն ու հեզներով զա՛յն...
 Հեռուները ջի՛նջ, միսթի՛ք, լռելեա՛յն...

Բ .

Ու հո՛ն, անուրջի մը մէջ անսահման,
 Երկիրը իբրև անհո՛ւն խնկաման,
 Իր ձանձրոյթը — լայն աղօթքի մը պէս —
 Անըչտա՛պ, անխռո՛վ կը մխար կարծես... :
 Ու հո՛ն, հեռաւոր հորիզոններու
 Անծալ երկինքնե՛րը հեռէ հեռու,
 Կը տեղային վար՝ օրհնութեան մը պէս՝
 Ոսկեփողի լայն անձրև մը կարծես... :
 Ու հոն արևուն գունդին մէջ անչէջ,
 Ու ծածա՛ն — ծածա՛ն ցորեններուն մէջ,
 Ու խրճիթներու բոյնին մէջ համակ,
 Աւերակներու սուգին մէջ ճերմակ,
 Բա՛ն մը կար կեանքէն անջատ, կեանքէն վե՛ր,
 Բա՛ն մը որ կեանքէն բնա՛ւ չէր ազդուեր,
 Որ կը նմանէր Երէկին, վաղուան... :
 Այդ՝ Մահուան իսկ մէջ ժխտումն էր Մահուան... :

Գ .

Ասոր համար երբ միտքն Արևմուտքին՝
 Կեանք բառին առջե՛ւը զարմացազին
 Հարցական նըշան մը կը դընէ նենգ... :
 Մենք կախման երեք կէտեր կը դնենք... :
 Ու երբ կը վազեն անոնք տենդազին,
 Թւանըշաններով կը լուծեն հոգին,

Կը քննեն Երկինքն ու աստուածը, մենք
 Մեր կախման երեք կէտը կ'երազենք... :
 Ու երբ կը խրոխտան անոնք, մենք կու լանք,
 Ա՛խ, որովհետեւ ի՛նչ որ ալ ըլլանք,
 Գըլուխնիս երկինք, ոտքերնուս տակ հող,
 Այգին ու ցայգին միջև տատանող
 Օրօրոցներ ենք... : Ու ինչ որ անշէ՛ջ
 է, պիտի շիջի շիրմին մութին մէջ... :
 — Լացը վերյիշում մըն է լռելեայն,
 Թէ ի՛նչ ալ ըլլանք, մարդեր ենք մի՛այն... :

Դ.

Այսպէս ապրեցան, ու այսպէս կ'ապրին
 Բոլոր որդիները Արևելքին :
 Խուճկի՛, կնդրուկի՛ ծոցը լռակեաց,
 Իրենց հոգիին անծանօթ մընաց
 Պոռճ'տ Դիտութեանց շեփորը սփեատ,
 Ու սուտ Փառքերու ծածկոյթն հաստաբետ... :
 Անոնք ըստացան, առա՛նց ուզելու... :
 Ու կեանքէն անցան՝ առա՛նց յուզելու
 Անոր մութ յատակը աչքէ անտես,
 — Մովուն վրայ սահող լճ'ու թեճակին պէս... :
 Անոնք գինովցան, առանց քննելու... :
 Ու լացի՛ն՝ սրտի պէտքի մը հլճ'... :
 Անոնք խոկացին Եդեմն. ու ծնան

Անէութեան մեծ հսկան — Նիրվանան,
 Ու երազատես Նազովրեցին հեզ...
 — Ու Երկունքը հեշտ էր Մահուան մը պէս...

Ե .

Անոնք նայեցան հեռէ՛ն՝ մարդկային
 Յառաջդիմութեան կուռ մեքենային,
 Ինչպէս անտառին ծո՛ցը ամայի,
 Ծերունի եղնիկն հանդա՛րտ կը նայի
 Տքացո՛ղ, շաչո՛ղ սև շոքեկառքին՝
 Լա՛յն «Ինչո՞ւ համար» մը զարմացագին
 Թարթելով աչքին մէջ երազահալ... :
 — Ինչո՞ւ ըշտապել. չէ՞ որ ամէ՛նքս ալ,
 Ոմանք հե ի հե, ու ոմանք դանդաղ,
 Անվըրի՛ պօրէն պիտի հասնինք Մահ...
 Կեանքն է այս. միշտ սուտ սուտի ետեւէ .
 Մէկը հազի՛ւ թէ միւսին չափ տեւէ... :
 Շառաչող ծովուն ալիքներուն պէս,
 Կը ծնինք ամէնքս, կը բարձրանանք վէս,
 Բայց հազի՛ւ առեն մը կայ փրփրեչո՛ւ... :
 Պէտք է կորսըւիլ. կորսըւի՛նք հըլո՛ւ... :

Ձ .

Ու այսպէ՛ս պիտի կորչի ամէն բան... :
 — Ժայռին վրայ նստած՝ դիտեցի ճամբան,

Դեղին Փռչիի յուսահատ ճամբան,
 Խո՛ւլ «Երեկ»ներու պատմի՛չը անբան... :
 Ա՛խ, այդ գալարուո՛ղ, չի հատնո՛ղ, խոպա՛ն,
 Արևուն ծագէն ի մո՛ւտքն՝ անխափա՛ն
 Երկարող վտի՛տ, բարեկամ ճամբան,
 Ծընող Մարդկութեան առաջին օրբա՛ն,
 Որուն ապալեր իրանին վըրան,
 Հիմալայայի սարէն մինչ Իրան,
 Ու Արարատէն մի՛նչև Վոսփորոս,
 Մինչե՛ւ Դանուբի ակերն մշտահո՛ս,
 Ու մինչե՛ւ չորս ծագը Արևմտեան,
 Գացին առաջին հայերն Մարդկութեան,
 Այրող Արևուն գունդին տակ, խաղա՛ղ,
 Ճռացընելո՛վ կառքերնին դանդա՛ղ... :

Է.

Առաջին անգամ ըլլալով հառա՛չ
 Մը արձակեցի այդ ճամբուն առաջ... :
 Սոսկացի՝ իրմէն. ու ափ մը փոշի
 Առի, մարդու մը նըման որ կ'ապչի... :
 Բա՛յց ինչ կիկլոպներ, իբրև թէ անշէ՛ջ
 Ի՛նչ ազգեր, կեանքի՛ր այդ փռչիին մէջ :
 Ի՛նչ արեան լիճեր, քանի՛ ոսկորներ
 Դարերու մէջ հոն փռչի են դարձեր... :
 — Դիտեցի ուշով. զի՛ս ճանչցայ հոն շուտ. —
 Նախ քարայրներու բնակիչ՝ մազուտ,

Յետոյ ասպազէն նետածիզ մը սէգ,
 Յետոյ թագաւոր մը — եթէ կ'ուզէք,
 Յետոյ ամիլուած գլխով մէկ գերի,
 Յետոյ թրուպատուր մ'որ կը դեգերի...
 Ու հիմա տժգոյն խեղճ մը դող ի դող
 Ո՛չ մարդ, ո՛չ աստուած, ու ո՛չ իսկ քերթող... :

Ը.

Հո՛ն ճանչցայ նաև ծեր Սողոմոնին
 Հալւէ բեռցըւած կարաւաններն հին...
 Գանգէսէն բոյրի, թանկագին քարի,
 Ու կարմիր Մովէն ալ ամէն տարի
 Ուղտերով կրուած պերճանքները բուստ,
 Դամասկի մետաքս բեհեզն ալ հագուստ,
 Արքաներու ձօն՝ Գլէօբաթրային... :
 Ու վերապրեցայ հոն եդեմային
 Ու գինովցընող հըրաշքը չքնաղ
 Շամիրամի պերճ պարտէզին առկախ...
 Հո՛ն, այդ փոշիին մէջ խօսեցուցի
 Տարաբաղդ Անդուանն Հըռովմայեցի
 Որ վահանն իրեն ծախեց Տուփանքին... :
 Հո՛ն, խօսեցուցի նաև տխրագին
 Ժողովուրդներ որ մեռան անհամար,
 Չեմ գիտեր ո՛ր մէկ Արքային համար... :

Թ.

... Յանկարծ ծանրը թե մը զարկաւ ուսիս :

Հին երազներէն արթնցաւ հոգիս .
 Ու տեսաւ տարեց մշակ մը տժգոյն :
 — Ո՞վ ես դուն : — Անունս է Աշխատութիւն . . . :
 — Ի՞նչ կ'ընես այսպէս : — Կը մուրամ . . . հծծեց .
 Ու լճու հեռացաւ , մինչ ես դառնահեծ
 Գացի ետեւէն մինչև իրեն տուն . . . :
 Գետնի անկողնի մը վըրայ , արթո՛ւն ,
 Երկարած նիհա՛ր իր կինն հոգևար ,
 Ծեծուած անասնի մը պէս կը հևար . . .
 Ու մինչ գնաց հինգ խլէզներէն մին ,
 Աթոռի պէս բա՛ն մը ճարելու հին ,
 — « Հաց չի կայ , կ'ըսէր հայրիկը ինծի ,
 « Մի քանի օ՛ր է չեմ երթար գործի ,
 « Կը տեսնես , վերջին օրերն են գուցէ . . .
 « Առանց ինձ , աչերն ո՞վ պիտի գոցէ . . . »

ժ .

Ու կինը բարի կը նայէր իրեն ,
 Ինչպէս կը նայի մարդ անա՛սնօրէն
 Իրեն Աստուծուն . . . : Ախ , որովհետև
 Իր կենակցութեան ժամը կարճատև
 Սիրալի՛ր եղաւ . կռիւ չունեցան
 Ո՛չ դրամօժիտի , ո՛չ ժառանգութեան . . . :
 Ժըրաջան տիկին , միշտ իր հարկին տակ . . .
 Թանը առատ էր , անկողինը տաք . . .
 Ու քիչ օրէն երբ Տիրոջ հրամանով ,

Հողին տակ պիտի թաղուէ՛ր ապահով,
 Կը խրատէր էրկան՝ առնել գիւղակին
 Այսի՛նչ ժրաջան աղջիկն իբրև կին,
 Որովհետև խեղճ կինը կը յուսար
 Թէ ան կը նայէր աչքով հաւասար
 Թէ՛ իր ամուսնոյն, թէ իր խորթերուն
 Եւ թէ՛ գոմի իր փոքրիկ հորթերուն... :

ԺԱ .

Դուրս ելայ տունէն, մարմինըս փուշ փուշ .
 Խորհեցայ կեանքին իմաստին ապո՛ւշ,
 Թէ ինչպէ՛ս ստրուկ կիրքերու հըլո՛ւշ,
 Մարդըս աւելի՛ վարժ է մուրալու,
 Քան պապենական օրհնած դանակով .
 Քի՛չ մը վախցընել — գոնէ՛ կատակով... —
 Մեր ոսկեծոյլ նո՛ր Աստուածները կո՛ւ... :
 Խորհեցայ թէ Դրամ միապետին քով՝
 Ի՛նչ տժգոյն ըմբիշ մ'է Աշխատութիւն... :
 Խորհեցայ անգա՛մ մըն ալ անարիւն
 Այն բո՛ւռ մը «Նորին Վրսեմուքեանց» վրա՛յ
 Որոնց շընորհիւ երկիր կը դառնայ... :
 Խորհեցայ Ոյժին վըրայ մըտովի,
 Ու ա՛յն հտպիտին որ Օրէնք կ'ըսուի... :
 Ու գացի ես լուռ, իմ սուգիս դարմա՛ն,
 Հաւասարութեան դաշտը — Գերեզման... :

ԳԻՒՂԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆ ՄԷՋ

Ա .

Սկեպտիկ ժպտով մը դանդաղագին
 Երբ մարդ ըմպած է մըրո՛ւրը կեանքին,
 Երբ ծառայած է կամքով կորովի՝
 Այն մեծ վարպետին որ Վիշտ կը կոչուի,
 Ճանչցած է դողդոջ դշխոյն որ Սէրն է,
 Ազգաց լ'անհատին Պատմութեան դժնէ
 Նայած է անգամ մը միւս երեսին,
 Ճանչցած է մարդուն Գիտութիւնը սին,
 Արուեստն յաւակնոտ, սիրտն ամբարտաւան,
 Սո՛ւզը Երէկին, Երկիւզը Վաղուան...
 Ու ճշմարտութեան հոգին ծարաւի
 Զննած է երկնից պարապը ծաւի
 — Հի՛ն աստուածներու վիհն այդ մշտակա՛յ, —
 Ա՛յդ մարդուն համար ուրիշ վայր չի կա՛յ
 Աւելի՛ քաղցրիկ հեշտանքով յըզի,
 Գնն գերեզմաննոց մ'աղքատիկ գիւղի...

Բ .

Լո՛ւռ նստած քարի մը վըրայ տապան ,
 Դիտեցի լռի՛ն այդ վայրը խոպան ,
 Ու զո՛ւր խորհեցայ թէ այս այն վա՛յրն է
 Ուր վաճառական Աստուած մը դժնէ
 Չարը կը պատժէ անսահման վախով ,
 Բարւոյն շնորհելով դրախտ մ'ապահով . . . :
 Ընկղմած ծոցն այդ Մահուան Քաղաքին ,
 Չուր խորհեցայ թէ անմա՛հ էր հոգին . . . :
 Անմա՛հ . բայց չէ՞ որ երկնից մէջ գարնան
 Բիւր գիսաւորներ մոխիր կը դառնան .
 Աստղեր կը վառին , աստղեր կը սառչին .
 Կը լռէ ցայգին պլպուլը վերջին ,
 Բոյս ու կենդանի կ'իյնան անկենդա՛ն .
 Ամէն , ամէն բան մահուան զոհ կ'երթան . . .
 Ու երկնքի հիւր՝ լոկ մա՛րդն է տըխուր . . . :
 Անմա՛հ , մինչև ե՞րբ , և ինչպէ՞ս , և ո՞ւր . . . :

Գ .

Բայց ուսկէ՞ կու գայ այն Յոյսը մարդուն ,
 Որ մեծ – ցայգին մէջ միայնա՛կ արթուն
 Կ'ուզէ հսկել՝ երբ իր ոսկորոտին
 Երկու ափ հողի ներքև կ'անհետին :
 Ու ինչպէ՞ս դիակը փտելէ վերջ ,
 Մարդ յամառօրէ՛ն , Մահուա՛ն ծոցին մէջ ,

Անմահութեան Յոյս մըն է գիւցեր... :
 — Անշո՛ւշտ սարերու երբ եղնիկը ծեր
 կը նայի անդունդն ի վար անյատակ...
 Երբ գայլը փոքրիկ՝ մացառներու տակ՝
 կը դիտէ մա՛հն իր գնդակահար հօր...
 Երբ ովկէանին վրայ անգնդախոր՝
 Շընագայլն հսկա՛յ կը թաւալի լո՛ւռ...
 Վերջալոյսին դէմ Առիւծը տխուր՝
 Երբ կը մըռընչէ դաշտին մէջ խոպան...
 — Անմահութեա՛ն վրայ չէ՛ որ կը խոկան... :

Դ.

Նո՛յն իսկ Մարդուն մո՛ւթ նախահայրն Ադամ,
 Անգէ՛ն, անպաշտպա՛ն այդ խեղճն հաշմանդամ,
 Նետուած ոյժերո՛ւ միջեւ ահագին,
 Ծա՛տ քիչ հաշիւի կ'առնէր իր հոգին,
 Երբ պտուղի մը համար, անվեհե՛ր,
 Անմահութենէն կը հըրաժարէր... :
 Բայց ահա անբա՛ւ միջոց մ'է անցեր.
 Յիսուն ծանրածանր դարով՝ Մարդը ծե՛ր,
 Որ իր ուղեղին գրգումին հըլու,
 Հասեր է ամէ՛ն ինչ զըրաւելու,
 Ստրուկներ գտեր է անասնոց մէջ,
 Մնացածը զարկեր, հալածեր անվե՛րջ,
 Աստուածներ շիներ է նախ անհամար,
 Յետոյ ամէ՛նքն ալ այրելու համար... :

Տիրե՛ր է Բնութեան Ոյժին ահագին,
Կը տենչայ իշխել արդ ժամանակին . . . :

Ե .

Ա՛խ, անմահ ըլլալ . . . : Ապրի՛լ յաւիտեան .
Իսպա՛ռ չունենալ ո՛չ դար, ո՛չ վայրկեան .
Ժամանակի՛ն պէս, ժամանակին մէջ,
Տքա՛լ, տառապի՛ր, բայց ապրի՛ր անվերջ . . . :
Սիրտը արիւնոտ, մարմինը հիւանդ,
Յոգնաբե՛կ, ի՛նչ փոյթ, ապրիլ մանաւանդ . . . :
Շիւղ մ'ըլլայ մարգի, ի՛ր մը լռելեայն,
Բայց յաւիտենին մէջ ապրի՛ր միայն . . . :
Քար մ'ըլլալ անարգ, ապառաժ մ'անխօս,
Գէթ նիհար առուակ մ'ըլլալ մշտահոս,
Ծա՛ռ մը դարաւոր, մետա՛ղ մը միայն
Անմի՛տ, անզգա՛յ. չը մեռնի՛ր սակայն . . . :
— Աստուածացեալդ Մա՛րդ, ամօ՛թ քեզ, ամօթ,
Մու՛թ, ամբարտաւան խրոխտութեանց անօ՛թ,
Դեռ ամէ՛ն գինով կը կառչիս հողին . . . :
Նայէիր աշնան տերեւին դեղին . . . :

Զ .

Ու երբ ըսեն թէ գիտութիւնը նոր
Այրեց հի՛ն, փոշո՛տ գիրքերը բոլոր,
Թէ նիւթ կայ միայն, Հոգին չէ՛ անմահ,
Հոգին չը կա՛յ իսկ. — Մի հաւատաք, ա՛հ :

Վճիտ մոմիաներն հին Եգիպտոսին,
 Դարերու գաղտնի՛քը թող ձեզ խօսին... :
 Նայուածք մ'ուղղեցէք գէպի Պարթենոն,
 Նոր Անմահներն են որ կը խրոխտան հո՛ն :
 Ու է՛ն չոր գիտունն իսկ՝ կրօնքին օտար՝
 Քարէ արձանի մը հոգին կու տար... :
 Ա՛խ, կեանքի, մահուան կըռիւն անզգամ... :
 — Ու անշուշտ՝ մենէ է՛ն խելօքն անգամ
 Երբ տեսնէր Մահն որ պաշտօնին հըլո՛ւ
 Կու գար սիրելին մենէ խլելու,
 Թէ Աստուած ըլլար ան, թէ Սատանայ,
 Շան մը պէս պիտի խեղդէր անխընայ... :

է.

Շա՛ն մը պէս... ա՛խ, շատ չի պիտի ըլլար... :
 — Բարէ՛, կը յիշեմ թէ ինչպէ՛ս կու լար,
 Ինչպէ՛ս կը խածնէր սնար ու սաւան,
 Ինչպէ՛ս կը կանչէր արե՛ւը վաղուան
 Որ ա՛լ չի պիտի գար երբեք իրեն.
 Ու ինչպէ՛ս կ'ուզէր խելայեղօրէն
 Մարմինն անկողնէն քաշել անհընա՛ր,
 Ու ինչպէ՛ս պատէն մագլիլ կը ջանա՛ր,
 Սարսափած աչքերն ուղղելով ինձի...
 — « Ես եմ, բարեկամդ, աւա՛ղ... » գոչեցի,
 Բայց ան աչքերուս խրեց իր մատներ,
 Զի ես կ'ապրէի, մինչ ինք կը մեռնէր... :

— Հասկցա՛յ, ընկե՛ր. լեզուդ վերջնագոյն,
 Բայց մահէն փախչող վատ մ'էի տժգոյն,
 Զի Սէրն իսկ սո՛ւտ է, մարդերը մա՛րդ են...
 Ու մեր երկուքին մէջ մա՛հն էր արդէն... :

Ը .

Ինչպէս նետահար թռչունն մ'որ յետին
 Ճիգերն իր կ'ընէ կառչելու օդին...
 Ծովամոյնն ինչպէս կը փարի վէտ վէտ
 Խլեակի մը որ կ'ընկղմի իր հետ...
 Ինչպէս սարի հէգ արծիւն հոգեվար
 Կը կառչի ժայռին որ չը սահի վա՛ր...
 Այնպէս մատներուն ճիգովը յետին
 Կ'ուզէր բռնըւիլ սնարին պատին... :
 Անկողին գամուած, փտիլ, ցաւիլ, լալ,
 Դարերով՝ ի՛նչ լաւ... Բայց մեռնի՛լ, չ'ըլլա՛լ... :
 Ահեզ կը մղէր պայքարն անիրաւ
 Երբ բերնէն արեան ուղիս մը գայն տարաւ... :
 Այդ շքեղ սրտէն, կեանքէն ի՛նչ մընաց. —
 — «Ե՛Ս» կ'ըսէ աճիւնն, — «Ե՛Ս» կ'ըսէ Աստուած :
 Ու ե՛ս, իր գեղջուկ քարին վրայ կու գամ
 Յանգի զարնելու տաղերս անզգամ... :

Թ .

Դիտեցի գողարիկ այդ վայրը բողբոջ,
 Ու ես ակամայ խորհեցայ գողգոջ

Մերուկ Տանթէյի ահեղ դժոխքին,
 Ուր յիմար վազքի մը մէջ մոլեգին,
 Այրող խաւարին, փրփրող արեան մէջ,
 Երախնին բացած, անբարբա՛ռ, անվե՛րջ,
 Տժգոյն հերոսներ պար կը դառնային... :
 Խորհեցայ նաև սէգ Սատանային,
 Ձոր Միլթօն, աչքով կոյր, հողուով արթուն,
 Իշխա՛ն հուշակեց յաղթըւած Մարդուն,
 Որ երեքժանի ցուպով կ'ըբօսնէր
 Անհանգիստ ընել դատարկ գլուխներ... :
 Ձը մոռցայ նաև մտածել ահեղ
 Օրուան՝ երբ փողին ձայնէն խելայեղ,
 Կմախքներ երկի՛նք կը թռչին արդէն... :
 — Ինչ որ քիչ մը շատ խնդրել է մարդէն... :

ժ .

Մարդուն տանջըւած խղճմտանքը վա՛տ
 Ի՛նչ մղձաւանջներ երկնեց յուսահա՛տ,
 Ի՛նչ սաղայելեան ցաւեր անհամար,
 Ի՛նչ եգեմ՝ մեր գարշ դիակին համար... :
 — Հո՛ն, ոչի՛նչ կայ մութ, ոչի՛նչ կայ դժնէ :
 Ան դանդա՛ղ խմուած պարապ գաւաթն է,
 Առա՛նց քանդակի, առա՛նց սուտ զարդի,
 Առանց նորագիւտ հնարքներու արդի,
 Որ տիտղոս, տարիք կ'անմահացընեն... :
 Վարդի թուփ մը հոն կ'իյնայ ծարաւէն... :

Ու եթէ-երբեմն որբեր կողկողեն
 Քարի մը տակէն. — Մե՛ր բուն է գիւղին...
 Թէ արչալոյսին ստուեր մը յածի. —
 Իմաստասէր կո՛վ մ'է որ կ'արածի...
 Ու թէ շիրիմներ պեղուին անընդհատ. —
 Բորենի մըն է, կամ քերթող մը վատ... :

ԺԱ .

... Ինկայ ու մտիկ ըրի սգահար,
 Զայնի մ'օր քարին ներքե կը դողար. —
 — Ե՛ս եմ, Ե՛ս եմ, Ե՛ս քեզ եղբայր, քեզ քո՛յր.
 Ե՛ս տիեզերքին հսկայ ա՛չքը կո՛յր.
 Ե՛ս սկիզբ և վերջ; երա՛խ ու արգանդ.
 Ե՛ս վի՛հ անյատակ ու ծոց արգաւանդ.
 Ե ս ա՛յն եմ որ քեզ ծընաւ, նաև ա՛յն
 Զոր պիտի ծընիս: Ե՛ս ձայն լռելեայն.
 Ե՛ս օրհնութիւնն եմ, բարիքը վերջին,
 Ե՛ս ա՛յն եմ որմէ ամէնք կը փախչին
 Եւ որմէ փախչիլ չի կա՛յ: Հաւասար
 Ներուամն եմ անոր որ ինձ կը յուսար,
 Անո՛ր որ հեզնեց զիս առանց խղճի:
 Ամէնո՛ւն ալ վրայ իմ մարգըս կ'աճի...:
 Մանգաղս ո՞վ պիտի համբուրէր անա՛հ...:
 — Ինձ ԱՍՏՈՒԱԾ ըսին, իմ անունս է ՄԱ՛Հ... :

1909, 1, օգան

ՍԻՐՈՅ ԳԻՐՔԸ

ԻՆՁՈՒ

Ինչո՞ւ, ինչո՞ւ զիս սիրեցիր,
 Փոքրի՛կ աղջիկ, քեզի մե՛ղք էր.
 Փոքրիկ ծոցիդ թիթե՛ռ պէտք էր,
 Դուն ծե՛ր արծիւ մը բանտեցիր:

Կապոյտ աչւիդ երբոր բացիր,
 Կապո՛յտ աղջիկ՝ պլպուլն երգէ՛ր.
 Քե՛զ ալ սիրոյ մրմունջ պէտք էր,
 Դուն գուժկան մոռ՛ւնչըս ընտրեցիր...

Ես կ'երթամ մի՛շտ, անծայրածի՛ր,
 Դամբաններ են ոտքիս հետքե՛ր.
 Քեզ սիրոյ մեղմ սի՛ւք մը պէտք էր,
 Դուն փոթորկի՛ն կուրծքըդ բացիր...

Կ'այրի՛ն աչերըդ սևածիր,
 Պիտի մեռնիս, այդպէս մ'ե՛րգեր:
 Քեզի փոքրիկ սէր մը պէտք էր,
 Դուն Սէ՛ր—Աստուածը սիրեցիր...

Մ Ա Ն Ա Զ Գ Ա Ց Ո Ւ Մ

Այսպէ՛ս, այսպէ՛ս... Անո՛յշ, անո՛ւշ Սիրական,
Մօտեցուր մա՛նրը մատներըդ մանկական,
Տաք կոպերո՛ւս, տաք կոպերո՛ւս դժօխքին.
Զգո՛յշ, զգո՛յշ, ա՛խ, չըլլայ որ բորբոքին:

Կուրծքի՛ս հակէ փոքրիկ գլուխդ յաղթական,
Լսէ՛, դեռ հոն հըռընդիւններ, ողբեր կա՞ն,
Լսէ՛, անոյշդ իմ Սիրական: Օհ, անգին
Արբանք մ'է այս որ կը խնկէ իմ հոգին:

Մեռնի՛լ, մեռնիլ... Անմահանալ մահուան մէջ.
Մեռնի՛լ... Կրկիդ գոգն, այսպէ՛ս, մեր սէրն անչէջ
Անհունին մէջ ծառացընել տիրական...:

Մեռնի՛լ...: Կուլա՞ս... , կը խորհէի, սիրակա՛ն,
Թւերուդ մէջ քարանալու հաճոյքին.
Քո՛յր, մահանո՛յշ քոյր, մահագօր, մահագին...:

ՍԻՐՈՅ ՄՐՄՈՒՆՁ

Անոնք գացին, — խորհուրդով ու գաղտնիքով բեռնա-
Գացին նաւերը սիրոյս իմ աչքերուս առջևէն, [ւոր,
Ցըռուկնին վեր, դէպի մո՛ւթ եզերքները հեռաւոր,
Առագաստները գինով՝ մայրամուտի գա՛ղջ հովէն:

Ու տեսայ որ, հինաւուրց դիցունիի պէս աղուոր,
Իրենց ձիւնի անարատ սրբութեան մէջ համօրէն,
Թւերնին վեր, անծանօթ ափունքներու ուխտաւո՛ր,
Անըջանքիս կարապները սահեցա՛ն յամբօրէն...

Իրիկուն է: Կը դիտե՛մ ես լոյժ անհունը ջուրի.
Հովը լռիկ կը պատմէ՛ ինձի յուշքեր երջանիկ.
Ու անպատճա՛մ խորհուրդով անսահման ջուրը կ'ուռի:

Քար ու փրփուր ափին՝ վրայ կը համբուրուին իմ
[առջիս...

Ես կը դիտեմ հեռաւոր հորիզոններն, ուր լըռի՛կ
Գացին նաւերը սիրոյս ու կարապներն անուրջիս:

Անոնք գացին՝ խորհուրդով ու գաղտնիքով բեռնա-
[ւոր...

Ս Ի Ր Ո Յ Ծ Ա Ր Ա Ի

Հծծեց. — «Ծարա՛ւն ունի հոգիս
Աղբիւրներու գէ՛ղ, կարկաչո՛ւն.
Արցունքներու մէջ պաղպաղուն
Զովացնէի հիւանդ հոգիս . . . »

«Ծարա՛ւ, ծարա՛ւն ունի հոգիս
Արշալոյսին գա՛ղջ ծովերուն,
Ծո՛վ-ծո՛վ սիրոյ գա՛ղջ հովերուն,
Տայի թերթերն տառապանքիս . . . »

Իմ ճամբուն վրայ ծըլած հազար
Կո՛յս ծաղիկները կ'ըսէին .
«Ա՛րփ մեր նեկտարը կուսային . . . » —
Կ'անցնէր պարմանն ու կը հազա՛ր . . . »

Ծարաւե՛ր էր : Ծուրթներն անահ
Հըպան ծծել նեկտարն ալէն . . . :
Տեսէ՛ք, Սիրոյ սուրբ բաժակէն
Պարմանն հիւանդ կ'ըմպէ իր Մահ . . . :

Ս Է Ր Ո Վ Ս Է Ր Ո Վ

Սէրով, սէրով խոցեցիր զիս,
 Սիրտըս սէրով խոցեցիր,
 Սիրտըս ջահել՝ վարդի պէս բաց,
 Դագաղի պէս փակեցիր:

Դուն քաղցրութեամբ խոցեցիր զիս,
 Սիրտըս սէրով լափեցիր,
 Սիրտըս ջահել՝ վարդի պէս բաց,
 Մէկ համբոյրով խաբեցիր:

Երգով, վէրքով, օրրեցիր զիս,
 Սըրտիս տատասկ ցանեցիր...
 Ջահել սըրտիս վարդերը բաց,
 Հովին տուիր ցանուցիր...:

Ս Է Ր Ը

Քընարիս եօթն աղիքներէն կանացի
 Եօթը որբուկ հառաչանքներ հանեցի .
 Ես միշտ ժպտիլ կը կարծէի, մի՛շտ լացի . . . :

Սէրն՝ հեթանոս երջանկութի՛ւնն է խաչուած ,
 Սէրն ա՛յն կուռքն է որուն առջև ծնրադրած
 Որբի՛ մը պէս պիտի ողբար ի՛նքն Աստուած . . . :

Սէրը՝ ճերմակ անհունին մէջ կոյր ա՛լն է .
 Սէրը՝ սիրոյ ովսաննան չէ, իր խա՛լն է .
 Իր ցաւերուն ընդդիմացող ո՞ր քաջն է . . . :

Սէրը սէր չէ, մահը մահ չէ, սէրն է մահ,
 Սէրն անդունդին մէջ ընկուկու՛մն է անվա՛խ,
 Սէրն աչքը գոց ցայգաշրջիկն է անահ . . .

Երջանկութեան սեղանին վրայ խրախճան՝
 Բեհեզ, Կարմիր ծածկոյթին տակ պատմուճան՝
 Սէրը կըմա՛խք կոչնականն է դաւաճան . . . :

Սիրե՛լ, սիրուելի . — Ոսկեղինիկ սո՛ւտ աղուոր .
 Սիրե՛լ առանց սիրուելու . — Սո՛ւգ անաւոր .
 Սակայն , աւա՛ղ անսէր կեանքին . — Կեա՞նք է որ . . . :

Կը տեսնե՞ս սա վիհին վըրայ Սէր — ա կը .
 Հազարնե՛ր կուլ է տըւեր այդ Սե՛ւ ա կը ,
 Իր ջուրէն օր մը խենթեցաւ Սեւակը :

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԳԸ

Իմ կեանքըս թող աղաչաւոր ե՛րգ մ'ըլլայ ,
 Եղերակա՛ն ու միամիտ , սե՛ւ ողբերգ .
 Իմ սիրտըս թող անհունին մէջ վէ՛րք մ'ըլլայ ,
 Հսկայական ու տխրօրէն քա՛ղցըր վէրք .
 Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ . . . :

Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական .
 Իմ տրտմութիւնս աստուածներո՛ւ ցաւին պէս .
 Քո՛յր , սրտիս մէջ ի՛նչ խաւարներ , վիհե՛ր կան ,
 Ջոր նայուածքովդ կ'ոսկեղօծես ու կ'օրհնես .
 Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական . . . :

Եկո՛ւր ինձի, լուսնակին պէս գեղեցիկ,
 Եկո՛ւր ինձի, լո՛յս ու ցնծում հեւալով,
 Քու արծաթի շողերուդ մէջ սըլացիկ
 Լուսաւորէ՛ աւերակներըս լալո՛վ.
 Ես Մահն եմ, ե՛կ ինձ կեանքին պէս գեղեցիկ... :

Իմ կեանքըս թող առուին երգին պէս ըլլայ,
 Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւէ՛ժ,
 Իմ կեանքըս թող մո՛ւթ ջրվէժին պէս ըլլայ,
 Ու դէպի քեզ անկում մ'ըլլայ գահավէ՛ժ.
 Իմ կեանքըս թող առուի երգին պէս ըլլայ... :

Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՛ պէս.
 Ուր խաւարներ կը փոթորկին մուկերն.
 Երկու աչերդ՝ աստուածներու սկիհին պէս,
 Տո՛ւր ինձ անոնց մէջ սրբացնել իմ հոգին.
 Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի՛ պէս... :

Եկո՛ւր ինձի, քե՛զ կ'ըղձայ շունչըս անգօր.
 Եկո՛ւր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ,
 Սիրոյ պէս քա՛ղցըր ու Մահուա՛ն պէս հըզօր,
 Գերեզմանիս լացող սիւքի՛ն պէս նըսեմ
 Եկո՛ւր ինձի, քե՛զ կ'ըղձայ շունչըս անգօր... :

Իմ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ,
 Շունչդ ուռեցնէ ծեր առագաստըս անա՛հ.
 Մի՛, մի՛ լըսեր յոգնած հոգիս որ կու լայ,
 Տա՛ր զիս Սիրոյ կղզիներէն դէպի Մահ,
 Իմ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ . . . :

Պ Ա Տ Ա Ս Ի Ա Ն Ը

Պատասխանը դեռ չըզըրեց թղթիկիս,
 Ուր տրտմութեան մը նոպային մէջ գինով՝
 Դըրի ամբողջ իմ սէրս, ամբողջ իմ հոգիս,
 Ու զրկեցի վարանումով, յուզումով:

Ըսի իրեն թէ սիրտս իրմով է առլի,
 Ու գիշերներս իր երազով օրօրո՛ւն.
 Թէ կարօտի վայրկեաններուս դառնալի՛.
 Ես կը սպասեմ վերագարծի՛ օրերուն:

Ըսի իրեն թէ յուշքերըս կը թռչին,
 Կը թեւածին իր պաշտելի դէմքին քով,
 Թէ բաժանման տրտում վայրկեանը վերջին՝
 Աչքերըս դե՛ռ կը պղտորէ արցունքով:

Ըսի թէ ես գինճՎ եմ իր նայուածքին,
 Թէ կախարդող իր աչքերուն մէջ ծաւի՝
 Յաւէտ սուզի՛լ կ'ուզէի ես տրտմագին,
 Շրթունքներըս իր համբոյրի՛ն ծարաւի . . . :

Ու ըսի դեռ ինչ որ ունէր՝ ախտաւոր՝
 Ստուերամու բանաստեղծի՛ իմ հոգիս,
 Պաշտամունքներս, արտասուքներըս բոլոր . . . :
 — Պատասխանը դեռ չը գըրեց թղթիկիս :

Կը կարծէի՛ թէ յուզումէն պիտի լա՛ր .
 Ու նամակըս պիտի տանէր շրթունքին,
 Կը կարծէի՛ . — այնքա՛ն գորով ու սէր կար
 Իր հրաժեշտի համբոյրին մէջ՝ տենդագի՛ն :

Թերևս հեզնեց իմ հառաչներըս երկչոտ,
 Որոնց ամբո՛ղջ հոգիս յանձնել կարծեցի .
 Բառերուս վրայ թերևս խնդա՛ց ան պչրոտ
 Իր նենգամիտ ժըպիտովը կանացի . . . :

Ու մըտածե՛լ թէ շատ չանցաւ այն օրէն
 Ուր պաշտու՛միս առարկայ, դեռ ան քովս էր,
 Երբ աչքերը կէս մը փակած, մեղմօրէն,
 Երջանկութեան քաղցր երազներ՛ր կը հիւսէր :

Ու մըտածե՛լ բաժանումի իր յետին,
 Աւա՛ղ, յետին համբոյրին վրայ սիրակէզ,
 Երբ անկարող իշխելու ի՛նք իր սրտին՝
 Գլուխը կուրծքիս՝ կը հեծկտա՛ր տըղու պէս . . . :

Ո՛վ կընոջ սիրտ, պաշտամունքով, արցունքով
 Ու կեղծիքով հրաշակերտուած սի՛րտ աղուոր,
 Ուր կարկաչող սիրոյ չքնա՛ղ ակին քով՝
 Մոռացութեան անդո՛ւնդը կայ ահաւոր . . . :

Ե Կ Ո՛ Ի Ր

Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներէն անուրջիս,
 Սրտիս ջահերն այրեցի քեզ ի հանդէ՛ս .
 Վերջի՛ն անցորդ տառապանքի կամուրջիս,
 Երգի մը պէս, քրոջ մը պէս, մօր մը պէս
 Եկո՛ւր, եկո՛ւր ճամբաներէն անուրջիս . . . :

Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛յ ու գերի՛ .
 Ե՛ս մեղապարտ անօթը Սո՛ւրբ համբոյրիդ .
 Հէքս աղօթքի պէս դէմքիդ շուրջ գեգերի՛,
 Պաշտամունքիդ ես խնկանօ՛թ միամիտ .
 Եկո՛ւր, ես քո՛ւկդ եմ, քեզ արքա՛յ ու գերի՛ . . . :

Քու տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողդոջ .
 Եւ դուն մարմի՛նն ես անմարմին երգերուս ,
 Խենթեցընող յաւերժահա՛րսը բողբոջ ,
 Տո՛ղ՝ մահացնող սրտի հազա՛ր վէրքերուս ,
 Սուրբ տաճարիդ ես քուրմ-երգիչն եմ դողդոջ . . . :

Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս ,
 Քե՛զ երգելէն արիւնեցան , խենթեցա՛ն
 Եօթը վէրքերն իմ բարունակ սրինգիս ,
 Սրտիդ ճամբուն վրայ մերկ ոտներս այրեցա՛ն .
 Քո՛ւ անունովդ պատանքեցի ծե՛ր հոգիս . . . :

Բա՛ց ինձ կարմիր շրթներդ , կարմիր վէրքի պէս .
 Բա՛ց ինձ թեւերդ , յաւերժական բանտ անո՛յշ .
 Բա՛ց ինձ հոգւոյդ հըրաշքներուն մուտքն անտես ,
 Ու տո՛ւր ինձ հոն անէանալ լո՛ւռ , անյո՛ւշ .
 Բա՛ց ինձ կարմիր շրթներդ , լայն վէրքի պէս . . . :

Ահա՛ թռչնած շուշաններովս քե՛զ կուգամ .
 Ահա՛ ոտքի՛դ տակ փառքիս խեղճ սարգենին .
 Ահա՛ սրտիս խոպան դաշտն ուր մի՛ անգամ
 Չը ծաղկեցաւ սիրոյս նիհա՛ր վարդենին .
 Ահա՛ իմ սև շուշաններովս քե՛զ կուգամ . . . :

Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթողին .
 Ո՛վ չի սիրեր պիտի մեռնի առ յաւէտ .
 Սէրը պէ՛տքն է, երա՛զն է, կեա՛նքն է կեանքին .
 Սէրը Մահուան մէջ Անուրջն է արփաւէտ .
 Եկո՛ւր, եկո՛ւր, եկուր սիրե՛նք կաթողին .

ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ՇԷՔԵԱԹ

Ահաւասիկ որ կ'ըզձամ քեզ անդադրո՛ւմ .
 Չա՛ր, վիրաւոր, ու անիծուա՛ծ ու տրտո՛ւմ,
 Ահաւասիկ որ կը սիրե՛մ ես քեզի . . . :

Ո՛վ քու ըստուերըդ պտտցուց իմ հոգւոյս
 Անարձագանգ դամբաններուն մէջ անյո՛յս,
 Ու երգմնեցուց որ գեռ սիրեմ ես քեզի . . . :

Թող այս զիշեր հոգիիս մէջ երգ մը լա՛յ,
 Ի՛նչ փոյթ թէ չա՛ր, թող այդ երգը քո՛ւկդ ըլլայ,
 Որովհետև, քո՛յր, կը սիրեմ ես քեզի . . . :

Ապրի՞լ, ահեղ ճակատագրին մի՛շտ հլու,
 Մեռնի՞լ, առանց վայրկեան մը քո՛ւկդ ըլլալու,
 Ըսէ՛ ինձ, քո՛յր, ախ, կը սիրեմ ես քեզի . . . :

Ահա՛ հոգիս շիրիմօրէն փա՛կ ու չա՛ր .
 Ահա՛ հոգիս զոր դուն սիրել չը զիջար .
 Ահա հոգիս որ կը սիրէ՛ դեռ քեզի . . . :

Ոտքերուդ տակ կոխտուելէ յետոյ ալ
 Ինչո՞ւ քայլերըդ համբուրե՛լ, գուրգուրա՛լ .
 Ինչո՞ւ մահուան սև բաժակէդ սէ՛ր մուրա՛լ . . .

Ներէի՛ր ինձ, քո՛յր, կը սիրե՛մ ես քեզի . . . :

ՏԺԳՈՅՆ ԵՐԳԸ

Կ'ուզէի լալ ես իմ սէրէս,
 Հեզնեցիր զիս, ու ժպտերե՛ս .
 Թերթ Թերթ հոգիս փետտեցիր
 Իմ Սիրակա՛նըս, աւա՛ղ . . . :

«Երգե՛նք, երգե՛նք, ինձ հծծեցիր,
 «Երգը սիրոյն ջինջ բարձունքն է :»
 — Քերթողին երգն իր արցունքն է,
 Իմ Սիրակա՛նըս, աւա՛ղ . . . :

Գացի՛ր, գընա՛ : Իմ մուրրուն
 Ճամբուս վըրայ, քու շրթներուն

Վէ՛ս ապառա՛ժը կանգնեցիր ;
Ի՞մ Սիրակա՛նըս, աւա՛ղ . . . :

Օր մը թեքթե՛րըդ ցանուցիք
Երբ թարշամին, ու դուն կըքիս,
Քեզ համա՛ր ալ կուլայ հոգիս,
Ի՞մ Սիրականըս, աւա՛ղ . . . :

ԵՐԳ ԵՐԳՈՑ

Երա՞զ, տեսի՞լ, անգոյ ըստուե՞ր մ'անհոգի,
Ճառագայթի, փրփոնրի խա՞ղ մը տարտամ.
Քմայապաշտ ծաղի՞կ մ'արդեօք ցընորքի.
Քու մշուչոտ գիծերուդ ի՛նչ անուն տամ.
Երա՞զ, տեսի՞լ, անգոյ ըստուե՞ր մ'անհոգի:

Քու կապոյտըդ վճիտ, աղուօր ջուրերու
Եթերային անըջանքի՛ն է հանգոյն.
Ու քու կարմիրըդ՝ Պէնկալեան վարդերու
Երազամած կարմըրութեան պէս տժգո՛յն.
Քոզն աչերուդ կապո՛յտն ունիս ջուրերու:

Արցունքիդ մէջ նայեաթներ պա՛ր կը դառնան:
Այդ ի՛նչ հեշտանք որ շրթներուդ մէջ կ'ըմպես.

Շունչըդ գինո՛վ է հովերու պէս գարնան .
 Զայնըդ տարփոտ՝ աղբիւրներու երգին պէս . . . :
 Արցունքիդ մէջ նայեաթներ պար կը դառնան :

Կը հմայե՞ն զիս քու աչքերդ , կը շոյե՞ն .
 Ու մարմինէդ ծորող խունկը մեղաւոր ,
 Աւելի քա՛ղցր է Քանանու գինիէն . . . :
 Հազարբուրեան այս պատարա՞գն է , աղուո՛ր ,
 Թէ լո՛յծ աչքերդ որ մուծ հոգիս կը շոյեն :

Հրաշագո՛յ . . . Ո՛հ քու անդրիդ բիւրեղէ ,
 Սրունքներուդ սարսուացող ձիւնն հրաշէ՛կ ,
 Ու անանո՛ւն ցուքը որ քեզ կ'ողողէ ,
 Մորթիդ թաքո՛ւն գանգուրներուն խուրճը շէկ . . . :
 Հրաշագո՛յ . . . ո՛հ քու իրանդ բիւրեղէ :

Տենչերուս վրայ պիտի հսկեմ այս գիշեր
 Որ բազուկնե՛րըս չը փնտռե՞ն քեզ իմ քով .
 Սիրտս ո՛ւր էր որ կուրծքէդ ոչինչ չը յիշե՛ր ,
 Մինչև առտու պիտի հալէ՛ր արցունքով . . . :
 Կիրքերուս վրայ պիտի հսկեմ այս գիշեր :

Ի զո՛ւր : Հոգիս թաղուի՛լ կ'ուզէ յուլօրէն
 Ստինքներուդ մտերմութեանը մէջ կոյս .
 Ու անութիդ որոշ մէկ ծա՛լքը նորէն
 Գիտեմ որ զիս պիտի տանջէ մինչև լոյս . . . :
 Քու մէ՛ջդ հոգիս թաղուիլ կ'ուզէ յուլօրէն :

Տժգոյն աղջիկ հիւսիսայգի աչքերով,
 Կոպերուդ վրայ ու բիբերուդ մէջ խոնաւ
 Այդ ի՛նչ անճառ երանութիւն, ի՛նչ գորով...
 Ոչ մէկ արգանդ քե՛զ պէս հրաշք չըծնա՛ւ,
 Տժգո՛յն աղջիկ հիւսիսայգի աչքերով:

Գ Ի Ն Ո Վ Ա Ս Է Ր

Դուն Հըրա՛ւջքն ես, դուն Երազն ես, դուն Սէրն ես.
 Տարաշխարհի չքնաղ ծաղիկն ես աղուոր.
 Միսթիքական խնկումներով թունաւոր
 Դուն մսեղէն խենթեցընող տաճա՛րն ես.
 Դուն Հրա՛ւջքն ես. դուն Երա՛զն ես. դուն Սէ՛րն ես:

Սև մազերովըդ սիրէ՛ զիս, գգուէ՛ զիս.
 Անոնց խորհուրդը պատմէ ինձ առանձին,
 Որովհետև անոնք հոգիս կապեցին,
 Իրենց ցանցին մէջ կապտեցի՛ն իմ հոգիս.
 Սև մազերովըդ սիրէ՛ զիս, գգուէ՛ զիս:

Թաց աչքերըդ վըրա՛ս յառէ տրտմապէս,
 Անոնց թոյնը ներարկէ ինձ մեղմօրէն.
 Որովհետև քու աչքերըդ աղուոր են:

Պորհրդամո՛ւլ անտառներու շուքին պէս .
Թաց աչքերըդ վըրաս յառէ՛ տրամապէս :

Տըզու մը պէս հանգչեցո՛ւր զիս կուրծքիդ վրայ .
Հանգչեցո՛ւր զիս՝ ու այտերըս կրակէ՛
Քու ձիւնեղէ՛ն բազուկներուդ մէջ գրկէ ,
Ու Պժող մարմինդ մարմնիս վրայ սարսըռայ .
Տըզու մը պէս հանգչեցուր զիս կուրծքիդ վրայ :

Ահա շըրթնե՛րըս կարօտովըդ կ'այրին ,
Ու կը լայննայ արտասուքի շիթ մը տաք ,
Իմ միթաստուեր թարթիչներուս շուքին տակ .
Անոնց վըրայ դուն ցո՛ղը դիր համբոյրին .
Ահա շըրթներըս կարօտովըդ կ'այրին :

Բազուկներըդ կը գալարուի՛ն , կը դառնա՛ն ,
Տենչին կըրա՛կը նայուածքըդ կը թովէ ,
Որովհետև քու մո՛ւթ հոգիդ գինով է ,
Սիրախտաւո՛ր գիշերներուն պէս գարնան . . . :
Բազուկնե՛րըդ կը գալարուին , կը դառնան :

Ժամն է , աղուո՛ր , երանութեան ժամն է աս .
Շըրթներուս վրայ դիր շըրթունքնե՛րըդ բոցէ ,
Մոռցի՛ր կեանքը , աղուոր աչքե՛րդ ա՛լ գոցէ . . .
Ի՞նչ . . . , կ'արտասուե՞ս , ու յուզումէդ կը դողա՞ս . . . :
Ժամն է , աղուո՛ր , երանութեան ժամն է աս . . . :

ՍԻՐՈՅ ԱՂԲԻԻՐ

Ահա կուգամ երջանկութեան ակերէն .
 Արիւնըս դե՛ռ երազօրէն կը հեւայ ,
 Ու արցունքներ արտեւանունքըս կ'այրեն :

Աղբի՛ւր , աղբի՛ւր , ինչ հըրճուանքով տենդագին
 Երկարեցի թշուառ շրթնե՛րըս ակիդ ,
 Ու ի՛նչ սիրով ըմպեցի ջո՛ւրըդ անգին :

Օհ , կ'ուզէի մընալ յաւէ՛տ ակիդ քով ,
 Նիհար ճակատս կըթընցընեի քու քարիդ ,
 Թաղուի՛լ ջուրիդ երջանկութեա՛ն պատանքով :

Ու կ'ուզէի հալիլ կուրծքիդ մէջ անհետ ,
 Լոյծ մարմնոյդ մէջ կաթի՛լ մ'ըլլալ , կէ՛տ մ'ըլլալ ,
 Երգե՛լ , հեւա՛լ , քեզի նըման , քեզի հետ :

Ի՛նչ մոգութիւն կար մարմինիդ մէջ համակ ,
 Ի՛նչ կ'ըօէին ալիքներըդ վազելով ,
 Ու ի՛նչ հըմայք կար փրփուրիդ մէջ ճերմակ :

Շրթունքըս դե՛ռ քեզ կը փնտռեն տենդագին .
 Ու հըրատապ այտերէս վար , մեղմօրէ՛ն ,
 Դողգըղալով կը սահի ցօ՛ղը կեանքին . . . :

Ահա կուգամ երջանկութեան ասիերէն . . .

Հ Ի Ն Ե Ղ Ա Ն Ա Կ

Այս գիշեր երգ մը հոգեցունց ,
 Հովին մէջէն՝ հեռուէ հեռո՛ւ՝
 Ձիւնո՛տ , տրտո՛ւմ՝ ճամբաներու
 Խոր անըջանքը արթնցուց :

Ես՝ մենաւոր ու տրտմունակ ,
 Քե՛զ կ'ունկնդրեմ պատուհանէս ,
 Որ աղօթքի մ'ողորքին պէս
 Կ'արձագանգես , հի՛ն եղանակ :

Արուեստ չունի՛ս , իմաստ չունի՛ս ,
 Կը կրկնըւիս դուն անդադրում ,
 Ու ձիւնին հետ դանդա՛ղ , տրտո՛ւմ ,
 Դուն տարուբեր կը տատանի՛ս :

Ծնչհատ մարմինդ կը դողդոջէ . . .
 Վանկերուն հետ՝ տժգո՛յն, վտիտ,
 Ու յանկերգիդ մէջ միամիտ,
 Ապրելուն խուլ մահերգը չէ՞ . . .

Կը կրկնէ հոյն աննպատակ
 Աղաղակներդ սարի՛ն, ծառի՛ն .
 Ի՞նչ կը պատմես դուն գիշերին
 Որ կուլայ մայթը հեքիդ տակ :

Այս իրիկուն, ձիւն իրիկուն,
 Հի՛ն եղանակ մը հոգեցունց,
 Ծոյլ երազա՛նքը արթնցուց
 Մո՛ւթ, ամայի՛ ճամբաներուն :

Երգը մեռա՛ւ հեռուն, անհե՛տ . . .
 Բայց ա՛յդ չափով, ա՛յդ յանկերգով,
 Պատուհանիս գիշերին քով,
 Հոգիս կուլայ դեռ երգին հետ . . . :

Ե Ր Թ Ա Լ

Երթա՛լ, երթա՛լ, երթա՛լ անձայն, անհանդէս.
 Երթա՛լ առուի՛ն պէս՝ մարգերու տակ անտես.
 Կապոյտին մէջ՝ հեզ, հողմավա՛ր ամպին պէս...:

Երթալ առանց գիտնալու թէ դէպի ո՞ւր.
 Երթալ՝ հեռո՛ւ ոստաններէն այս տըխուր.
 Երթալ՝ խաւար գիշերին մէջ թաքթաքուր...:

Երթալ, երթա՛լ, երթա՛լ առանց ճըրագի.
 Երթա՛լ՝ առանց սուգի, լացի, պապակի.
 Երթա՛լ՝ առանց սովի, փափաքի...:

Երթա՛լ մարդոց կոյտին մէջէն լռելեայն.
 Օտա՛ր մընալ իրենց ցաւին, Գիտութեան.
 Երթալ տըգէտ, խուլ, հա՛մըր, կո՛յր յաւիտեան..

Ձգգիտնա՛լ որ հոս Իտէալը չիկա՛յ...
 Ուխտագընա՛ց երթալ ավերն հեռակայ,
 Դէպի ուղին Երջանկութեան մշտակայ...:

Աննիւթանա՛ւ, անըրջանա՛ւ, վըսե՛մ, վէ՛ս,
Երթա՛ւ՝ անցայգ, անայգ, երթա՛ւ վերջապէս,
Աչքերը գո՛ց, ցայգաշրջի՛կ խեղճին պէս...

Երթա՛ւ, երթա՛ւ, չըճանչնալ Մարդ ու Աստուած.
Զո՛յգ երթալ, ձե՛ռքըդ քո՛յր ձեռքի մէջ դըրած
Անըրջանքի՛ն ու Սիրոյն պէս — Աքսորուա՛ծ... .

ՎԵՐՁԻՆ ԿՈԶԸ

Երբեմնի Դշխոս երեւցաւ ինձի,
Վար քաշեց դէմքէս՝ թեւերս պղնձի.
«Կ'արտասուե՞ս, Ասպետ» : — Ո՛չ, հեծկլտացի :

Ինչո՞ւ եկեր ես նորէն խռովել զիս.
Ղրկեր եմ արդէն զինուորներն Յոյսիս.
— «Գիտե՞ս ուր», ըսաւ : — Ո՛չ, հեծկլտացի :

Սուրացի՛ն, նետերն արձակելով վէս
Արեւուն դէմ, ո՛րն անիծելու պէս.
«Կը դառնա՞ն», ըսաւ : — Ո՛չ, հեծկլտացի :

Ահա մինակ եմ, անդէն, յուսահատ,
Ու ահա դէմս ես, ո՛ւշ է արդէն, վա՛տ.
«Սիրէ՛ զիս», ըսաւ : — Ո՛չ, հեծկլտացի... :

ՍԻՐՈՅ ՇՈՂՔԵՐԸ

Երգը յուշքին,
Սըրտիս խորէն,
Կուլայ ուժգին:

Ու տրտմագին,
Սէրըս նորէն
Կը ծնի ցաւին
Սարոյկներէն:

Ու կ'ուզեմ լա՛ւ
Մոխիրներուն
Վըրայ Սիրոյն,

Որպէսզի ա՛ւ
Շողքերն յետին
Ձը կայծկլտին:

Ս Է Ր

Սէրը՝ գիտցէ՛ք, անուշ ջրի լոգանք է .
 Առանց սիրոյ՝ մարդ էակը նողկանք է .
 Շրթունքներդ երբ դպցնես սիրտի՝ դռներդ փակէ .
 Դուրս կը վիժին՝ ոչինչ նուազ զերծ փորձանքէ :

Առանց քեզի դառն էր տոկալ պայքարներուն դիւր
 կեանքին ,
 Քեզմով կ'ապրին զոյգ ամուսնեքը թանկագին .
 Արևն ես դու , շթափ լուսնէն գիշերային ,
 Մեր սրտերը կը կայծոտես յորդ լոյսով մը անքնին :

Անսէր սիրտ մը պատասխան է դատարկ սրտի .
 Դատարկ սիրտ մը միայն քեզմով կը զինուի .
 Սիրոյ ժամուն բողբոջ կ'առնեն սիրուն հասկեր ,
 Երազանքներ , բոսոր շրթներ , կարմիր այտեր վար
 դենի :

ՉԱՐ ԱՂՋԻԿԸ

Իմ սիրականս խարտեա՛շ, խարտեա՛շ,
 Հուրերու պէս խարտեա՛շ էր .
 Իմ սիրականս մատղա՛շ, մատղա՛շ,
 Զուրերու պէս մատղա՛շ էր . . . :

Վարդ փետտելէն թաթիկն անուշ
 Վարդերու գոյնն էր առած .
 Մարդ թունելէն՝ աչուկն անուշ,
 Մահերու թո՛յնն էր առած . . . :

Բայց կը խնդար ան այնքա՛ն քաղցր
 Որ զոհն ի՛նք իսկ կը նիրհէր .
 Ու կը խնդար ան այնքա՛ն բարձր
 Որ երկինքն իսկ կը ներէր . . . :

Ու մեռա՛ւ փոքր աղջիկը չար .
 -- Թռչունի պէս կը տրտնջար -- ,
 Թէ խորհեր քիչ մը, անպատճառ,
 Աստուած ի՛նքն իսկ կը զղջար . . . :

Թէ գիտնայի իր մեռնիլը՝
 Թո՛ղ տայի զիս դեռ տանջէր .
 Թէ ի՛նք գիտնար իր մեռնիլը
 Զիս ալ իր հետ կը կանչէր . . . :

Տէ՛ր Դատաւոր, ձեռքդ նըժար ,
 Մի՛ փութար զայն դատելու .
 Անոր արուեստն էր շա՛տ դժուար՝
 Տանջել . . . առանց ատելու :

Հող մի դնէք զայն , կը մըսի ,
 Մարմնին մետաքս հագցուցէք .
 Դըրէք մահճի մէջ սնդուսի ,
 Ժապաւէնով տաքցուցէ՛ք . . . :

Ես կը հսկեմ աղջկան չար
 — Թէ երկի՛նքն իսկ չի զղջար —
 Զիս կը յիշէր , որ անպատճառ
 Մեռնելուն ի՛նք կը զղջար . . . :

Բ Ո Յ Ր Ը

Կը բարձրանայ բո՛յր մը աղուոր,
Գաղջ բոյրը կո՛յս մարմինիդ,
Բո՛յրը՝ խուսկի պէս միամիտ
Ու մեղքի պէս՝ մեղաւոր . . . :

Ուսկէ՞ կուգայ բոյրը մարմնիդ
Ի՛՛ւր տենչերով բեղմնաւոր,
Դաւադրութեան պէս ահաւոր,
Աղօթքի պէս՝ միամիտ . . . :

Կը բարձրանայ բո՛յր մը աղուոր
Դինովցընող ու բարի .
Միսթիք ա՛մպ մ'է որ կը փարի
Քեզ՝ քաղցրօրէ՛ն մեղաւոր . . . :

Գիտե՛մ, կ'զգա՛մ, բոյրըդ գինով՝
Ծա՛լ ծա՛լ ցրուած ծամերէն,
Մատիդ ծիրա՛ն, ծի՛ւր ծայրերէն
Կը ծորի բո՛յրըդ գինով . . . :

Բայց ուսկէ՞ց է բոյրըդ ահեղ .
 Սեւ աչէ՞դ՝ սեւ վարդի պէս,
 Սեւ թարթիչէ՞դ՝ սեւ կարթի պէս,
 Մութ յօնքերուդ տակ աղեղ . . . :

Ուսկէ՞ կուգայ բոյրըդ բարի
 Որ կը բուրէ մարմինէդ,
 Կարմիր, բողբոջ, նուրբ շրթունքէ՞դ
 Որ համբոյրին կ'երկարի . . . :

Ուսկէ՞ց է բոյրդ ալ մեղաւոր,
 Լա՛յն վարդի պէս կուրծքէ՞դ բաց,
 Ուր կը կարմրի հետքը դեռ թա՛ց
 Համբոյրի մը բեղմնաւոր . . . :

Չա՛ր ու բարի, գինո՛վ ու կոյս,
 Կը շնչեմ այդ բոյրըդ խա՛ռն .
 Մի՛ զըլանար համբոյրըդ դառն
 Սիրակարօ՛տ իմ հոգւոյս . . . :

Կեցի՛ր, կեցի՛ր, ա՛խ, ո՞ւր կ'երթաս,
 Շրթներըս քեզ կը հեւան .
 Ըսէ՛, Սիրո՞յ, Մեղքի՞, Մահուա՞ն
 Ինձ հրաւէր կը կարդաս . . . :

Կը բարձրանայ բոյր մը աղուոր
 Իմ հոգւոյս մէջ . բա՛ց ինձ , բա՛ց
 Կարմիր շըրթներդ՝ վարդի պէս թաց
 Ու մեղքի՛ պէս մեղաւոր . . . :

Հ Ա Մ Բ Ո Յ Ր Ը

— Հո՛գիս , դուն հո՞ս . . . — հեկեկաց ձայնը լալէն :
 Գիշերն ուշ էր , գաղջ գիշեր էր ապրիլի .
 Իր գրկին մէջ առած լուսնակն սխրալի
 Թուփերն ի վար ջուրը կ'երթար հեւալէն . . . :

— Հո՛գիս , դուն հո՞ս . . . — : Ու տեսայ որ ոչ հեռու ,
 Գետափին մօտ , յանկարծաթափ , ուժգնովին ,
 Հովերու պէս որոնք իրար կը ձուլուին ,
 Երկու ըստուեր կը նետուէին իրարու . . . :

Տարօրինակ ինչ ունէր օգն այդ գիշեր ,
 Որ գեռ կուրծքիս տակ հետքն ունիմ սարսուռի ,
 Ու բիբերուս մէջ խոնաւ կէտ մը կ'ուռի . . .
 Ես այդ գիշերն առանց յոյզի չեմ յիշեր :

Ու կը տեսնեմ աչքիս առջեւն են, ահա,
 Իրար ձուլուած, անքակտելի՛, տենդագի՛ն,
 Բերան բերնի, հուժկու բազուկը մէջքին,
 Ու մազերու ծովը որ լայն կը խաղայ . . . :

Օ, երջանիկ տարիք ուր մարդ կրնայ գէթ
 Տաք համբոյրի մը անհունին մէջ մոռնալ
 Գոյութիւնն ալ, Տիեզերքն ալ, ինքզինքն ալ,
 Ու աշխարհքին ժպտիլ անփոյթ ու անգէտ . . .

Օր մը Սիրոյ ծաղիկները կը դեղնին,
 — Ե՞րբ անբաժան եղան փուշերն վարդերէն —,
 Պէտք է տքնիլ, ցաւը ըմպել. ու արդէն
 Քիչ յետոյ ժամն է խորհելու սեւ հողին . . .

— Հո՛գիս, դուն հո՞ս . . . — Երկար, երկար քարացան
 Այդ դիրքին մէջ, բերան բերնի, անձնըւէր,
 Իրենց շունչերն կարծես իրար յանձնուէր,
 Այնքան սէր կար այդ պաշտումին մէջ անձայն . . .

Ու ես լըռիկ, ու ես անշարժ, երկիւղած,
 Կը նայէի իրենց երկար, ու վաղուան
 Կը խորհէի, յաջորդ վաղուան ու մահուան,
 Երբ զգացի թէ էութիւնըս դողաց . . .

Ա Ս Պ Ե Տ Ի Ն Ե Ր Գ Ը

Ճերմակ ձին է թամբեր, տեսէ՛ք.
 Ոսկի, թամբին վրայ կանգնած սէգ,
 Լըռին կ'երթայ ասպետն. ըսէ՛ք,
 Ասպետը սէգ ո՞ւր կ'երթայ . . . :

Կը խրոխտայ վէս ձին՝ կոյսի պէս.
 Արշալո՛յսն է ծաղկի հանդէս,
 Հազար թռչներ կ'երգեն անտես.
 Ասպետն, ըսէ՛ք, դէպ ո՞ւր կ'երթայ . . . :

Հետևորդներն ո՞ւր են աղուոր.
 Ռազմի՞՞ կ'երթայ ան ահաւոր.
 Ո՛չ, իր սրտէ՛ն է վիրաւոր.
 Ասպետն, ըսէ՛ք, դէպ ո՞ւր կ'երթայ . . . :

Ահա հասաւ ժայռին գագաթ,
 Դէմքը ծածկեց ձեռքով երկաթ,
 Խոյսցաւ վար ձին խանդակաթ.
 Ասպետը սէգ մահուա՛ն կ'երթայ . . . :

Տ Ր Տ ՈՒ Մ Ո Գ Ի

Թափառամու ճամբուն վրայ քերթողի,
Տրտում ոգի, ահա՛ դարձեալ գըտա՛յ քեզ
Հոն ուր քեզի օր մը մինակ ես թողի
Քարին վրայ, աղբիւրին մօտ, կը յիշե՞ս:

Մէր հրաժեշտի օրէն ի վեր դուն այսպէս
Հեռուն յառած մութ աչքերըդ սեւածիր,
Սպասեցիր ճամբուս վրայ տրտմապէս
Ու արցունքիդ լռիկ երգը միշտ լացիր:

Ես հեռացայ տարտամին մէջ խուլաբար
Իմ երազիս ճամբաներէն անդադրում
Գիշերներու հովիդ նման խօլապար,
Վերջալոյսի թռչուններուն պէս տրտում:

Ու վազեցի անուրջներու ուխտաւոր
Թաւիշին վրայ կեանքի ծիծղուն մարմանդին,
Ու վէրքերուս ծաղիկները ախտաւոր
Տարի մինչեւ հորիզոնները մութին:

Ես խոյացայ՝ նուիրումէն տենդահար,
 Հոն ուր նիհար ճառագայթ մը կար յոյսի,
 Հոն ուր սիրոյ վշտիդ երգ մը կը դողար,
 Հոն ուր դողդոջ ծիածան մը կար լոյսի:

Ու թեւաբեկ ահա՛ քեզի կը դառնամ
 Երջանկութեան ճամբաներէն յետադարձ .
 Տրտում ոգի՛ հոգւոյս միակ բարեկամ,
 Դուն իրական, դուն ճշմարիտ, դուն անդարձ:

Ձեռքերուս մէջ դիր ձեռքերըդ մահաթոյր,
 Ու հողեղէն շրթունքներդ շրթունքիս,
 Երակներուս մէջ քու շունչըդ տրտմաբոյր,
 Արցունքներուդ բիւրեղին մէջ՝ իմ հոգիս:

Տրտում ոգի, թեւըդ թեւիս գալարուն,
 Համբոյրի մը անհունին մէջ սգաւէտ,
 Մեր ցաւերուն, արցունքներուն, վէրքերուն
 Պատարագը պիտի տօնենք քեզի հետ:

Խ Ա Պ Ր Ի Կ

Հովերն ի՞նչ ըսին քեզի, ո՛վ ճամբորդ,
Որ հեռւէն կուգաս, հեռւէ՛ն արփաւէտ.
Ա՛յն հեռւէն կուգաս, ուր աչքերէս յո՛րդ
Արցունք է ինկեր սրտիս արեան հետ... :

Հովերն ի՞նչ խապրիկ, հողերն ի՛նչ եղեռն
Պատմեցին քեզի, ո՛վ ճամբորդ ընկեր,
Այն հովերն հեռւի, այն հեռւի տեղերն
Ուր ամէն քայլիս արցունք մ'է ինկեր... :

Հողերն ի՞նչ ըսին, հովե՛րն ինչ ըսին.
Անո՛նք կը ճանչնան միայն իմ հոգիս,
Այդ սուրբ տեղերուն վրայ, լուսնակ լոյսին,
Արցունք մ'է ինկեր իմ ամէն քայլիս... :

Այն մեծ, գորշ թռչունն որ համակրօրէն
Կը գազրեցընէր ողբիս՝ իր երգեր,
Հոն չէ, գաղթա՛ծ է անշուշտ այն երկրէն
Ուր ամէն քայլիս արցունք մ'է ինկեր... :

Ու առուակն ալ որ հոն կը խոխոջէ,
Իմ առուակըս չէ՛, նոյն երգը չերգեր.

Ան ծո՞վ թափեցաւ, այն նոյն ջուրը չէ՛
Ուր ջուրերու պէս արցունքս է ինկեր . . . :

Սամրա՛ծ են անշուշտ սէղերն ալ գալար
Ուր կը խեղդէի ողբերըս կերկեր,
Նոր ծըլած մարգերն ինձ չե՛ն, չե՛ն ճանչնար
Ո՛ր տեղին վըրայ ո՞ր արցունքս ինկեր . . . :

Բայց հո՞ղն ինչ ըսաւ, այն որ մայրօրէ՛ն
Աչքիս ցողին հետ ծծեց իմ հոգին .
Ան զիս կը ճանչնա՛ր. ծաղիկ մը նիհար
Չըսա՞ւ թէ ինք ծի՛լն է իմ արցունքին . . . :

Ու հո՞վն ինչ ըսաւ. ա՛ն զիս կը թովէր
Լո՛ւռ խապրիկներով ամէն իրիկուն,
Ինձ սիրականիս սիրտը կը գովէր,
Կը չորցնէր թա՛ց աչերըս անքուն . . . :

Չա՛ր հովիկ, սրտիս միա՛կ լրաբեր,
Գիտնալո՞վ, գութո՞վ կը խաբէիր զիս :
Գնա՛, ըսել իրեն թէ հեռո՛ւ ամիեր
Կը փախչի՛մ իրմէ՛՝ ճամբէն արցունքիս . . . :

. . . Հովերն ի՛նչ ըսին քեզի, ո՞վ ճամբորդ,
Որ հեռւէն կուգաս, հեռւէն սըգաւէտ .
Ս՛յն հեռւէն կուգաս, ուր աչքերէս յո՛րդ
Արցունք է ինկեր, սրտիս արեան հետ . . . :

Գ Ա Ց Ո Ղ Մ Ա Ր Դ Ը

Ձեմ գիտեր ո՛վ, չեմ գիտեր ո՛ւր
 կ'երթայ...: Հի՛ն, հի՛ն ասպետ մ'է լուռ,
 կ'ըսեն՝ ձիուն վրայ տխուր
 կ'երթայ շո՛ւտ, շո՛ւտ, չեմ գիտեր ո՞ւր...:

Կը. տեսնեմ մեծ շուքն իր նիհար
 վերջալոյսին, ամպերէն վար,
 Սեւ նժոյգին վրայ հողեվար
 Սարէ՛ն կ'երթայ, չեմ գիտեր ո՞ւր...:

Կ'երթայ շո՛ւտ, շո՛ւտ, ու չի տեսներ
 Որ ետեւէն բիւր կմախքներ
 Ա՛լ վազելէն շատ են յոգներ,
 Ան կ'երթայ շո՛ւտ, չեմ գիտեր ո՞ւր...:

Կ'ըսեն՝ գղեակ մ'ունի աղուոր
 Կամ ուխտ մը սուրբ, սէր մ'հեռաւոր,
 Ու հո՛ն կ'երթայ...: Եւ գիտեմ որ
 Տապան մ'ունի, չեմ գիտեր ո՞ւր...:

Հ Ո Գ Ի Ս

Հիւանդ տերեւ մը տեսայ կանանչին մէջ դաշտերուն :
Ի՛նչ աղուոր էր գարունը, փափուկ հովէն օրօրուն .
Սիրուն խոտերը դաշտին, ծաղիկներն ալ բիւր գոյնով
Կը խնդային լռելեայն, գաղջ արեւին տակ գինով :

Բայց գարնային, կենսաւէ՛տ այդ պարին մէջ մուրորուն՝
Հիւանդ տերեւ մը տեսայ, կանանչին մէջ դաշտերուն,
Չորցա՛ծ տերեւ մը նիհար, որ զեփիւռին հըպումով
Մեռելամերձ կը դողար՝ մարգերուն մէջ ակնաթով :

Սիրտըս անհուն ցաւով լի՛, ես ծռեցայ սըգահար,
Մատներուս մէջ առի զայն, ու իր մարմինը նիհար
Գուրգուրանքով, արցունքով մօտեցուցի շրթուն-
քիս . . . :

Անժամանա՛կ՝ թարչամած գարնան տերեւ մ'է հոգիս .
Ծաղիկներուն մէջ կեանքին, զիփիւռին տակ մայիսի .
Ա՛լ ժպտելու անկարող, ան կը դողա՛յ, կը մըսի՛ . . . :

Հիւանդ տերեւ մը տեսայ կանանչին մէջ դաշտերուն . . .

ՑՐԻԻ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ

Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ն Ե Ր Գ Ե Ր

Ա.

Վ Ի Է Ժ Ի Ն Ս Ե Ր Մ Ն Ա Յ Ա Ն Ը

Քե՛ղ, ցասուճի՛ վայրագ հեղեղ գահավէժ,
Արդարութեան փայփայելի մո՛ւթ հըրէշ,
Խաւարնեբու ահե՛ղ ծընունդըդ, վը՛րէժ,
Ողջո՛յն, տաղե՛րըս քեզի՛ . . . :

Մոխրի՛ն կուտամ սրտիս վէրքերն ակտագին . . . :
Ամենո՛ւն վէրքն, անսահմա՛ն վէրքը ազգին,
Արդարութեան ծարա՛ւը, մա՛հն հաւատքին,
Երգին տաղե՛րըս քեզի՛ . . .

Սանձերնին լա՛յն երիվարներ ասպազէն,
Ալիք ալիք թօթուելով սէգ բաշն ուսէն,
Թող հայրենի աշխարհիս կուրծքն ահօսե՛ն,
Սուրա՛ն տաղե՛րըս քեզի՛ . . . :

Ու ես կուգա՛մ, — մո՛ւթ շանթերու սերմնացան —
Այդ ահօսէն, ուր արիւններ լճացա՛ն,
Գիշերներով, չար հովիտով, ցիրուցա՛ն,
Ցանել տաղե՛րըս քեզի՛ . . . :

Բ

Հ Ա Յ ՈՒ Ո Ր Բ Ի Կ

Ա՛յ հայու որբիկ, ա՛յ անտէր որբիկ,
Մանրի՛կ, արիւնճո՛տ ոտքերըդ բոպիկ,
Ո՞ւր կը քաշկռտես այսպէս մոլորուն... :

— Չա՛ր քամիներուն... :

Ա՛յ որբիկ, բոցեր գիւղե՛րը հասան,
Անտառներու մէջ մայրերնիդ կ'որսան :
Անպաշտպա՛ն ու մերկ, ո՞ւր այսպէս, որբիկ ճան :

— Մո՛ւթն ինձ պատմուճան... :

Քեզ համար մարդերը գո՛ւթ, հա՛ց չունին,
Ա՛յ որբիկ, շի՛ւղ իսկ չկայ թռչունին :
Ծերեր՝ սովահար կ'իյնան ժամէ ժամ... :

— Արիւն կ'որոճամ... :

Հայրըդ պատուաւա՛ծ նետե՛ր են սարին :
Եղնիկներու պէս քոյրերըդ՝ տարի՛ն :
Աստուա՛ծդ իսկ մատրան մէջն է խողխողուած... :

— Վըրէ՛ժն ինձ Աստուած... :

Դէ՛հ, գնա՛ մեծցիր ահեղ որբն Հայուն .

Սընի՛ր արիւնով, ու փսխէ արիւն

Մարդկութեան ճակտին, ու սարսափ ու հուր . . .

— Այդ՝ պարտքս է տըխուր . . .

Գ

Վ Ե Ր Ջ Ի Ն Օ Ր Օ Ր

Օրօ՛ր, օրօ՛ր . . . : Օրօ՛ր ըսեմ քնանաս,

Վիրաւոր Հօ՛րըդ ճիչերն ա՛լ չ'իմանաս :

Ծիծէս ծըծա՛ծըդ թոյն է, կաթ չի գիտնաս . . .

Օրօ՛ր ըսեմ քնանաս :

Արի՛ւն — հեղեղ հորդեց այս սուրբ ձորերէ,

Բայց չի փախի՛ս, փարէ՛ երկրիդ, գայն սիրէ՛ ,

Հողիդ վըրայ գերի մի՛րլլար, այլ տիրէ՛ . . . :

Օրօ՛ր ըսեմ քնանաս :

Հօրըդ վըրայ եթէ՛ անշո՛ւնչ չի՛նկայ ես,

Զի ուխտե՛ցի Հըռոմի է՛գ գայլին պէս,

Նոր Ռոմուլոս մը գիեցնել ստինքէս . . . :

Օրօ՛ր ըսեմ քնանաս :

Բազուկներուս՝ պարան, ոտքիս ալ՝ կացի՛ն,
Ստինքիս զո՛յգ պտուկներն, ա՛հ, կտրեցին:
Վէրքէս՝ արիւնըս ծծէ, որդեակ միածին...:

Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Ահա կ'իյնամ...: Հայաստանը մա՛յր քեզի:
Կտակ կուտամ այս կոտրած Սուրն երկսայրի՛
Ուր Հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...:

Օրօ՛ր ըսեմ քնանաս:

Ո՛Վ ԻՍ ՀԱՅՐԵՆԻՔՍ...

Կիլիկիոյ արիւնի՛ն

Ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ գինով:
Ցաւերէս տարուած կը քալեմ երկա՛ր
Լեմանի ափին՝ խոր տրամութիւնով:
Ի՛նչ խաղաղութիւն, ի՛նչ անճառ չըկար,
Ու ցայգն ի՛նչ անոյշ, ցայգը ի՛նչ գինով:

Հեռէն թեւճակի շառաչներ դողդոջ
Երգը կ'օրօրեն սիրող զոյգերու.
Ջուրին մէջ աստղեր ինկեր են բողբոջ.
Ու տարփոտ մութին մէջ հեռէ հեռու՝
Թեւճակներու թա՛ց համբոյրն է դողդոջ:

Լուսնակն ալ ահա՛ շքեղ կը ծաթի
 Առասպելներու լոյս-դշխոյին պէս՝
 Ալպեաններու ձիւն-հրաշքէն արծաթի:
 Նոր հովուերգութեանց հիւն հանդիսատես՝
 Տժգոյն տարփաւորն ահա կը ծաթի:

Ի՞նչ անհունութիւն, ի՞նչ երազ, ի՞նչ շունչ...:
 Լըռին լեռներու կողէն սատափի
 Մինչե՛ւ սխրացած անտառն անշշունչ,
 Ու մինչեւ դաշտերն ուր Ռօն կը թափի,
 Ի՞նչ անհունութիւն, ի՞նչ երազ, ի՞նչ շունչ...:

* * *

Ու դո՛ւն, ո՛վ դժբաղդ երկիր հայրենի,
 Որ արիւնի տա՛ք շամանդաղի մէջ,
 Զոհ՝ գազաններու խաղին վայրենի,
 Ու համայնասպա՛ռ բոցերու անշէջ,
 Կը մըլխա՛ս, դժբաղդ երկիր հայրենի...:

Ո՛վ իմ հայրենի՛քս...: Ու դո՛ւք, հեռաւոր,
 Եփրատ ու Արաքս ու Վանայ ծովակ,
 Ո՞ւր են կարապնե՛րը սիրախտաւոր
 Որ իրենց երա՛զ թեւերով ճերմակ
 Ճեղքէին կարմիր ձեր կո՛ւրծն ախտաւոր:

Հովուերգութիւններդ ո՞ւր են սխրալի
 Ո՛վ Արարատեան ձիւնափա՛ռ հսկան :
 Ու դո՛ւն , միամիտ Դրախտն առասպելի ,
 Ինչո՞ւ այսքան մո՛ւթ է քու լուսնկան .
 Հովուերգութիւններդ ո՞ւր են սխրալի :

Լեռանոյշ կուսա՛նքըդ Հայաստանի ,
 Ո՞ւր են ձեր սիրոյ երգերն անհամար
 Որ հովը դէ՛մի բըլուրը տանի ,
 Ուր սըրինգ՝ մը խեղճ կուլայ ձեզ համար . . . :
 Ո՛վ յաւերժահա՛րս կոյսք Հայաստանի :

* * *

Բարէ՛ : Վայի՛ւննե՛ր են որ կը լսեմ ,
 Հերքերնին ցրուած , փախչող խելայեղ ,
 Ընդդիմագրումի մը պահուն վսեմ ,
 Պիղծ եաթաղանով ընդկիսուած ահեղ՝
 Կոյսերու վայի՛ւնն է որ կը լսեմ . . . :

« Հո՛ւ , մենք ենք , մեղք ենք , եղբայրնե՛ր , քոյրե՛ր . . .
 « Մե՛նք ենք , լափլիզուած բոցերէ անչէջ . . .
 « Մերկ սուսերներով հալածուած կոյրեր . . .
 « Մե՛նք ենք , կը վազենք մութին , մահուա՛ն մէջ ,
 « Հո՛ւ մե՛նք ենք , մե՛րկ ենք , եղբայրնե՛ր , քոյրե՛ր . . . »

«Մե՛նք ենք, դիւահար ծնո՛ւնդ արիւնի,
 «Հի՛ն, շքե՛ղ ցեղի զաւակներ յետին
 «Բոպիկ երեխա՛յ, դողդոջ ծերունի՛,
 «Մե՛նք ենք ո՛ղջ գանկերն որ կ'իյնան զետին...
 «Մե՛նք ենք, դիւահար ծնո՛ւնդ արիւնի...»

«Հո՛ւ, նզո՛վք: Մեր վէրքին փրփրուն
 «Շոգին խաւարէ՛ր ձեր աչքերը, ա՛հ.
 «Մեր արիւնը ձեր զաւակա՛ց գլխուն.
 «Թո՛յն շնչէիք դուք, ու ըմպէիք մա՛հ...
 «Հո՛ւ, նզո՛վք, նզո՛վք ձեր սերունդներուն...»

* * *

Ցայգն ի՛նչ անոյշ է, ցայգը ի՛նչ զինով:
 Երգեցէք սիրոյ համբոյրներ զուարթ,
 Ու դո՛ւք երգեցէք երանութիւնով,
 Դո՛ւք երազ օփեր, ալեակներ լազուարթ,
 Ձեր ցայգն ի՛նչ անոյշ, ցայգը ի՛նչ զինով...»

Կը քալե՛մ: Քալէ՛, յիմա՛ր տարագիր.
 Ժպիտ մը շուրթիդ՝ կարապի՛ն համար,
 Նե՛րքնապէս լալով՝ միտքըդ դէ՛պ երկիր,
 Շեղչւած մահերու վրայէն անհամար,
 Քալէ՛, դուն քալէ՛, յիմա՛ր տարագիր:

Քնարի զառամած թելի մը փարած,
 Թալանէ, բոցէ հեռո՛ւ, ահ, հեռո՛ւ
 Քալէ դուն, քերթո՞ղ հայրենահալած,
 Հո՛ւր, արի՛ւն երգէ ազատ լեռներու,
 Քնարի զառամած թելի մը փարած . . . :

Քա՛լէ : Մինչեւ ե՞րբ . . . : Քա՛լէ կուրօրէն,
 Քալէ՛ մինչեւ որ Արեւն հրակէզ
 Իր մարը մտնէ նորէն ու նորէն՝
 Ու օ՛ր մը այլեւը՛ս չի ծագի քեզ . . . :
 Բա՛րէ . . . : Կեա՞նքն է այս . . . : Քա՛լէ կուրօրէն . . . :

ԶԱՆԳԱԿՆԵՐ ԶԱՆԳԱԿՆԵՐ

Զանգակներ, բարի՛, բարի՛ զանգակներ,
 Ի՞նչ բան կասեցուց ձեր գուժկան լեզուն .
 Ոսոք ելլել կ'ուզէ արիւնը վազուն . . .
 Կը լռէ՛ք, բարի՛, բարի՛ զանգակներ :

Արգեօք ձեր միստիք հագազն արոյրէ,
 Ուր կեղե՛ւ կապեց աղօթքի փոշին,
 Եւ ուր կ'երազէ՛ր խունկի գոլորչին,
 Յեղակարծ ցաւէն՝ անզօ՛ր, կը լռէ՞ :

Ո՛րչ: Ձեր դարաւոր հոգին պղնձի
 — Որ շատ, շատ յաճախ տեսեր է Բարին
 Յաղթըւած Չարէն — այժմ իր բարբառին
 Ու իր Աստուծոյն վրայ կը կասկածի...

Արդ, ո՛ւր էք չքնաղ խոստումներ խաչին,
 Եղբայրութեան զո՛ւր բարբառներ, ո՛ւր էք:
 Կըրակ կը փսխէ հոզն ամենուրեք...
 Գետերն արիւնո՛վ, դիակո՛վ կ'ուռչին...

Ու կ'իյնայ այն որ կը ծնկէ վախով.
 Ձի թուրն աւելի արդար է Խաչէն.
 Ձի կեանքն անոնց է միայն որ քաջ են.
 Անո՛նց որ կ'ապրին ուրիշին մահով:

Լո՛ւռ էք, զանգակներ: Աստուածն է մեռեր:
 Գո՛յժ տուէք վաղուան, իր հա՛սկը մեռաւ:
 Գո՛յժ տուէք Հայուն. զի ա՛ղգը մեռաւ:
 Չանգակներ, ծերո՛ւկ, բարի զանգակներ...

Ինչպէ՛ս կ'ուզէի ձերին պարանին
 Կախուիլ ու ցնցել երկա՛թ բազուկով:
 Անո՛նք որ ինկան բիւրո՛վ, քովէ քով,
 Ձեր զօղանջին հետ, լալու պէտք ունին...

Հոգիիս հազա՛ր խուլ զօղանջներով
 Գոռացէ՛ք, զա՛նգեր. ու կատաղօրէն

Գահավիժեցէք ձեր երկաթ թառէն,
Ուրկէ միայն լալ գիտցաք դարերով...

Օ՛, զօղանջեցէ՛ք, Աստուա՛ծն է մեռեր...

Ի Ն Չ Պ Է Ս Ե Ր Բ Ե Մ Ն

Քերթո՛ղ, պատմէ՛ մեզ հայրենի յուշքերէդ.
Երգէ՛ մեզ հին օրերու երգ մը անհետ,
Թափառական թրուպատուրի երգ մը զո՛վ,
Արբշիւ ու զով մեր Գողթանի ողկոյզով:

Մեռելի շէն երգ մը հանէ թռքերէդ.
Հին, կռապաշտ ա՛յն երգերէն որոնց հետ՝
Մեր ասպազէն քաջերն արոյր թափօրով,
Սաղաւարտնին շողացնելով, ջահերո՛վ,

Արքայական հանդէսներու, վայրա՛գ, վէ՛ս՝
Կը պարէին, աստուածներու պարի՛ն պէս...
Երգէ մեզի հին օրերու հի՛ն յուշեր:

Մենք դարաւոր մեր մահացումն այս գիշեր
Պիտի պարենք, եղեռնօրէ՛ն, շէ՛ն, խելա՛ռ...
— Քերթողը, ծե՛ր, չը խօսեցաւ: Ան կուլա՛ր...

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Ո՞վ կուլայ այսպէս խշտեակիս շէմքին .

— Բո՛յր, Ղարիպն է, բա՛ց . . .

Կմա՞խք մը կ'անցնի դուրսէն լալագին .

— Սո՞յս է, գուռդ բա՛ց . . .

Տապա՞րն է ջախջախ դրանքս կրծքին .

— Զարդն է, գո՛ւռդ բաց . . . :

Ջ Ղ Ջ Ի Կ Ը

Քու սուգըդ ո՞վ պիտի լայ, Ջղջի՛կ, զազիր ու մութ
քո՛յր :

Ահա իջնող մութին մէջ կը խարխափի վազքըդ կո՛յր .
Ո՞ւր, Ջղջիկ քո՛յր : Ինչո՞ւ լուռ կը հեռանաս երգիքէս,
Ո՞ր թարչամած վարդն յետին պիտի հաճի՞ ժպտիլ
քեզ . . . :

Եւ ո՞ր սարեակը պահուած թաւուտին մէջ հեշտաբոյր,
 Քեզ դայլայլոյն իր հրաւէ՛ր պիտի երգէ ի համբոյր... :
 Դուն ի՞նչ ունիս. ո՛չ փետուր, ո՛չ իսկ ձայնիկ մ'որ
 երգես .

Ո՛չ իսկ լոյս մը մտերմիկ՝ փոսուռայի բոցին պէս :

Մտրկ թւերըդ որ հէզ կո՛ղըդ կը ծեծեն անընդհատ,
 Քնած կեանքը թունելու շարժումն ունին յուսահատ,
 Ու միջոցին մէջ Անէժք ցանելու տե՛նդը անշէջ :

Եղո՛ւկ, գուն չե՛ս սաւառնիր, կը տապալի՛ս մութին
 մէջ :

Դարձի՛ր, դարձի՛ր, Զղջիկ քոյր, եկուր անխօս ու
 հըլու ,

Երգիքի՛ս մէջ, հոգւո՛յս մէջ, Սեւ Նգովքըդ խոկա-
 լու... :

Ի Ժ Ը

Ինչպէս Ամօթն, ինչպէս Մեղքն, ինչպէս Դժոխքը,
 տեսէ՛ք,

Ան կը ննջէ : Զագրելի՛, գարշատեսիլ, անշա՛րժ, սէզ,
 Անգիտակից անմեղի իր քունը խո՛ր կը ննջէ... :

Մենէ որո՞ւն համար քունն՝ ըսփոփիչ, կարճ Մահ մը
 չէ... :

Ո՛վ նորածին իժի ձագ: Քնացի՛ր. կո՛ղըդ հրաշէկ
 Երա՛զօրէն փըռէ տաք աւազուտին վըրայ շէկ.
 Եթէ հեռէ հեռու մեղմ ջուրը տարփոտ կարկաչէ,
 Քու գետնաքարչ մարմինիդ հովուերգութեանն հա-
 մար չէ՛:

Դուն հո՛ղ պիտի ճաշակես, ու դուն պիտի Մա՛հ ըմ-
 պես,
 Պիտի շնչես ժայռերու թաքուն ճեղքին մէջ անտես,
 Անիծելով արգաւանդ արգանդը որ քեզ ծընաւ...:

Չէ՛, չի պիտի թողում որ ապրի՛ս: Հարուած մը...:
 Մեռա՛ւ...:

Ա՛խ, հողակե՛րտ, նզովուա՛ծ, սողո՛ւն որդւոցը մարդ-
 կան,
 Փրկարար մեծ հարուածն ո՛վ պիտի շնորհէր վերջնա-
 կան...:

ՊԻՏԻ ՄԵՌՆԻ...

Ճի՛չ, ճի՛չ մըն ալ...: Անօգո՛ւտ: Փոթորկին մէջ
 աշունի,
 Անծի՛ր ծովուն վըրայ գորչ, դէպի ավե՛րն հայրենի,
 Ծիծառներուն կը սուրայ լո՛ւռ կարաւանը փութով,
 Իրենց վերջինն, ուժասպա՛ռ, կը փորձէ ճի՛չ մ՛ալ
 թոթով...:

Պիտի մեռնի: Ան գիտէ: Բայց մո՛ւլթ հոգին թռչունի,
 Անմահութեան գո՛նէ այն ճարտար հաւատքն ալ չունի,
 Որ կը շոյէ մեր վերջին ժամերն Յոյսով ու Սուտով...:
 Միա՛յն գիտէ թէ աչքերն խաւարելու են՝ շուտով:

Որովհետեւ մոնչող գորշ ծովուն վրայ անյատակ,
 Ի՛նչ դիակներ տեսաւ ան՝ ուխտի ճամբուն նահա-
 տակ...:

Հեռո՞ւն. ո՛չ գիծ մը տարտամ: Հեռո՞ւն, ոչ կայմ
 մը նիհար:

Մեռնի՞լ, ո՛չ, ո՛չ: Դե՛ռ թռչիլ կը փորձէ ան տեն-
 դահար...:

— Ինկի՛ր, ինկի՛ր, խեղճ թռչուն, ծովերու մէջ թէ
 ծաղկանց,

Պահ մը առաջ, պահ մը ուշ Մահը նոյն Մահն է
 անանց...:

Զ Ի Ի Ն Ի Ն

Սրտէս ջահեր վառեցի
 Խաւարն եկաւ խափանեց.
 Սրտէս վարդեր ծլցուցի
 Զիւնը եկաւ պատանքեց...:

Հպարտ հոգւոյս մէջ տղու՝
Անմահ ըլլալ կարծեցի,
Գարնան երկնին տակ աղո՛ւ
Ես սիրեցի ու լացի . . .

Երգը մեռաւ շրթներուս .
Միայն մա՛հ կայ, կազկանձի՛ւն .
Ներքէ՛ ծաղկող ծիլերուս,
Ճերմա՛կ Ոչինչ, ճերմա՛կ Ձիւն . . . :

Ներքէ՛ սրտիս իմ անահ,
Անուրջներուս վաղանցիկ,
Ճերմա՛կ Աստուած, ճերմակ Մահ,
Ձի դո՛ւ ես լոկ գեղեցիկ . . .

Կը մեռնին սէր ու ժպիտ,
Ձի դո՛ւ ես լոկ իրական .
Կեանքը քրքիչ մ'է հտպիտ,
Ու դո՛ւ ես լոկ տիրական . . . :

Հաւատացի՛ վարդերուն,
Համբոյրներուն կանացի .
Սիրոյ հի՛ն հի՛ն դարերուն
Աստուածն ըլլալ կարծեցի . . . :

Կարծեցի գաղջ հո՛մն ըլլալ,
 Հովի՛ւն ըլլալ սիրերգակ,
 Աստղերուն բո՛ցը գողնալ,
 Ըլլալ անմահ արեգակ . . .

Բայց սա՛ռ լեզուովդ ինձ կ'ըսես
 Թէ արեւնե՛ր կը սառչին . . .
 Ապա՛ մարդուն սիրտը վէս
 Խաւարչտին կէտ մ'է ջնջին:

Համբոյրը գէ՛ջ, սէրն անշէջ,
 Պէտք է մոռնալ ամէ՛նն ալ.
 Փակել աչքերս Մահուանդ մէջ
 Անհունիդ մէջ անհուննա՛լ . . .

ՅՆԾՈՒՆ ՄԱՀ

Քերթողն ըսաւ. — «Անո՛յշ վրտակ,
 Շիւղերու տակ, ճիւղերու տակ
 Ո՞ւր կը վազես աննըպատակ . . .

«Վարդեր կուլան ջուրիդ վերև,
 Սէզեր կուտան քեզ բիւր բարև,
 Քե՛զ կը կանչեն ծաղիկ, տերև . . .

«Լուսնակի ցուքը ծոցդ առած,
Դաշտերու մէջ լայնատարած,
Ո՞ւր կը վազես դուն շուարած . . .

«Կեանքդ արդէն կարճ է, ա՛յ վըտակ,
Մի՛, մի՛ վազեր, ծովը անյատակ
Պիտի թաղէ քեզ ալեաց տակ . . . : »

Վըտակն հծծեց. — «Թող անդադրում
Վազեն ջուրերս, մի՛, մի՛ տրտում
Արցունք կաթեր անոնց սրտում :

«Թո՛ղ որ երգեմ լուսն ու մութին.
Ի՞նչ փոյթ թէ մահն է քայլ մ'անդին.
Ես սիրահար եմ մարմանդին . . . : »

Ու մինչ քերթողը կ'երազէր՝
Լալո՛վ, վտակը եռուզեռ
Երգով իր Մահը կը վազէր . . .

ԵՐՆԷԿ ԶՈՒՐ

Ո՞վ պիտի երգէ քու անփառունակ
 կեանքիդ միամիտ տաղը, մատա՛ղ ջուր,
 Որ լո՛յժ դայլայլի մը պէս շարունակ
 կը փրփրիս, կ'երթաս դաշտերուն մէջ ուր
 Դարեր դարերով ե՛րգդ է գոհունակ:

Ո՞վ պիտի պատմէ վազքերդ մշտուոր
 Վայրի վարդերուն երազանքն ի վար .
 Ո՞վ պիտի ցոյց տայ փրփուրներուդ խոր
 Հեւ ի հեւ կեանքիդ իղձերն հոգեվար,
 Վէտ վէտ սէզերու շոյանքն ալ բուր:

Լուռ անըջանքի պահուն ցայգային,
 Ո՞վ պիտի պատմէ խիճերուդ լեզուն,
 Ու հէքեաթունակ սէրն ուռենիին,
 Երբ մութ գիշերով իրեն ազազուն
 Ոստերը, փախչող հոգւոյդ կը հայի՛ն:

Միամիտ վըտակ, դարերէ ի դար
 Դուն մամուտ ճամբէդ կ'երթաս անմուր,

Ու երբ կը մեռնին շուրջդ անմխիթար՝
Գարնայնի գոյն գոյն ծաղիկներդ բոլոր,
Երկու քարի մէջ կ'երգե՛ս անդադար:

Երնէ՛կ քեզ, վը՛տակ, մեռնիլ չունիս դուն.
Արցունքէ մարմինդ կը վարես անվերջ.
Գիշերներու մէջ միայնակ դուն արթուն,
Անսկիզբն, անվերջ, վըտիտ փորիդ մէջ
Կ'երգես. երնէ՛կ, ջո՛ւր, վախճան չունիս դուն:

Ու երբ այս տողերն ձըրոտող նիհար
Չեռքէն, օր մը, լոկ պուտ մը հող ապրի,
Ուրիշ քերթող մ'ալ, ինծի չափ յիմար,
Պիտի գայ հարկաւ երգերըդ վայրի
Յանգի, չափի տակ առնելու համար:

Մինչ յաւերժօրէն կեանքըդ զուարթուն
Պիտի կարկաջէ, քու ջուրդ յարաշարժ,
Հեգնելով արուեստն ու կեանքը մարդուն...
Ո՛վ անմահութեան ըստուեր գետնաքարչ,
Վը՛տակ, երնէ՛կ քեզ, մեռնիլ չունիս դուն:

Կ Ա Ր Ա Պ Ն Ե Ր Ը

El est d'étrange soir
Où les fleurs ont une âme(*)
Al. Samain

Գիշեր է լուռ, հանդարտ գիշեր ամառուան .
Մութը պատեր է երկինքը համօրէն .
Հեռուներէն քանի մը լոյսեր միայն
Իրենց ձիւնը վար կը կաթեն յուլօրէն :

Ո՛չ մէկ շըշուկ : Լռութիւնը կը թրթռայ
Անծի՛ր, անծա՛յր լայնութեան մէջ օդերուն .
Ու բացխփուող աչքերու պէս, փին վրայ,
Քաղաքներու կը պլպլւայ լոյսն հեռուն :

Բարձրը, մութին ալքերուն մէջ, հեռակայ
Ժիւրաներու ստուերը լուռ կը մրափէ .
Աւելի՛ վեր, արհամարհոտ ու հսկայ,
Ալպեաններու սէգ ճակատն է սատափէ :

(*) Տարօրինակ իրկուններ կան
Ուր ծաղիկներն հոգի մ'ունին

Զոյգ ալեփառ շղթաներու դարաւոր
 Օրրանին մէջ ընկողմանած հոլանի՛,
 Լեռներու վեհ հուրիններուն պէս աղուոր
 Կը քընանայ կապոյտ հոգին Լեմանի:

* * *

Գիշերն է լուռ, լիճը տրտում: Հեռուէն,
 Ճաճանչներու, փրփուրներու պէս աղուոր,
 Քնացող ջուրին երեսին վրայ մեղմօրէն
 Երկու կարապ կը սահին լուռ, մենաւոր:

Իրենց մարմի՛նը քնքուշ է, գեղեցիկ.
 Իրենց թեւերն արծաթակերտ, ձիւնագէս,
 Եւ մարմարի իրենց վիզը սըլացիկ՝
 Երազային տաճարներու սիւնին պէս:

Կը մօտենան անոնք իրար մեղմովին,
 Ու կտուցնին իրար կուտան ուղղակի,
 Այնպէ՛ս ինչպէս ո՛չ մէկ շրթունք տակաւին
 Ա՛յնքան սիրով չէ՛ մօտեցած շրթունքի:

* * *

Ու ձիւնափառ իրենց թեւերն կ'առնեն վեր,
 Կը գալարեն իրենց վիզը երկնասլաց,

Ա՛յնպէս ինչպէս երկու բազուկ անձնուէր
Այգքա՛ն սիրով իրարու չե՛ն գալարած :

Գիւղերուն լո՛յսը կը ցոլայ հեռուէ՛ն .
Վերը՝ շո՛ւքը ժիւրաներուն հեռակայ .
Աւելի՛ վեր՝ Ալպեանները համօրէն .
Աւելի՛ վեր՝ Երկինք կանգներ է վըկայ . . . :

Վա՛րը, քնացող ջուրին վըրայ, տրտմաբար,
Վե՛հ պարտքի մը գիտակցութեա՛մբը լեցուած,
Բերան բերնի, վիզը վիզին, անբարբա՛ռ,
Կարապները կը մնան լո՛ւռ քարացած . . . :

Ա Մ Է Ն Ո Ւ Ն Պ Է Ս

Մերհճճերուց

Գեղեցիկ էր, — կ՛ուզէր ըլլա՛լ՝
Հըրաշակերտ մարմին մ՛ունէր,
Ազուոր էին իր աչքերն ալ,
Միա՛յն . . . մօրը շա՛տ կը նմանէր :

Աշխո՛յժ, գործօ՛ն ու յարատե՛ւ,
Շատ պարկեշտ էր ու շատ ալ հեզ .

Հիմնապէս լո՛ւրջ, կ'ուզէր թեթեւ
հլաւ քիչ մը... ամէնուն պէս:

Մայրը «Անմի'տ» կ'ըսէր իրեն,
— Խեղճը քիչ մը շատ էր հըլու —
Ինչե՛ր կ'անցնէր սրտին խորէն,
Բայց կը քաշուէր միշտ ըսելու:

Հոգին չի զգար թերեւըս սէր,
Բայց սենեակին մէջ՝ ներքնապէս,
Գիշերն իր սիրտը... կը մսէր,
Կ'ուզէր ընել... ամէնուն պէս:

Կուրծքը կեանքոտ, սիրտը տրոփուն,
Հետեւեցաւ պարկեշտօրէն
Իր սիրական մօրը ճամբուն,
— Տելօք էրիկ մ'ընտրեց իրեն:

Իրարու շատ բաներ ըսին
Քիչ մը հինցած, բայց սիրակէ՛զ.
Շրթունքնին ալ մէկը միւսին
Մօտեցուցին... ամէնուն պէս:

Ու ճըլալէն տըղան ծընաւ.
Մնաք բարո՛վ համբո՞յր ու սէր.

Մի՛շտ տանջուիլ, չի հրճուիլ բնաւ .
Ասանկ բանի չէր ըսպասեր :

Ձանձրոյթն իրեն սիրտը խոցեց .
Կեանքէն յողներ էր պարզապէս .
Խեղճը աչերն օր մը գոցեց
Ու չըբացաւ . . . ամէնուն պէս :

Վ Ե Ր Ջ Ա Լ Ո Յ Ս

Վերջալոյս է . կը քալեմ . հովը վայրագ կը փչէ .
Խրոփեր է լըճակին կապուտակ սի՛րտը աղուօր .
Հովին շունչին մէջ ընդհատ՝ զանգակատան երգը չէ՞
Որ սարերուն կը պատմէ հին մեներգ մը սգաւո՛ր :

Հեռուն՝ ծառեր կան տեղ տեղ ափունքն ի վար լճա-
կին .

Տերևաթա՛փ , հողմակո՛ծ , անոնք կանգներ են հըլու ,
Ու ճիւղերնին դէպի ջուր , դողդղալով կը հակին ,
Կարծես հազա՛ր գաղտնիքներ ունին լըճին պատմելու :

Ամպի թեթև ծուէններ՝ հովէն տարուած անդադրում՝
Ցածէն կ'անցնին հուպ տալով սարին , ծառին , լճակին .

Անոնք կ'անցնին հալածուող անուրջներու պէս տըր-
տում,
Ձը հասկցուած բաներու աղուորութեամբն անմեկին:

Վերջալոյս է. կը քալեմ. հովը վայրագ կը փըչէ.
Միապաղաղ ամպերու սառնութեան մէջ մարմարի,
Հորիզոնին վըրայ լուռ, արեգակին ցուքը չէ՞
Որ այսօր ալ՝ ինչպէս միշտ՝ դողդղալով կը մարի:

Բայց ի՞նչ տրտում վերջալոյս: Երկնքին վրայ աշունի
Ո՛չ արևի բիւրազնեայ շառաւիղներ թըրթըռուն,
Ո՛չ երանգներ բոցավառ, ո՛չ երակներ ծիրանի,
Ո՛չ իսկ երիզ մ'ոսկիէ եզերքն ի վար ամպերուն:

Անըջագի՛ծ, անորո՛շ, սառած ծովու մը նըման՝
Հորիզոնը համօրէն գորշ անհուն մ'է կապարի,
Ուր աշնային օրերու տժգոյն արևն անսահման
Ձգալաբար կը հալի՛, կը տարտամնայ, կը մարի:

Ու իրիկուն է արդէն. հով ու ալիք կը հեան.
Երազներու գոյնին պէս՝ մութն իր քօղը կը թափէ.
Հեռուէ՛ հեռու, մենամուտ տրտմութեան մէջ իրիկուան,
Ուշ մընացած թռչուն մ'է որ դէպի սար կ'չտապէ:

Ա Ր Ե Ւ Ե Լ Ք Ը

Սկիւտարի ծովահայեաց կէտերէն
 Մէկուն վըրայ խորասուզուած տխրօրէ՛ն,
 Քաղցըր թոյնի մը պէս կ'ըմպեմ արևուն
 Խենթեցընող վերջին ցուքե՛րը անհուն:

Ուզի՛ղ դէմըս, բըլուրին վրայ, քայլ մ'անդին,
 Էջ մը ծերուկ, թողած ծի՛լը մարմանդին,
 Կոշկոռած վի՛զը կ'երկարէ գալարո՛ւն
 Մարմարայի իրիկնանո՛յշ բոցերուն . . .

Կը նայիմ նուրբ ստուերներուն գեղեցիկ,
 Վոսփօրին վրայ բիւր կայմերու սլացիկ,
 Հեռի հրաշէկ երկինքներուն բոցահալ .
 Կը նայիմ ինձ, ու կը նայիմ իրեն ալ . . .

Այդ է՛շը որ կեանքը կ'ըմպէ հոն հըլո՛ւ,
 Որ կը լռէ, բայց շատ վարժ էր զուալո՛ւ
 — Ի՛նչ շնորհապարտ եմ ես իրեն այս մասին —
 Որուն համար փիլիսոփայ ալ ըսին . . .

Այդ է՛չը, այդ ծռմռած ճի՛տը համեստ,
 Մտրակեկէ թուլցած մորթին հաստաբեստ,
 Դերասանի այդ կեցւածքը բլրին վրայ,
 Ինքնասուզւած պոչն որ հազի՛ւ կ'երերայ . . .

Այդ է՛չն ահա, այդ պարզ որդին բընութեան,
 Հորիզոնուած, շրջանակուած յաւիտեա՛ն,
 Անվե՛րջ, անհո՛ւն վերջալոյսով մը միայն,
 Արեւելքի պատմութիւնն է լռելեայն . . .

ԱՐԳԱՍԱԻՈՐՈՒՄ

Մառախուղի առաւօտով, ծեր ձիերը կը քաշեն.
 Դանդա՛ղ, անիւը չի ճռար ձիւնին վըրայ: Միայն, շէ՛ն,
 Խարազանն է որ կը խօսի թաց օդերու մռայլ սուգին:
 Ու կ'երկարի՛ ճամբան, մինա՛կ, անհորիզոն, ահագին:

Ինքնասուզուած, նախատիպար այդ կառքին մէջ գիւ-
 ղաշէն,
 Ես կը գիտեմ սառած ձիւնը կախւած իրենց լա՛յն բա-
 շէն:
 Ծե՛ր, կը քաշեն: Խեղճ ամօլը: Աջն արուն է, ձախն՝
 էգին
 Խորշոմ Ծաղիկը կ'երեւայ, պոչին շարժքէն, ցաւա-
 գին . . .

Հալածուած գոյգ: Ու կը խորհիմ թէ այդ երկո՛ւքը
միայն,
Մշտնջենական Տառապանքն է զոր կը տանին լուել-
եայն,
Եւ թէ մէ՛կը միւսին բաւ է՝ խեղճ բընազգի մը հըլու՛
Տառապագին սերունդի մը ամբողջ սերմը գընելու . . .

Այսպէս, թշուա՛ռ, արքայափառ մտրակի մը ներքեւ
չէ՛ն,
Յաւիտեանին Անէծքն իրենց Արգանդին մէջ ախտա-
չէն,
Մառախուղի առաւօտով, ծե՛ր, ձիերը կը քաշեն . . .

ՇԱՆ ՀՈԳԻ

Այս իրիկուն Բըթի-Շանի կեղծ-զըւարթ
Սըճարանի շարքերուն մէջ, ես հանդա՛րտ
Օղիի ո՛ւմպըս կ'ըմպէի քիչ առ քիչ,
Վերջալոյսի ճաճանչներուն դէմ մոգիչ:

Դուրսը՝ վազող հոսանքին մէջ եռուզեռ,
Պոչսոյ խեղճուկ մեր շուներուն դասը ծե՛ր,
Սալայատակ զառիվերին վրայ, անշա՛րժ,
Կը գինովնար, — ո՛վ տեսարան սրտաշարժ . . .

Կը խորհէի իրենց մորթին աննշան .
 Կը խորհէի Լամարթինէ պաշտուած շան՝
 Զոր հռչակեց , Վինեի՝ ծախուած վատ մը նենգ . .
 Կը խորհէի ա՛յն շուներուն որ մե՛նք ենք . . .

Յանկարծ սլացին անոնք շանթի մը հանգոյն ,
 Ու տեսայ որ բարակ իշխան մը տժգոյն
 Եւրոպայէ բերած շունն իր դեռատի
 Հաներ էր քիչ մը իրիկւան պտոյտի . . .

Ու մինչ ամէնքս հիացումո՛վ , նախանձո՛վ ,
 Կը դիտէինք իշխանն աչքո՛վ , ակնոցո՛վ ,
 Մեր ծեր շուներն՝ իր ազնիւ շունը գեղերփ
 Յօշոտելու կը ջանային ամէն կերպ :

— Ես որքան լաւ հասկըցայ քեզ , Շա՛ն Հոգի . .
 Մինչ մենք կոտորիլ կը ջանայինք երկուքի՝
 Բարեւելու այդ մակարոյծը շքեղ ,
 Դուն քու ակռադ ցոյց կուտայիր խելայե՛ղ :

Ա՛խ , Շա՛ն Հոգի , դուն չես գիտեր որ մարդիկ
 Աշխարհ կուգան ազնըւական կամ ուամիկ ,
 Եւ թէ ազնիւ ժառանգութիւն մը որքան
 Կրնայ տեւել աւելի քան յաւիտեան . . .

Միա՛յն գիտես դուն խեղճութիւնդ անանուն ,
 Գիտես հոգւոյդ ատելութիւնը անհո՛ւն ,

Գիտես քա՛ղցը, ձիւնը, ծե՛ծը վայրենի,
 Եօթազաւակ յղութիւնդ ալ մայրենի...

Ու չե՛ս կրնար դուն հանդուրժել որ քեզ պէս
 Պոչաւոր շո՛ւն մը խրոխտա՛ր քովէդ վէ՛ս,
 Ու աւելի՛ լաւ ապրէր քան միամիտ
 Ո՛ր եւ է խեղճ քաղաքացի մը թաղէդ...

Կ Ա Ր Մ Ի Ր Դ Ր Օ Շ Ա Կ Ը

« — Անօթինե՛ր, անգործներու կո՛ւռ բանակ,
 «Փոս աչքերնիդ դէպի երկինք զո՛ւր բանաք:
 «Տառապանքի՛ ոստայնանկներ, ի կըռի՛ւ...:
 «Քի՛զէ՛ն՝ կի՛ներ, ի զէ՛ն՝ ծերե՛ր ալելուիւ...:»

* * *

Գուրսը ձմրան սոյլին մէջէն կը լսուէր
 Բողոքի ձայն մը գալարուող կարեվէր,
 Ընդհատուած խո՛ւլ հըռնըղիւնով կատաղա՛ծ,
 Որ արձագանգ կուտար երկար. «Հա՛ց, հա՛ց, հա՛ց...»

Ի՞նչ կար: Կուրծքիս տակ, ուժգին, սիրալս դողաց:
 Զիւն-ձմեռո՞վ, այսպէս գիշեր ատեն՝ հա՛ց...:

Գաղջ անկողնէս վար նետուեցայ մրափուած ,
Պատուհաններս բացի փութով , ու , Աստուած . . . :

Միթէ՞ . . . : Ամէն բան հասկցայ , ու լացի . . . :
Բոլոր վայրագ պայքարողները հացի ,
Հազարներով , հո՛ն , վա՛րն էին , խեղճ ու վէ՛ս ,
Կուտուած , կատղած , մըջիւններու շեղջի պէս . . . :

Յո՛ւրտ , իրենց վրայ դանդա՛ղ կ'իջնէր ձիւնն համա
Անյուսուածեան ծաղիկներու պէս ճերմակ :
Յո՛ւրտ , կը պատէր զիրենք գիշերն անսահման ,
Թշուառութեան մըթին դաւի մը նման :

Իրենց մէ՛ջտեղ , խեղճ կառքի մը վրայ խարխուլ ,
Հազարներու հըռնըդիւնին մէջէն խուլ ,
Աշխատանքի նօթի ստրուկ մ'ալեփառ ,
Կանգնած , գողգո՛ջ , կը բողոքէր , կը պոռթկար :

Ու իր խօսքերը կ'իյնային փրփրադէզ ,
Անիծապարտ սե՛ւ ամբոխին վրայ ա՛յնպէս՝
Ինչպէս ժայռեր ովկէանին մէջ կատղած . . . :
Ու ովկէանը կը ճողփար . « Հա՛ց , հա՛ց , հա՛ց . . . : »

* * *

« — Ինչո՞ւ ոմանք սնդուսներով օրօրուն ,
« Գլուխը ոմանց՝ մայթին ձիւնոտ քարերուն . . . : »

«Ինչո՞ւ մէկը՝ ձեզ ունենեցու տակ ոսկի,
«Միւսը՝ խոնաւ խշտեակի մէջ սողոսկի...»

«Մէկուն գիւակին վրայ դամբա՞ն, վա՛րդ, մարմա՛ր.
«Ողջը չունի բարձ մ'ուր հանգչի՛լ կարենար...»
«Բոյն-ընտանիք ունի թռչունն օդաչու,
«Ան ե՛րգ ունի. իօկ մենք՝ Անէժք միայն. ինչո՞ւ»

«Ինչո՞ւ հազա՛ր պերճ տաճարներ հրաշակայ,
«Աստուծոյ մը հոգւո՛յն համար որ չի կայ...»
«Ա՛ր որբերը կը հալածուին՝ տեղ չի կայ...»
«Մեր խեղճ կինե՛րն են հոգեվար՝ գեղ չի կայ»

«Ինչո՞ւ, ինչո՞ւ, մինչև ե՞րբ, սեպհական
«Մե՛ր քրտինքով պիտի շաղուին պատուական
«Համադամներ մեծատունի՛ն, իր շունի՛ն,
«Մինչ աշխատող բազուկներ չո՞ր հաց չունին»»

* * *

Ծերը գողգոջ իջաւ կառքէն այն խարխուլ.
Ու կատաղի գոռիւններուն մէջէն խո՛ւլ,
Կառքին գեղջուկ բեմին վըրայ՝ հիւժահա՛լ
Խեղճեր ելան խօսք առնելու, կինե՛ր ալ...

Կը խօսէին — անո՛ւս գէմքեր ապաքէն —
Ի՛նչ որ պոռթկար իրենց նօթի աղիքէն,

«Իրաւունք»ի կոպիտ բառեր ինքնաբեր,
 Զոր կապուտցած իրենց շրթունքը կափէր:

Խո՛ւլ աղաղակը կ'ընդհատուէր պահ մը. «Հա՛ց».
 Ու ամբոխը լուռ կ'ունկնդրէր ծարաւած
 Արդարութեան չքնա՛ղ ձայնին այդ տըկար,
 Արդարութեա՛ն՝ որ երբե՛ք պիտի չըզար. . . :

* * *

Վայրա՛գ գոռիւն մը գիշերին մէջ թնդա՛ց.
 Զիւնոտ ցայգին անբա՛ւ սուգին մէջէն թաց,
 Բոցերու պէս շքեղ, տէգի՛ պէս հըպարտ,
 «Կարմիր Դրօշա՛կ»ը բարձրացաւ անհանդարտ. . . :

Ու ամէնքը խլրտեցան, շարժեցան,
 Թափօրի մը պէս ահաւոր ու անձայն,
 Խարխուլ կառքին՝ Արդարութեան բեմին պէս. . . :

Ու ես տրտո՛ւմ, ու ճմլուած, անբարբա՛ռ,
 Կը դիտէի որ կ'երթային տրտմաբար.
 Զիւնի՛ն մէջէն, մութին մէջէն անսահմա՛ն,
 Գըրաստներու սեւ բանակի մը նման. . . :

Ո՞ւր, դէպի ո՞ւր. . . : Քաղցած կեանքեր համօրէ՛ն,
 Իսպառ լքուած աստուածներէ՛ն, մարդերէ՛ն,

Հո՛ւռ կ'երթային, խո՛ւլ բնազդի մը հլո՛ւ,
 նո՛ր Օրէնքի նո՛ր նժար մը կերտելու . . . :

Ու ինձ այնպէ՛ս թըւեցաւ թէ լռելեա՛յն
 Ճակատագրին թեւը կ'իշխէ՛ր իրենց վրան . . .
 Բայց կ'երթային անոնք, Ի Զէ՛ն, Ի ՊԱՅՔԱ՛Ր,
 Արդարութեա՛ն կը գիմէին խո՛նջ, տըկա՛ր,

Արդարութեա՛ն որ ա՛յս կերպով պիտի գար . . . :

Պ Ո Ւ Ն Ի Կ Ը

Գ. Զօհրայիկն

Կէս-գիշերէն վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անձրևի,
 Լապտերին թաց լոյսին տակ կանգներ էի տրտմովի .
 Զուրը կ'երգէր մայթին վրայ, հոս հոն վազքն էր կառ-
 քերուն
 Կ'սպասէի՛ր դունն այդ ա՛փ մը հողին շուրջ դեգերունն :

Բռնի ժըպիտ մը կուլար աչքերուդ խո՛րը ծաւի,
 ներկըւած լիրբ շրթներուդ վըրայ պրկում կար ցաւի,
 Ու անառակ չըփակիդ զոյգ սահանքին տակ սիրուն՝
 Յայտքը չըկար այդ գիշեր ցայգազըւարճ կիրքերունն :

Կ'սպասէիր դուն պատրաստ ու համակե՛րպ ու հըլո՛ւ,
Առանց սիրոյ, ընտրութեան, նըւիրուելու համար կո՛յր
Այն բարեհաճ Արուին որ հաց ունէր քեզ տալու...
Գութի, կիրքի պէս տարտամ խոց մ'զգացի սրտէս
ներս:

Ու թերե՛ւքս այդ գիշեր նըւիրէի քեզի, Քո՛յր,
Եթէ կաթիլ մը արցունք չը սառեցնէր իմ այտերս...
Կէս-գիշերէ վերջ մըն էր, խոնաւ գիշեր մ'անձրևի...

Ա Յ Ս Դ Ա Ն Ա Կ Ը

Մարդը կը ռթնեցաւ իր կընոջ ուսին.

Այսպէս երկուքն ալ լացին միասին:

Գետնափոր, տեսակ մը նկուղ էր լայն,

— Գետնափոր, աւաղ, խըլուրդներ միայն

Չէ՛ որ կ'ապրին թաց նըկուղներու տակ... —

Գետինը՝ յարդի տեսակ մ'այլանդակ

Անկողնի վըրայ, լո՛ւռ, հրեշտակա՛յին,

Երեք փոքրիկներ կը քնանային.

Յարդին վրայ, պզտիկ քոյրն ալ իրենց քով

Կը ննջէր մահուան ճերմակ պատանքով...

Ո՞վ ըսեր է որ կեանքը երազ մ'է

Ուր սէրն իր կապոյտ բոյնը կը կազմէ:

Ո՞վ ըսեր է որ Այն որ կուտայ բոյր
 Խոպան դաշտերու ծաղկին սխրաթոյր,
 Ա՛յն որ ձըմեռին մէջ սըգամըռունչ
 Ապաստան կուտայ գայլին անտերունչ,
 Այն որ հունտ կուտայ նօթի թռչունին,
 Ա՛յն ըստեղծեր է՝ անոնց որ չունին՝
 Երէններն առատ, հասկերը բեղուն,
 Արփաւէ՛տ գինին, մեղրաւէ՛տ մեղուն . . . :

Աւա՛ղ այն ամէն բաներն ապաքէն.
 Որ շընորհուեցան մեզի երկինքէն՝
 Մարդկային օրէնքն արգիլեց մարդուն . . . :
 Ու մարդն անօթի՛, ծարաւա՛ծ, արթո՛ւն,
 Երջանկութեան յո՛րդ գետին քով՝ հըլո՛ւ
 Կը մեռնի առանց ու՛մպ մը ըմպելո՛ւ . . . :
 Մի քանիներո՛ւ համար են միայն
 Ոսկեգեղ հասկի ծուփ ծովերը լայն,
 Լեռներու երէն, անտառի թռչունն՝
 Դե՛ռ իսկ չի ծընած . . . : Ո՞վ գիտէ ինչո՞ւն :

Դուրսը ցուրտ գիշերը կը կողկողի :
 Թաց նըկուղին տակ, լամբար մը հողի
 Կը լուսաւորէ առաստաղը ցած :
 Վըտանգին առջև՝ սեղմ ու քարացած,
 Ամօլը ծերուկ կ'արտասուէ դողդոջ,

Իրենց դեռ ծաղիկ զաւակին բողբոջ,
Այսպէս անսըճաղ, ցրտահար, սառած,
Մահը դիտելէ վերջ բազկատարած,
Առանց կարենալ բան մը ընելու .
Ի՞նչ լաւ է այսպէս լալ՝ բաղդին հըլո՞ւ . . . :

— Մահ . . . : Ի՞նչ տարբեր մահը հարուստ տըղուն :
Ան երազ մ'է լո՞ւռ ցնծումով բեղուն,
Ան կեանքէն միայն ճանչցաւ նրբագոյն
Բեհեզները վա՛ռ ժանեակը գո՞յն գոյն,
Մանեակներն ոսկի, ընծաներն առատ,
Թոյլ իրանին նո՛ւրբ շըղարշ անարատ . . . :
Չը գիտցաւ որ թանկ քարերը վըզին
Հազար խեղճերու մահով կը դիզուին . . . :
Ու մեռաւ շատ քաղցըր երգի մը պէս,
Հծծելով միայն՝ « Ինչ լաւ էր այսպէս . . . » :

Մինչդեռ այս փոքրիկ մեռելն աղքատին
Ճանչցաւ կեանքն իր խո՛ւլ ցաւին մէջ յետին . . .
Ո՛չ ծաղիկ, ո՛չ խինդ, ո՛չ ժըպիտ, ո՛չ երգ .
Կեանքը վի՛շտ կարծեց, աշխարհքը՝ մի վէ՛րք . . . :
— Ա՛յ յիմար փոքրիկ, կեանքը խօլական
Հանդէս է . քանի՛ երջանիկներ կա՛ն . . . :
Սակայն դուն մեռար, ու հիմա հանգչէ :
Պատանք մը ճերմակ՝ երկու ափ քուրչէ՛

Քու նիհար՝ մարմնիդ համար շա՛տ է լայն . . . :
— Ողջունեցէ՛ք, նոր-վաղուան սերմն էր այն . . . :

Գլխուն քով, կարմիր կանթեղը հողէ՛
Պատանքն իր աղքատ լոյսով կ'ողողէ :
Ճերմակ մահն է այդ, մա՛հը անսրւա՛ղ . . . :
Նոյն յարդին վրայ են միւսներն ալ խաղա՛ղ .
Ծանըր քունն իրենց աչքը կը գոցէ .
Կ'երազե՛ն . ու ա՛լ չ'արթննան գուցէ . . . :
Դուրսը ուժգնօրէն ոռնացող քամին
Դուռը կը զարնէ . զաւակներէն մին
Կ'աղերսէ քընա՛ծ շրթներով կիսբաց՝
« Հայրիկըս բերա՞ւ պատառիկ մը հա՛ց . . . »

Հա՞ց . . . : Ո՛վ ողորմուկ երեխայ սոված ,
Հաց չըկա՛յ . այսպէ՛ս է տընօրինուած . . . :
Դու դեռ շատ փոքր ես , դեռ չես հասկընար
Որ հարուստն ունի իրաւունք , հընա՛ր
Քեզ մեռցընելու ծանրածանր մահով ,
Օրէնքն է իրեն պաշտպան ապահով . . . :
Միայն փոքր ուղեղդ կ'զգայ շուարուն
Թէ ինք իրաւունք ունէր արեւուն
Տակ բողբոջելու , թերե՛ւս . ու կատա՛ւժ ,
Կը փղձկի վըճիտ հողիդ . « Մայրի՛կ , հա՛ց . . . » :

Հա՞ց . . . : Աշխատելէն հայրըդ դարձաւ ծեր ,

Հացի խնդիրն ինքն ալ չէ՛ հասկըցեր :
 Ինչո՞ւ ոմանք տէր են, ոմանք գերի . . . :
 Թէ բաղդը կո՞յր մ'է որ կը դեգերի
 Ինչո՞ւ օր մ'իրենց դուռին չի զարկաւ . . . :
 Թէ մարդը կաւ մ'է, այս ի՞նչ շունչ, ի՞նչ կաւ . . . :
 Թէ աշխարհ անծիր երկիր մ'է անհուն՝
 Ինչո՞ւ ոմանք քա՛ր մը չունին գլուխնոյն . . . :
 Թէ ամէն տարի հունձքը կ'ողողի՝
 Ինչո՞ւ իրենց հա՛ց մը չիկայ հողի . . . :

Գործարաններու դուռները փա՛կ են .
 Ամի՛ս մ'է արդէն : Հազարը մէկէն
 Բանուորներն ամբողջ նետեր են փողոց,
 Ամէնքն ալ հայրեր, մի քանի տըղայ :
 — Մատուցումը շա՛տ, խնդրանքներ չիկան,
 Կ'ըսեն, ապրանքով լեցուեր է շուկան .
 Գործի մե՛ծ օրէնքն է տնտեսավար . —
 Այդ լա՛ւ, բայց նօթի մեռնիլն է դժուար :
 Թէ բանուորն այնքա՛ն արտադրեր է շատ,
 Ինչո՞ւ հաց չունի բանուորն անաշխատ . . . :


Մարդկութի՛ւն, պատի՛ւ . . . թմբուկներ հնչո՛ւն .
 Աչքըդ գոց հաւտա, մի փնտռեր ինչո՞ւն :
 Մուրալն ամօթ է, գողնալը ոճիր,
 Իսկ թէ խելօք ես՝ ո՛չ ոք չի հաճիր
 Հաւատալ որ տղադ մեռաւ անօթի,

Կը խնդայ վըրադ առանց ամօթի... :
 — Մերը կռթներ է իր կընծջ ուսին .
 Աչքին արցունքներն անդո՛ւլ կը հոսին .
 Կը մթնա՛յ քիչ քիչ ներսի դին մաքո՛ւր ,
 Պարզ հոգին ինչե՛ր կը ծնի թաքթաքուր... :

Բայց ահա տըղան նորէն լացաւ «Հա՛ց...» :
 Հա՛ց... : Մայրը ոտքի նետուեցաւ կատղած ,
 Հին դանակ մ'էրկան տուաւ այլայլուա՛ծ ,
 «Հա՛ց ճարէ , ըսաւ . հետդ ըլլայ Աստուած...» :
 — Էրիկը գնաց , գոռուցքը հովուն
 Կարծես հարց կուտար իրեն խըռովուն՝
 «Միթէ ոճրագո՞րծ... միթէ բարերա՞ր...» :
 Դանակը ձեռքին զարնելո՛ւ կ'երթար ,
 Փրկելու համար անօթի տըղան... :
 — Բանուո՛ր , այդ ճամբան կ'երթայ կախաղան... :

— Ի՞նչ կ'ընէ երբ ազգ մը մընայ նօթի .
 Ձեռքէն բահ ու բրիչ կը նետէ մէկդի ,
 Կ'երթայ հաղօրդուիլ մատուռ մ'անխըռով ,
 Կը զինուի տէգով , կը զինուի սուրով ,
 Ու կ'երթայ ամէն միջոցներով վատ
 Ազգի մը կըռիւ մըղել յուսահատ... :
 Թէ յաղթըլեցաւ՝ աւա՛ղ է իրեն ,
 Իսկ եթէ յաղթեց՝ աշխարհ համօրէն

Գովեստի երգեր կ'երգէ ամէն օր,
Պատմութիւնն ոսկի է՛ջ կուտայ անոր...:



Քամին կը գոռայ, ձիւներ կը թռչին
Բանուորը կանգնած շէնքի մը առջին
Երգը կ'ունկընդրէ — ցուրտէն երերուն —
Գործարաններու բոլոր տէրերուն...:
Մատուցումը շա՛տ, իսկ խնդրանքը քիչ...:
Որո՞ւ փոյթ. կ'ուտեն կ'արձակեն քրքիջ...:
Երբ դուրսը ձիւն է, գինւոյ շոգիով
Ի՛նչ լաւ է ուտել՝ քանի մ'հոգիով...:
Գործ չիկա՛յ. ինչ փոյթ. դաս մ'է անխընայ
Որ բանուորը քի՛չ մը խելօք մընայ...:

Բանուորը կուլայ. կը գոռայ քամին:
Ահա՛ դուրս ելաւ այդ տէրերէն մին.
Աստուած, իր պե՛տն է...: Ձեռքը քարացած,
Աչքերը կարմիր, բանուորը գոռաց՝
— «Կըթութի՛ւն, պարոն, ընտանեաց հա՛յր եմ.
Զգոյշ մերժելու, ձեր հոգին կ'այրե՛մ...»:
Հարուստը նետեց ինչ որ կար իր վրան,
Ժամացոյց, շղթայ, դըրամ, թղթարան:
Երէկ՝ տէր, հիմայ՝ ըստրուկ դողդոջուն,
Կը փախէր ինչպէս բուէ մը՝ թռչո՛ւն...:

Բանուորը ապշած նայեցաւ հեռուն,
 Իր հարուստ տիրոջ վազքին շարուն.
 Նայեցաւ բարի ձեռքերուն ծերուկ,
 Նայեցաւ հացի դանակին մանրուկ,
 Նայեցաւ օսկոյն, նայեցաւ իրեն,
 Փղձկեցաւ հոգին, յուսահատօրէ՛ն
 Չայնը երկարեց ցայգին մէջ տըխուր՝
 «Ո՛վ հարո՛ւստ, հարո՛ւստ, եկո՛ւր ա՛ռ, եկուր»:
 Բայց տէրն աւելի արագ կ'երթար լուռ.
 Ու կը կրկնէր ծերը, «եկո՛ւր. եկո՛ւր...»:

— Ո՛վ բարի բանուոր, ծե՛ր բարի բանուոր,
 Թէ այնքան անպէտ ես մարդկութեան ո՞ր
 Ճարելու համար ապրուստ մը յետին
 Կ'ապաւինիս վատ դանակիդ ետին...
 Թէ սեպհական կեանքդ՝ ի՞ժի մը պէս՝
 Ուրիշի մահով պիտ' ապահովես...
 Թէ պիտի դաւես մութին մէջ լռելեայն՝
 Հոգ չէ՛ թէ զանկիդ համար ըլլայ այն...
 Դէ՛հ, գնա՛ մեռիր, — մեռեր ես արդէն,
 Մարդկութեան ի՛նչ խեր մարդասպան մարդէն:

Թէ չե՛ս ուզեր որ քու դանդաղ մահով
 Տէրդ իրեն գանձեր դիզէ ապահով...
 Թէ անպէ՛տ, թէ վա՛տ, թէ խեղճ, ցաւագին,

Դուն դեռ տէ՛րն ես քու սեպհական կեանքին...
 Թէ՛ զաւակներուդ չը կրցար ցոյց տալ
 Ապրիլ ատելո՛ւմ, կեանքին դէմ կուրծք տալ...
 Դանակդ աղիքիդ խոթէ ու դարձո՛ւր.
 Իրենց քաջաբար մեռնիլ սորվեցուր,
 Մեռնի՛լ անտեսուած, անճիչ, մըթին, մէ՛ս...:
 — Աչքերը գոցեց...: Ու ըրաւ այնպէս:

Տարինե՛ր անցան. հիմայ կը՛ դիտեմ
 Լուռ սենեակիս մէջ առկախուած իմ դէմ
 Այս համեստ դանակն արդէն ժանգոտած
 Որ ձըմեռ առտու մը արիւնով թաց,
 Ես գըտեր էի անհուն գուրգրանքով,
 Ձիւնին մէջ, մեռա՛ծ գործաւորին քով...:
 Քարացած այդտեղ, պոռթկաց իմ հոգիս,
 Ու գողգըղալով տարի շրթունքիս
 Խորհրդանի՛շն այդ՝ մութին մէջ լռելեայն
 Տառապո՛ղ, մեռնո՛ղ, այլ քաջ մարդկութեան...:

Ու քանի անգամ քու առջիդ լացի,
 Ո՛ւմ բարի՛, ժանգոտ դանակըդ հացի.
 Դո՛ւն, վերջին պաշտպան զրկըւած մարդուն.
 Դո՛ւն, յաւէտ լըռիկ այլ յաւէտ արթուն.
 Դո՛ւն, այնքան համեստ ու այնքան խելօք.
 Եւ որ կրնայիր շարժումով մը լոկ

Արեսս'ն վրայ հիմնել օրէնքդ ապագայ,
 Բայց կը սպասես որ խաղաղութեամբ գայ,
 Արդարութեամբ գայ, գա՛յ տարուէ տարի,
 Զրկուած մարդկութեան երազը բարի . . . :

«Ք Ր Ո Ւ Պ Ա Տ Ո Ւ Ր» Ն Ե Ր Ը (*)

Բանաստեղծ ընկերներուս

Թրուպատուրնե՛րն են . տեսէ՛ք, իրե՛նք են .
 Եռանդո՛ւն, անփո՛յթ, գո՛հ կը նուագեն
 Հրակէզ արեւուն տակ հրապարակին :
 Կիսխուփ փեղկերէ տարեց, տըղայ, կին
 Կ'երեւան քիչ քիչ : Կէս-օրի տապէն
 Շա՛տ քիչերն են որ տեսնել կ'շտապեն
 Թրուպատուրները :

Տարօրէ՛ն դէմքեր : Ամէ՛նքն, է՛գ, արո՛ւ ,
 Բախտէն կատաղի հալածուողներու
 Անտուն ընտանիք մը քայլամուր :

(*) Trouvadourները Հարաւային Ֆրանսայի յածերգակ աւուղ-
 ներ էին Միջին դարու մէջ, եւ խօսածնին ոկեան լեզուն էր (langue
 d'oc) : Կը դեգերէին դդեակէ դդեակ՝ երգելու համար իրենց ֆերբուած-
 ները — հնչեակի, հովուերգ, շէր —, եւ իրենց արուեստը կը կոչէին
 «զուարթ գիսուֆիւն» :
 Մ. ԹէՈՂԻԿԻ

Փողոցի ըստո՛յգ հանճարներ բոլոր,
 Նուագելու համար պէտք չունին նօթի,
 Կ'ապրին երգելով, կը մեռնին նօթի
 Թրուպատուրները:

Բախտը, տառապանքն, յարափո՛խ հովեր
 Իրենց դէմքին մո՛ւթ ժըպիտ մ'են տուեր,
 Կեանքը ճանչցողի ալեկո՛ծ ժըպիտ:
 Ու իրենց բռնի՛ ձեւին մէջ հտպիտ,
 Խռիւ մազերնուն ներքեւ ալեւոր,
 Աշխարհքն հեգնելու հո՛վ մ'ունին աղուոր,
 Թրուպատուրները:

Անոնք երգելո՛վ անցան համօրէն
 Բօյի գինեզուարճ այգեստաններէն
 Մինչեւ Նեղոսի աւազուտը շէկ,
 Մինչեւ Ուրալներն, մինչեւ հըրաշէկ
 Ափերը դերբուկ Հրոյ-Երկիրին:
 Քանի՛ ընկերներ ճամբան հող դրին
 Թրուպատուրները:

Մեքենայութեան այս դարը երկա՛թ
 Չընկճե՛ց դեռ իրենց հոգին խանդակաթ .
 Ու ոստաններու միջեւ դրամապաշտ՝
 Թշուառութեան հետ գլո՛ւխ գլխի հաշտ
 Կ'ապրին նախնական կենցաղով ազատ,

Ազատ Բընութեան որբերն հարազատ,
Թրուպատուերն երբ:



— Առէ՛ք ինձ ձե՛զ հետ, երկիրէ երկիր
Տարէք այս թշուա՛ռ սիրտըս սըգակիր,
Ապրի՛նք հեգնելով, ողբանք երգելով,
Ու երկրագունդին հետ մշտահովով
Մեր մորթն անօգուտ քըշե՛նք մշտերեր .
Մշտընջե՛նական մո՛ւթ ուխտաւորներ,
Թրուպատուերն երբ:

Զի մե՛նք ենք, մե՛նք ենք, բանաստե՛ղծ, պուէտ,
Մե՛նք, պատառատուն բեհեզով վէ՛տ վէ՛տ
Երգի իշխաններ՝ իսպա՛ռ հալածուած .
Մե՛նք, նօթի՛, հպա՛րտ, երբեմնի Աստուա՛ծ .
Մե՛նք, չըհասկցուա՛ծ, մե՛նք, եղերակա՛ն,
Մե՛նք, Բանաստեղծներ, մե՛նք ենք իրական
Թրուպատուերն երբ:

Մե՛նք՝ որ մեր վէրքէն երգե՛ր կը շինենք .
Մե՛նք, զրկըւածներ ճակատագրէն նենգ:
Ու մինչ ուրիշներ առատ կը ջամբեն
Խինդի՛ սեղանէն, մուսային ճամբէ՛ն
Մենք կ'երթանք ըստո՛յգ Մահուան անսըւա՛ղ .

Մե՛նք, հի՛ն Մարդկութեան ո՛ւշ ծընած — աւա՛ղ —
 Թրուպատուրները:

Բայց ի՛նչ փոյթ: Մե՛նք ենք հոգիով հարուստ.
 Մե՛րն է ներշնչումն որ կուգայ վերուստ.
 Մե՛րն է մարգը թա՛ց, վերջալոյսն անխօ՛ս,
 Փըթիթը վա՛րդի՛ն, առուն մշտահո՛ս.
 Մե՛րն է մըթին սի՛ւքը գերեզմանին.
 Հի՛ն աստուածներու ցեղին կը նմանին
 Թրուպատուրները:

Մե՛նք ենք որ անփո՛յթ գրչով կը հեգնենք
 Այս նենգ աշխարհին պըսակները նենգ:
 Քնար մը ձեռքերնիս, անտո՛ւն, մահագի՛ն,
 Չե՛նք ցանկար ստրո՛ւկ-պետի դղեակին:
 Ազատ բարբառի ասպետներ անա՛հ,
 Կ'ապրին մեռնելո՛վ, կը մեռնին անմա՛հ
 Թրուպատուրները:

Մարդկութեան հտպի՞տ պէտք է անպատճառ:
 Մեր սրտե՛րը մենք հաներ ենք վաճառ.
 Մեր վիշտէն, սուգէն, խաբուած սէրէն նենգ՝
 Ռամիկին համար երգե՛ր կը շինենք:
 Ո՞վ ըսաւ «Մահը մի է». ամէ՛ն օր
 Կը մեռնինք մե՛նք, հի՛ն տիեզերքին նո՛ր
 Թրուպատուրները:

Սակայն մեզ ի՞նչ փոյթ ծիծաղն ամէնուն,
 Լըքուամբ ստո՛ր, քաղցը անանո՛ւն .

Մենք՝ գառանց Հովուին պէս սիրագորով՝
 Հաւատքն ունինք մեր սըրինգին ծայրով
 Առաջնորդելու Մարդկութիւնն ամբո՛ղջ .

Մեռած Արուեստին մե՛նք տակաւին ո՛ղջ
 Թրուպատուրները :

Այս ի՞նչ դարերու հասեր ենք, Աստուած .

Փշրեցի՛ն ի՞նչ որ կար վըսեմ կերտուած .

Թէ դեռ սի՛րտ ունիք՝ թաղելո՛ւ տարէք .

Ոսկիին նենգ ձա՛յնն է ամենուրեք :

Մի միայն մե՛նք ենք որ դեռ անարգել

Սիրե՛լ կ'երազենք . ո՛վ կ'ուզէ սիրե՛լ

Թրուպատուրները :

Մեռա՛ր, հընաւանդ Արուեստ սրբանուէր,

Երբ դեռ կեանքն երգո՛վ կ'ապրէր, կ'օրօրուէ՛ր,

Ու երբ երջանի՛կ, թափառի՛կ, գինո՛վ,

Իրենց ծիրանի լա՛յն կրկնոցներով

Դղեակէ գղեա՛կ, փայտի երկնային

Տաւիղին թրթռո՛ւմը կը տանէին

Թրուպատուրները :

Ես կ'երազեմ հայր թրուպատուրն Հոմեր,

Որ աստուածներու ակէն կը խմէր,

Ու իր հսկանե՛րը բարձրաղաղա՛կ
 կ'երգէր տաւղին վրայ, քաղաքէ քաղաք:
 Ու թրուպատուրնե՛րը բիւր՝ որ կ'երթա՛ն
 Դարերու մէջէն. կ'երազեմ Գողթան
 Թրուպատուրները:

Կ'երազե՛մ զիրենք. ու լո՛ւռ, շըւարո՛ւն
 Կը նայիմ փեղկէս ա՛յս թշուառներուն
 Որ բռնի կերպով կ'երգեն, կը խաղան:
 Վա՛խ, արծաթն՝ Արուեստն հանեց կախաղան,
 Հի՛ն, աստուածաբընա՛կ դարերը մեռան,
 Ու հիմա պէտք է խնդացնե՛ն, մուրա՛ն
 Թրուպատուրները:

Հրատապ արեւուն տակ հրապարակին,
 Ահա՛ կ'երգեն դեռ. ու մինչ տըղա՛յ, կի՛ն.
 Կը հասնին քիչ քիչ նեղ ճամբաներէ,
 Գլխարկն անցորդին լո՛ւռ կը կարկառէ
 Իրենց նահապետ երգիչն ալեւոր:
 — Տըւէ՛ք, իրե՛նք են, նոր Մարդկութեան՝ նո՛ր
 Թրուպատուրները:

Ե Շ Ո Վ Ա Յ Ի Ն Ա Ր Ց Ո Ւ Ն Ք Ը

Երբ բոլորն ալ տըւին համարն այն օրուան
Աստուածատուր իրենց զատ զատ պաշտօնին,
Ու երբ Տէրանց Տէրը՝ հըզօր Եհովան,
Կը ժպտէր գոհ, հասա՛ւ Խորշակ — Թագուհին:

Շէկ մազերու ծով մ'ունէր ան բոցահեր,
Կուրծքին՝ վահան մը հըրաշէկ արօյրի,
Գեհե՛նը կար աչքերուն խորն անվեհեր
Ու իր շունչին տուրեւառին մէջ վայրի:

Եհովայի լըռեց ատեանն ունկնդիր.
Ու երբ նշան ըրաւ երկնից արքայն մեծ՝
Խորշակ — դշխոյն ճակատն հակեց ծնրադիր,
Ու միակե՛րպ, ու անայլայլ ան պատմեց:

— Ամէն տեղ կեա՛նք տեսայ, խայտանք ու ժպտա,
Սարին վերեւ, ծործորին մէջ, ակին քով,
Շուշան, սմբուլ, կը խնդայի՛ն միամիտ,
Ու լեւակները կ'երգէին խայտանքով:

Ու թիթեռնիկ, միջատ, ծաղիկ, ու թռչուն
 կը ծծէին երանութիւն մ'անհընա՛ր.
 (Փո՞յթն էր իրենց Տիեզերքին մէջ ինչո՞ւն...)
 Երանութի՛ւն, զոր մենք դեռ հոս չենք ճանչնար...-

Ու լսեցի որ վայրի վարդը կ'ըսէր՝
 «Ի՛նչ աղւո՞ր է...». վարդը կ'ըսէր հովերուն.
 «Ի՛նչ աղւոր է...» կը կրկնէր հովն հեշտասէր՝
 Փայփայելով լայն մրգաստանն օրօրո՞ւն:

Սուրացի դաշտ. մագլցեցա՛յ սարն ի վեր:
 Քայլերուս տակ հեծեց արձան յետնագոյն.
 Ծղրիթներուն երգը լռեց կարեվէր.
 Մոխի՛ր տեղաց ծաղիկներու վրայ գոյն գոյն:

Ու դաշտերու անբարունակ շիւղերէն
 Մինչեւ հըպարտ էտըլուայսները լերան,
 Իրենց ցօղին վրայ խարեցան տրտմօրէն,
 Դողդըղացի՛ն, ու համբոյրիս տակ մեռա՛ն:

Օդին մէջ հո՞տն էր խարուկւող ծիւերուն...
 Ու լըսեցի որ «խե՛ղճ վարդեր...» կը հծծէր
 Յետին թռչունն, որ կը փախէր շուարուն...
 Ես կիզեցի. Քու հրամա՛նըդ այս էր... .

Եհովան մո՛ւթ ժըպիտ մ'ըրաւ անզգա՛ծ . . .
 Ու երբոր դո՛ւրս եկան բուրն ալ հըլու ,
 Իր հոգին դե՛ռ անծանօթ պէտք մը ըզգաց ,
 Նւաստացուցի՛չ , ահուելի պէտքը լալու . . .

ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԸ

Առաջին գիշերն , Արարիչ Ոգին՝
 Մարդկութեան ծընող առաջին զոյգին
 Ըսաւ՝ «Կ'ուզէ՞ք որ ջահեր անհամար
 «Վառեմ , ձեր հանդէսն ընելու համար :»

Ու սիրահրաւէր աչերու նըման
 Երկնքին հո՛յլ հո՛յլ աստղերը ծընան :

«Կ'ուզէ՞ք որ երգեր , հեծեծներ տրտում ,
 «Ալիքներ ձայնի , հեւքեր անպատում ,
 «Կարկաչներ ընդհատ , սարէն , ծործորէն ,
 «Իրենց թաքուն սէ՛րը ձեր մէջ ծորեն :»

Ու միջոցին մէջ թրթռումի , ձայնի ,
 Մեղմին պատարագ մըն էր գարնայնի :

«Կ'ուզէ՞ք որ, հծծեց Ոգին, գիշերուան
 «Մէջ, օգին մթին ալքերը հեւան,
 «Ու աննիւթ, անգոյ շունչեր հիւսիսէն
 Ձեր լուռ սրտերուն սիրերգը հիւսեն:»

Մո՛ւթ, անծայրածի՛ր դաշտին վրայ բոլոր
 Ծնչեց գիշերին սիւքը մեղմօրօր:

Ու գիւթի՛չ, կախա՛րդ խաղ մ'էր ամէն դի.
 Վըտակը հէքեա՛թ մ'ունէր արծաթի,
 Ծըղրիթն օրօրո՛ւն շիւղի մը վրան
 Հի՛ն երգ մը կուլար, կ'այրէր փոսուռան:

Ու այս մոգութեան ծո՛ցը ցայգային
 Բի՛ւր ըղձանոյշներ կարծես պար գային:

Խունկի, աղօթքի, բոյրի այս պահուն
 Գարնան առաջին ցայգն իր Սէ՛րն անհուն
 Նոր օրէնքի մը նըման ահագին
 Լուռ կը մըռընչէր ահաբեկ զոյգին:

Ինքզինքնին մինա՛կ ըզգացին, տխո՛ւր.
 Գազաններ զոյգ-զոյգ քաշուեր էին լուռ:

Ու մարդն առաջի՛ն, տըղու պէս դողդո՛ջ,
 Մօտեցա՛ւ սիրով առաջի՛ն կընոջ...:

Այն ատեն Աստուած զինք մինակ ըզգաց .
 Իր անհուններուն մէջ լացաւ յանկարծ . . . :

— Աստուն իրենց վրայ ինկած ցօղն խոնաւ
 Այդ արցունքն էր չա՛ր . Մեղքն անկէ ծընաւ . . . :

Ս Ա Ք Ի Ա - Մ Ո Ւ Ն Ի

Ա

— «Սաքիա՛, Սաքիա՛» . . . — կը կանչէր ձայնը հեռու
 կը թաւալէր՝ արեւն իր գունտը ոսկեայ . [ուէն :
 Ու անապատն իր մրափին մէջ, յուլօրէն,
 Կ'արձագանգէր կերկերող կոչը՝ — «Սաքիա՛ . . .»

Իմաստունին աշակերտը, մոլորո՛ւն,
 Արշալոյսին՝ մթնշաղէն շատ առաջ,
 Ըսկսեր էր իր անվերջ վազքն, ու հեռուն՝
 Վաղո՛ւց, տխուր, կը նուաղէր իր հառաչ :

Քաղաքներէն ան կը դառնար տխրագին,
 Նըւիրական հովիտներէն Գանգէսի,
 Ռաճիբուրէն, Պէնարէսէն՝ ուր կրակին
 Կը մատուցուէր խունկ եւ կնդրուկ հանգէսի :

Մազերը խռիւ, ոտքերը մերկ, անձնուէ՛ր .
 Ի զուր գիւղէ գիւղ իր ստուերը տարաւ .
 Ի զուր մարդոց ան խօսեցաւ անվեհեր,
 Իմաստունին պատուէրները սրտագրաւ :

Ան՝ — «Նիրվանա կը քարոզէր, Նիրվանա՛,
 «Ինքնամոռաց անէութիւնը հոգւոյն,
 «Տենչանքներու ոչնչացումն անխընայ
 «Երազամու վերապրումը գերագոյն» :

«Ա՛հ, Նիրվանա՛, ո՛չ մէկ փափաք, ո՛չ մէկ սէր,
 «Ո՛չ իսկ յետին գոհացումը մեր սրտին,
 «Ո՛չ տառապանք, ո՛չ ալ ժըպիտ, ո՛չ յոյսեր,
 «Ա՛հ, Նիրվանա՛, ինքնակամ մա՛հը ցրտին» :

Բ

Մարդերը զայն քաղաքներէն վանեցին :
 Ոտքերը մերկ, մազերը խռիւ, անձնուէ՛ր,
 Անապատին ճամբան բռնեց առանձին,
 Ու յուսահատ իմաստունը կը փնտռէր :

Արեգակին հրատապ գունտին տակ հսկայ,
 Տաք աւազը թմրա՛ծ, անշա՛րժ կը հնչէր,
 Ու տանջըւող, գալարուող ձայնը — «Սաքիա՛»
 Մենութեան մէջ լացի մը պէս կը հնչէր :

Սարսա՛փ: Իր մեծ բազուկները լա՛յն, արձա՛կ,
 Հըրատապ, շէկ աւազին վրայ տարած էր:
 Սըբութի՛ւնը, գիտութի՛ւնը բացարձակ:
 Սաքիա-Մունի, Պուտտա ինքը մեռած էր:

— «Սաքիա՛, Սաքիա՛ . . .» հեկեկաց ձայնը լալէն:
 Կը թաւալէր արեւն իր գունտը ոսկեայ,
 Ու անապատն իր մրափին մէջ յուլօրէն
 Արձագանգեց յուսահատ ճիչը — «Սա՛քիա»:

— «Սա՛քիա, Սա՛քիա» հեկեկաց ձայնը լալէն . . . :

Հ Ա Յ Ր Ը

Աստանդական մ'ալեհեր՝ ցուրտ գիշերով բուք-բորան,
 Մըթին փողոց մը, քարի նստարանի մը վըրան,
 Իրեն խարխուլ կողին վրայ ընկողմանած էր արթուն,
 Երբ ապաստան փնտռեց հոն նիհար տըղայ մը անտուն:

Խաւարին մէջ նայուածքներն իրա՛ր զարկին, շաշե-
 ցան . . .

Ծերը հեռու քաշկռտեց հիւանդ մարմինն իր անձա՛յն .

Ճանչցե՛ր էր. բայց չի կրցաւ ըսել՝ «Որդեա՛կ մոլորո՞ւն,
 Ձաւա՛կս ես, զոր լըքեցի անօթութեանս օրերուն...»

Թշուառութեան հիւրընկալ նստարանին վրայ քարի,
 կեանքի խաւար գիշերով, Մարդն ու Աստուածը բարի-
 Պատահաբա՛ր, կող կողի, երբոր զիրար տեսնային,

Եհովան իր լուսեղէն պըսակին մէջ երկնային՝
 Չէ՞ր ամէնար ըսելու թշուա՛ռ, անտէ՛ր, խեղճ Մար-
 դուն,
 «Ե՛ս եմ քու հայր Արարիչդ, ամենակալ, մշտաբ-
 թուն...»

Բ Ա Ս Թ Է Լ

Դաշտանըկար մըն է հողիս բասթէլի,
 Ուր ոչինչ կայ աչքի խօսող, ոչի՛նչ վառ,
 Ուր ամէն ինչ մըշուշի մէջ կը հալի:

Կապոյտ սարի մը կատարին ամայի՝
 Բաղեղապատ խարխուլ գմբէթն հաւատքիս
 Տարակոյսի անդունդն ի վար կը նայի:

Բըլուրն ի վեր, բըլուրն ի վար, իմ կեանքիս
 Խոպան ճամբան է որ կ'երթայ մենաւոր... :
 Բասթէլի մութ դաշտանը կար մ'է հոգիս :

Խոպան ճամբուն եզերքն ի վար, իմ մուր
 Բագիններուս ու մեղքերուս, վէրքերուս
 Կըրանիթէ մահարձաններն են բուր :

Պուրակ, առու իր դաշտերուն մէջ չըկան .
 Իր ձորերուն մէջ ո՛չ լեւակ, ո՛չ նարկիս,
 Որ քաղէի իմ սիրտիս քո՛յր աղջըկան :

Մոռցըւած ա՛փ մը ջուրի վրայ հեռաւոր,
 Աչքէ հեռու, սէզերու մէջ կը սահի
 Անուրջներուս վայրի կարապը աղուոր... :

Ու այս բուրձը կը դողայ, կը հալի
 Մըշուշի մը տարտամութեանը մէջ ուր
 Լացող գէմքի մ'ստուերը կայ պաշտելի... :

Հոգիս նիհա՛ր նըկար մըն է բասթէլի :

Վ Ե Ր Ջ

